



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13600

891.49
U-50

Ond. 14
N^o. 160




2003

331-39

15-500 wyr

ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ



Ա. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

(Արտատպւած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

10089348
36624

ԹԻՖԼԻՍ

1890



ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ

Ա.

Աշուն էր. օրը կիւրակի: Զինջ կապուտակի վերայ թագաւորում էր աշնան մեղմահայեաց արեգակը. նա իւր բարի, քաղցր աչքերը գցել էր Անգեղակոթ զիւղին, որի վերայ մեղմիկ խաղում էր հովը:

Կիւրակի օր—ահա' զիւղացոց ամենասուրախ օրը. նոքա բոլորեքեանք՝ ծեր ու տղամարդ, երիտասարդ ու երեխաց, հարսն ու աղջիկ դուրսն էին գտնւում, և զիւղը ներկայացնում էր մի կենդանի պատկեր: Գիւղացիք խումբ խումբ այսոեղ-այնոեղ, սորա-նորա պատի տակ, որը՝ նստած գտակը մի կողմը դրած տրխատանն էր քակում, նորից պինդ կապում, որը տրեխը հանում, նոր հագնում և հեռիները ամուր կապում, որը կանգնած ձեռափայտին յենած ամբողջ մարմինը՝ խօսում, ասում էին բարձրաձայն միմեանց ժամանակ չը տալով. ինչպէս ասում են՝ հայի շէն էին շինել: Փոխւած էին զիւղացիք. բոլորեքեանք էլ, կարծես, մի բան էին գտած, իւրաքանչիւրը իւր մտքում «կորկոտ զցած էր երեւում»:

Дозволено ценз. Тифлисъ, 13-го Марта 1890 г.
Типогр. М. Д. Ротинианца, на Гол. пр. соб. д. № 41.

2129-60

Դէպի միւս կողմը նայենք. պատն ի վեր կանդնած էին գիւղացի երիտասարդները. մէկը աննոպատակ տաշ էր անում՝ դանակը ձեռին, միւսը ձեռը գոտին էր անցրած, աջ ոտը դէպի առաջ դրած, մի ուրիշը ընկերի ուսին էր կոթնած, չորրորդը գտակն էր թափ տալիս, մի խօսքով ամեն մէկը մի դիրք ունէր բոնած. դոքա լում էին իրանց ընկերոջ, որը, ինչպէս երևում էր, շատ հետաքրքիր բան էր պատմում. ամենքն էլ ուրախ էին և, կարծես, ամեն մէկը դոցանից իւր ապագան վճռել էր և մնում էր շուտափոյթ դործադրելը:

Աչքներս վեր բարձրացնենք. տանիքները կանաչկարմրին էին տալիս. հարսն ու աղջիկ էին դոքա, որոնք խօսում էին հա խօսում. դոցա նիւթը անսպառելի աղբիւրից էր հոսում. դէմքերի արտայայտութիւնը հաստատ ոչինչ չէր ցոյց տալիս. յեղեղուկ թոռարև սրտերը մէկ ուրախանում, մէկ տրտմում էին:

Վաղվզո՞ց, աղաղա'կ... դոքա երեխաներն էին. ի՞նչպէս նոքա վազվզում են շարան-շարան, շուն ծեծելով, իրար վայր գլորելով. մի ուրիշ տեղ իբրև թէ օձ էին պար ածում՝ մի երկար չւան քաշ տալով և մանրիկներին վախեցնում:

Գիւղը կենդանի էր. տէր-Մարկոսն էր պակաս. ահա նա էլ տնից դուրս եկաւ, աչքերը տրորեց, ձեռքը տարաւ միրուքի տակը դէս-դէն արաւ, գաւաղանը պատն ի վեր դրաւ, փէշերը յետ քաշեց, կրացաւ, ձեռքը տարաւ իւր խոր գրպանից՝ ինչպէս

անտակ հորից՝ քթախոտի տուփը հանեց, մի առանձին բաւականութեամբ կարճլիկ ու հասու մատերով կողքերին և երեսին խփեց, բացարեց և մի լաւ քաշ վերցրեց, ախորժակով քաշեց՝ կէսը միրուքի վերաց թափելով, կէսը քթի ծայրին թողնելով. Փարածի տուտերը իրար քաշեց, առաւ գաւազանը և դէպի եկեղեցու բակը զնաց:

Տէր հօրը տեսան զիւղի ծերերը և քթախոտի հոտի վերաց ցածից դէպի նա շտապեցին. նոքա «օրհնեա՛ տէր» ասելով մի մի քաշ քթախոտ վերցրին և նատեցին ալեոր ալեոր զրոց էին անում:

Ահա այսպէս անգեղակոթցիք բոլորեքեանք էլ դուրսն էին գտնուում, երբ փողոցներով անցան Բագուցից նոր եկած անգեղակոթցի մշակներից մի քանիսը, որոնց մէջն էր և Բէղլարի տղայ Ստեփանը, որ երեսունին մօտ ամուսնացած տղամարդ էր: Ստեփանը երկու օր էր, որ հացից-ջրից կորւած, տնից-տեղից հեռացած, մշակների յետելիցն էր քաշ քաշ լինում, որ ինչ է Բագուաց մասին նրանց պատմածները լսի: Նա այնպէս էր յափշտակել, վերացել, վառւել Բագու քաղաքով, որ ման գալիս շատ անգամ ինքն իրան Բագու. էր կարծում, իսկ երբեմն էլ Բագուից եկած զիւղը նոր-նոր հագուստներով և արծաթի զօտիով. բայց հէնց որ այդ խարուսիկ պատոկերը հեռանում էր նրանից և իրան տեսնում էր կոշտ բրդի չուխան հագին, տրեխը ոսներին՝ նա սաստիկ ամաչում էր, ուզում էր փախչել, հեռանալ

նրանցից, նրանց մէջ չ'երևալ, բայց հետաքրքրութիւնը թոյլ չէր տալիս, ականջները սրած էր պահում, որ նրանց պատմածներից մի ամենափոքր կէտն անգամ տափի չը զցի:

Մշակներից ամեն մէկը ուղում էր այդ օրը, քանի որ գիւղացիները գուրսն էին գտնուում, մի լաւ ման գալ, իրանց ցոյց տալ, հայրենակիցների աչքերը լացնել: Մշակները լացւած, գլուխները սանրած էին, հագած ունէին բաճկոնակներ արխալուղի վրայով, մէջքները արծաթի գոտիներ ածած, գլխներին քաղաքացու գտակ էր, ոսներին ճիթիստոր պսպղուն կօշիկներ: Ոտից ցգլուխնոր էին հագնւել. նոր էր դոցա երիտասարդական հագուստը, առաջի անգամն էին ծալլը բացել: Դրանց վերայ անծանօթ նայողը զարմանալով կ'ասէր. «Մի՛թէ անգեղակոթցի ծերերը սովորութիւն ունին երիտասարդի պէս զարդարել, պճնւել»: Նոցա նիշար և խորշոմներով ծածկւած երեսկահատն ու կորացած մէջքը այդ միայն իրաւունք էին տալիս ասելու:

Վեց հոդի էին ման եկողները. երկուսը երկարահասակ էին և սապատաւոր ուղաերի էին նմանում, իսկ չորսը կարճահասակ, վոխտ մարմիններով, որոնք նմանում էին երկար ու ձիգ տարիներ գետնափոր բանտերում բանտարկւածներին, ուր զրկւած են եղել արեի կինսատու ճառագալթներից:

Մշակների աչքներովն ընկան կտուրների վերայ կանաչ-կարմրին տւող հարսն ու աղջիկները և ուռած

ուռած քայլերը դէպի այդ տեղ ուղղեցին: Բարախում էին դոցա սրտերը, չը գիտէին իրանց ի՞նչ տեսակ ձև տան, որ նոցա զարմացնեն ու ապշեցնեն. մէկ իրանց հագուստին էին նայում, մէկ ճիթկաւոր կոշիկներին՝ արդե՞օք փոշի չի նատել և փայլը կորցրել, մէկ ընչացքներն էին ոլորում, սղալում, մէկ բաժկոնակների փեշերը յետ տանելով ձեռքերը արծաթի գոտիներն էին անցնում, կարծես ուղում լինէին ասել. «Արծաթէ գոտի ունինք ածած, լա՛ նայեցէք»: Նոքա նայում էին հարսն ու աղջկերանց, իրար հետ խօսում, ծիծաղում և ամեն մէկը իրան մի բէդ էր կարծում:

Ստեփանը այդ ժամանակ աչքերը գետնին գցած, քիթ ու մռութը կախ տւած՝ ուղում էր մի կերպ ծլկւի, տափովն անցնի, որ կանացք իրան չը տեսնեն և երբ այդ դրութեան մէջ յանկարծակի իւր կնոջը տեսաւ կանանց խմբի մէջ՝ աւելի և աւելի սրտնեղւեց ասելով. «Նշանածս հիմա երանի է տալիս սրանց, իսկ ես ինչով եմ պակաս սրանցից. մի՛թէ ես էլ չեմ կարող ացդպէս հագնւել գալ, որ իմ նշանածը պտածակից չը նացի: Միամիտ կա՛ց, Թագուի՛, մի քիչ էլ համբերի՛ր, այսօր բրդի չուխով եմ ման գալիս, վաղը գու տես ինչո՞վ ման կը գամ և քեզ ի՞նչպէս կը զարդարեմ. Բագո՛ւն սաղ լինի....: Հարսները զանդրուկները գցեցին և զանդրուկների տակից էին նայում. աղջկերքը կողքի կանգնեցին, աչքերի անկիւնով էին նայում, իսկ միշահասակ կանաչը ուղ-

զակի կանգնած երես առ երես։ Հարսների արտացյալութիւնը պարզորշ ասում էր. «Ի՞նչ կը լինէր իմ ամուսինն էլ հագու լինէր և այսպէս զարդարւած դար»։ Հասած աղջկերանց ամօթխածութեան թանձր քօղով ծածկւած արտայացութիւնը երևան հանեց իրանց սրտի եօթը կապով կապած գաղտնիքը. «Տեսնես զոքա եկել են պասկւելո՞ւ»։ իսկ միջահասակ կանանց սրտերը նախանձով լցւեց. մէկը մտքումը ասում էր. «Ի՞նչո՞ւ ես էլ մեծ տղայ չ'ունենամ, չ'ուղարկեմ Բագու և այսպիսի օրը պտածակից չը նայեմ ուրիշների տղաներին»։ իսկ ունեցողները ասում էին. «Իմ տղաս էլ կ'ուղարկեմ»։ և շտապում էր, որ ձեռքովը գար՝ հէնց այդ բովէին իսկոյն և եթ կ'ուղարկէր, որ վաղը անպատճառ մօտը լինի փող աշխատած և լաւ հագուստում։

Մշակները յետ յետ նայելով անցան։ Կանաչը խումբ խումբ հաւաքւեցան և քիթ քիթ տւած խօսում էին.

—Աղջի՛, տեսնո՞ւմ ես, խօսքը բաց արաւ Շողերը, երեկուայ գիւղացի տղաներն են է՛, գնացին Բագու, եկան մարդ գարձած. զու նրանց մի ծաղիկ-ծաղիկ շորերին նայի՛ր, ասես նոր են ասղի տակից գուրս եկած. արծաթի գօտիներին մաիկառ'ւր, մի գրւանքաց արծաթից կարծես լինի շինւած. պաղուն կօշիկնե՛րը, պաղուն կօշիկնե՛րը, մարդու

խելք է գնում։ Մեր կոշտ բառն էլ են փոխել, քաղաքավարի են խօսում։ Երանի՛ ձեր մօր աչքերին, էլ ի՞նչ ցաւ ու հոգս պիտի ունենան... Այ, ա'յ այն ձիգ ձիգ տղան տեսնո՞ւմ էք՝ Մակունց Գեալուն տղայ Դանին է, որ ձեռքով մի բան չէր գալիս...
—Այ՛, աղջի՛, նա՛ է, խօսքը կարեցին մի քանիսը, ի՞նչպէս փոխել, ի՞նչպէս զարդարւել է։

—Հա՛, այն էի ասում, շարունակեց Շողերը, որ զորա ձեռքով մի բան չէր գալիս. հայրը ամենայն օր էլ անէծք-պղէծք չէր մնում թափում էր գլխին. դէ ե'կ հիմա հարցրո՛ւ, —գնաց Բագու, շնորհքին, մաքուր, քաղաքավարի մարդ է դարձել։

—Աղջի՛, խօսքդ էլ կտրում եմ, վրայ բերաւ Մարիամ աքերը, բա գիւղումը մնալով կարծում ես մեր տղացքը մարդ պիտի դառնան. մեզնման յիմար չեն, որ սուս անեն, տղաները պահեն տաւարած, վար անող շինեն. ա'յ նրանց հայրերն են խելօք է՛, ուղարկեցին Բագու տղաները, այժմ եկել են՝ ջիբները տրաքում, մնդուկները խլթիլթում. էլ ի՞նչ ասես չեն բերել. Երէկ գնացել էի քրոջս տունը, նրանց հարեանն է այն մէջ տեղի կապոյա շորերով տղան...
2

—Խաչունց Մկրտումին տղայ Սաքանը, հարցրին այս և այն կողմից։

—Հա՛, հիմա Մէրսի են ասում. Բագու են փոխել անունը. ով որ Սաքան է կանչում, ասում են, նեղանում է։ Հա՛, այն էի ասում, ինչե՛ր էին պատ-

մում, ի՞նչ, ի՞նչ շորեր է բերել մօրը ու քւերտանց համար, ի՞նչ ընծաներ բարեկամների համար. ասում են՝ նշան պիտի դնի, նշանի պատրաստութիւնն էլ է բերել. փո՞ղ՝ հօ էլ խօսք չը կայ:

—Դէ՛ էլ նորա մօր առաջ կը կարողանանք խօսել, խօսքի տուտը բաց արաւ նարդիզը, էլ մեզ մարդի տեղ կը դնի. մինչեւ տղի գալը մեծ մեծ խօսելով էր ման գալիս քիթը ցցած, այժմ ասողերի տեղովը պիտի թռչկոտի: Մեր մարդին ի՞նչ ասեմ, ի՞նչ դառնայ, դարձաւ մի կողմը, ասացի՝ ա՛յ մարդ, թռող մեր երեխացին էլ դրցա հետ ուղարկենք. չէ՛ որ չէ, չէ, ասաց ու սուեց կանգնեց. հիմա եկած կը լինէր, մեր աչքն էլ կը տեսնէր կ'ուրախանար:

—Ել ասում ես ի՞նչ դառնայ, վրայ բերաւ Շողերը, բաղդաւորութեան մէջ են ընկել, աղքատութեան քարը դլորեցին դէնը: Փողը՝ փող, մարդագարութիւնը՝ մարդավարութիւն. էլ ի՞նչ ես ուղում: Հա՛, մոռացայ ասել, Սաքանը խանութ պիտի բանայ այստեղ, ապրանք էլ է բերել:

—Դէ ա՛յ տափ, պատուի՛ մտնեմ ներս էլի, նախանձով կուրացած ասաց Հերիքնազը, բա չորս տղայ ունենամ, այսպիսի օրը ձեռքերս ծոցումն մնամ պաւկած նայելի՞ս, ախր սկի իմ Դանու եղունզը կարժեն նրա՞նք, որ նա մնայ տանը, տաւար պահի, զար անի ձեռքը կոշտացած, նրանք զնան մարդ դառնան, մեր տղերանց հետ էլ չ'ուզենան թէ խօսեն:

—Ել մի՛ ասի, Աստուած մեր խելքը առել է,

ախր մի խելքը ամառ ձմեռ ի՞նչ անի. է՛ աշխարհս տրաքւած էլ Ուղունից, Նաղաթից, Փռնակոթից չես ասում հէնց է որ գնում են հա գնում դարտակ ջիբով, դառնում լիքը ջիբով. գնում են գիւղացի, դառնում են քաղաքացի. մենք միայն հէնց գիւղացի՛, գիւղացի՛ պիտի մնանք հա մնանք:

Աղջկերքը ոչինչ չէին խօսում, միայն նորահարսերի կողքը կարած ամենայն ուշադրութեամբ լտում էին նրանց ասածն ու խօսածը: Նրանք էլ ոգևորւած էին Բագու քաղաքով, նրանց մոքովն էլ շատ բաներ էր անցնում. մէկը մտածում էր. «Եղբայրս գնացած լինէր, բերած կը լինէր ինձ համար լաւ լաւ բօղչամիջի շորեր»: Միւու. «Երանի՛ ես էլ եղբայր ունենացի»:

Կանանց մեծամասնութիւնը, որոնք տղաներ ունէին, ուրախ էին. մտածում էին. «Կ'ուղարկենք, մենք էլ երջանիկ կը լինինք ինչպէս նրանք». իսկ նրանք որոնք այդ բաղդաւորութիւնից զրկած էին, ոչինչ չէին կարողանում խօսել, մի բան կորցրածի պէս գէսդէն էին տատանւում:

Մշակները հեռացան կանանց աչքերից. նոքամիւս փողոցում տեսնելով խմբւած երիտասարդներին՝ դէպի այդ կողմը ծռւեցան, նոցա էլ զարմացնելու:

—Նրանց՝ մուժիկներին նայ՛ք, ասաց Սաքսնը, ասես տաւար լինին, տանես Բաղու կը խրանեն՝ ծովը կը թափւեն հա՛. մի օր չեն կարող մնալ:

— Տօ՛, ակի փողոցներով կա՛րող են գնալ, Վայտոնների տակ կը մնան, պատասխանեց Դանին:

Այսպէս խօսելով, ընշացքները ոլորելով և արհամարհական հայեացքով մօտեցան խմբւած երետասարդներին:

— Գալիս են Բագուից եկածները, գնանք մօտները մի խօսացնենք, ասացին մի քանիսը խմբւած երիտասարդներից և ուղղւեցան դէպի մշակները:

— Բարե ձեզ, այդ ե՞րբ էք եկել, հարցրեց Մինասը, որ ամենից համարձակն էր:

— Երէկ ենք եկել, շատ սառը պատասխանեց Սաքանը:

Գիւղացի տղաները դոցա չորս կօղմը պատեցին և ապշած, բերանքաց նայում էին հագուստներին, մանաւանդ կօշիկներին ու արծաթի գոտիներին: Նոքա էլ աւելի հպարտացած, փքւած, հնդկահաւի նման բարձրից էին նայում և ուզում էին ասել. «Զեզ աէս գիւղացիներ չենք, մենք քաղաքից ենք գալիս, լաւ նայեցէ՛ք՝ թէ ո՛վքեր են ձեր առաջը կանգնած»:

Բոլորերեանք էլ ուզում էին նրանց խօսացնել, բայց չը գիտէին՝ ի՞նչպէս սկսէին և ի՞նչ հարցնէին. Ճշմարիտ է, շատ ժամանակ չէ ինչ իրանցից բաժանւել Բագու մշակութեան էին զնացել և պէտք է որ ինչպէս առաջ էին եղել իրար մօտ, այնպէս էլ լինէին՝ ինչպէս մի գիւղի աղաներ. բայց դոցա վարմունքը և մանաւանդ արտաքին փոփոխութիւնը ամօթխած երիտասարդներին կապել, կաշկանդել էր:

Մշակները անձնասիրական զգացման տակ այդտեղից չէին ուզում հեռանալ, նոցա աւելի էին ուզում զարմացնել մտածելով. «Մենք շատ ենք վզներս ծուած, համետները մեջքներիս հարուստ պարոններին պլշած նայել, այժմ էլ դուք մեզ նայեցէ՛ք և երանի տւէք. մենք ձեզնից հարուստ, քաղաքավարի և խելօք մարդիկ ենք և ոչ մշակներ, ինչպէս Բագու էինք»:

— Սաքի՛, հարցրեց կրկին Մինասը, Բագու այստեղից շատ է հեռու:

— Ի՞նչ ես ասում, չը լսելու դնելով:

Հարցնողը մի և նոցնը կրկնեց կարմրելով:

— Հա, հեռու է, շատ հեռու է:

— Քանի՞ օրումն էք գնում այստեղից:

— Տասը, տամն և հինգ օրում:

— Բագու քանի՞ տուն է:

— Ո՛վ է իմանում, սկի կարելի բան է, որ համարւի, մի ծայրից միւսը չի երևում, ի՞նչպէս կարող ես համարել:

— Մեր գիւղի երեք չափ կը լինի՞:

— Ի՞նչ ես ասում, հազար չափ էլ չի լինի, ասում եմ ծայրը չի երևում, գիտես, որ երկու օր մի լաւ ձիով ման դաս՝ էլի չես կարող ամեն տեղը տեսնել:

Ցղաները ապշած նայում էին Սաքանին ու մտածում. «Ի՞նչ մեծ տեղ է եղել Բագուն և սոքա տեսել են, երանի ձեզ»:

— Հապա այդպէս մեծ տեղ կը լինի, միջի մար-

դիկ բոլորն էլ հայե՞ր են, հարցրեց մի ուրիշը սիրտ առած:

— ԶԵ՞, ամեն ազգից էլ կայ. էլ ոռւս ու նեմենց չես ասում, Փրանկ ու ինզիդ չես ասում՝ ամենը այնաեղ են:

— Ա՛, Սաքա՞ն, դարձաւ Ստեփանը, նեղանում ես խօսալուց, դրանց մօտ էլ պատմի՞ր այն բաները, որ ինձ մօտ պատմեցիր, Է՛՛, որ լսէք կը մնաք ձեռքուներդ տափից կտրած: — Միւսներն էլ նոյնը խպնդրեցին: Դանին տեսաւ որ Սաքանը համով չի նկարագրում իրանց տեսած հրաշալիքներով լիքը Բագուն, ինքը սկսեց.

— Բագու, մի խօսքով ասում էք՝ պրծաւ գնաց. Բագուն՝ գիտէք՝ մեծ, շատ մեծ տեղ է, ծովի մօտն է. ծով, Է՛՛, որ նայում ես ոչ ջունդ ունի ոչ պոռճախ, երկնջի հետ խառնւած է. վրան ինչե՞ր կայ, ինչե՞ր. — մեծ մեծ տներ շինած, ջրի երեսը դցած. ի՞նչ են անում այդ մեծ մեծ տները. — ջրի երեսին լողում, ուր ուզում, գնում են. մէկ էլ տեսար շուխն փչեց, ճանապարհ ընկաւ. ի՞նչպէս է գնում, Տէ՛ր Աստուած, Է՛՛, փը՛ռո հա փը՛ռո, վզզալի, ջուրը ճղելով, հրացանի գնդակը լ'ինչ կարող է նորա յետևից համել, թռչում է ջրի երեսին, աչքդ էլ յետևիցն գնում, մէկ էլ տեսար կորաւ, էլ չի երեսում. աչքդ էլ չի ջոկում, մի ճանձի պէս է երեսում: Բա չէք ասում թէ ի՞նչպէս է գնում, որ ոչ ձի կայ լծած և ոչ էլ պարանով քաշում են:

— Ի՞նչպէս է գնում, հետաքրքրւած հարցրին այս ու այն կողմից:

— Ի՞նչպէս է գնում, կրկնեց նոցա հարցը ծիծաղելով, գնում է, շատ արագ է գնում, Փրանկներն ու ինզիդներն են հնարել, ջրի երեսը զգել. մէկ էլ աեւնում ես՝ մէկը դուրս եկաւ այդ տան բարձր տեղը կանգնեց և այդուղից հրամաններ տռաւ. դորա ձեռքումն է գտնուում նորա թլիսմը, որ կողմը բանալին շրջում է, այնպէս էլ պրախօդը հնազանդ գնում է:

— Բա տակ չի անո՞ւմ, ջրի վերայ ի՞նչպէս է մնում, հարցրեց Մինասը:

Ծիծաղեց Դանին, ընկերներին նայելով ուզում էր ասել. «Այդ տեսակ լիմար հարցեր միայն երեխաները կը տանի:

— ԶԵ՞, տակ չի անում, թէկ շատ և շատ մեծ է, մեր եկեղեցին չը կայ, նորա տասը, տասն և հինգ չափ կը լինի. վրան գերաններ կան, որ նայում ես ցածից վեր՝ զլսարկդ ընկնում է, բոլորը ինչ որ կայ նորա ծալցումն է, նա չի թողնում որ այդ աժդահայ պրախօդը ջրի տակը գնայ: Այս ծովը. պրախօդները մէկը չէ, տասը չէ, հազար, երկու հազար, ինչ եմ ասում՝ սկի կարելի՛ է համարել, ծովի երեսը լիքն է լինում:

— Բագուայ տներից ասեմ. Է՛՛, որ կանգնում ես մի փողոցում, նայում՝ խելքդ գնում է. մեր տների նման ձախ ու ծուռ չեն, մի յարկանի չեն, շարքին,

Երկու, երեք յարկանի, ապակիներով ծածկած առաջները, որ մտնում ես մէջը, ափսոսում ես ոսդ դնես, կոխ տաս, վռվռում է հալելու նման:

— Հապա խանութիները չես ասո՞ւմ, խօսքը լալեց
Ստեփանը, մեծ մեծ խանութիներ՝ դոները ողջ ա-
պակուց...

—Հա՛ր, խօսքը կտրելով շարունակեց Դանին,
մեծ մեծ են խանութները, դռները ողջ ապակուց,
մշջները ով է իմանում ինչե՞ր են ծախում, աշ-
խարհքիս ամեն ծայրիցն էլ բան են բերում այն-
տեղ. այն նաւերը չը կա՞ն, որ ասացի, նրանցով են
բերում...

—Մէկը չի ծախում մի խանութում, կրկին
խօսքը խլեց Ստեփանը, որը թէև Բագրւ չէր եղել
օրումը, բայց այնքան մօտը պատմել էին; որ անդիր
էր արել ամբողջ կտորներ, տասը, տասն և հինգ,
քսան հողի են ոտի վերայ կանգնած՝ առնողները
այնքան շատ են, մէկը արշինով չափում է, միւսը
կտրում է, մի ուրիշը ծալում է, չորրորդը թղթի
մէջ է ամրացնում, տալիս գնողին, հինգերորդը փողն
է առնում...

— Հա՛, հինգերորդը փողն է առնում, շարունակեց Դանին: Խ'նչ փող, սէլի պէս է դալիս, թիով են զիգում, սկի կարողա՞նում են օրւայ աշխատածը համարել. տօ՛, հարստութիւն, հարստութիւն այնտե՛ղ է. դո՞ւք էլ էք ապրում, մե՞նք էլ կեանքը ուրախ, քաղաքը լաւ, լուսաւոր, փողը շատ, է՛, էլ

ի՞նչ ասեմ, մարդ պիտի իւր աչքով տեսնէ, որ իմանայ, թէ չէ պատմելով ի՞նչ կը լինի, մէկը ասում ես, միւսը մոռանում:

— Տե՛ղ, տե՛ղ այն է և ոչ թէ մեր գիւղը, առանձին խօսում էին երեք հոգի, մենք էլ ենք ապրում, նրանք էլ. երկի այնտեղ չի կարելի մեր հագուստով մնալ, նորա համար են սրանք փոխել:

— Բա ի՞նչպէս կարելի է, պատասխանեց միւսը,
մի օր չեն թողնի որ մնանք, դուրս կ'անեն:

Մշակները թէ մի օր իրանց կեանքում երջանիկ
օր պիտի տեսնէին՝ այդ օրն էր. նոքա էլ չէին ցի-
շում իրանց այնքան տարւայ չարքաշ կեանքը. նրանց
մշջքին համես ըլ կար, բեռնաւորւած ծանր հա-
կով, ոտերում՝ արեխ, մատերը դուրս դառած, կրունկ-
ները վեր ընկած. մարմինները ցնցոտիներ չէին ծած-
կում, հազար տեղից կպկպորած. փորները բաղդա

չին զրդում, մշքներին կպած, այլ լաւ հագւած,
կուշտ կերած, քանի տարի է մածունի, հաւի մսի,
կաթով ճաշի համ չին տեսել, բերանների ջուրը
դնալով կերել էին, թէև իրանց տներում ասել էին.
«Այս ի՞նչ կերակուր է, կերակո՞ւր, կերակո՞ւր Բագու
են պատրաստում»: Այսպէս օրւայ Հերոններ դարձած,
ամենքն էլ նրանց մասին էին խօսում, նրանց էին
մատով ցոյց տալիս և իրանց համար իրարից ծա-
ծուկ փեսացու ընտրում: Ցնծում էր նոցա սիրտը,
ուրախ էր նոցա դէմքը, չին ուզում որ միժնի, նոցա
սրտի փափագն էր՝ ման զալ, ուրիշներին իրանց ցոյց
տալ, զարթողներու



Մշակները հեռացան. փողոցի միւս ծայրում պատահեցան խաղացող երեխաներին. փոքրները յետ փախան՝ կարծելով հայեր չեն, իսկ մի քիչ մեծերը կտուրների վերայ բարձրացան և ակսեցին «զդրաստի, զդրաստի» անել, ինչպէս սովոր են քաղաքացուն զդրաստի, անել, ինչպէս սովոր են: Մշակները հեռացան ուշք չը դարձնելով, իսկ երեխաները մի և նոյնն էին կրկնում և աւելացնում՝ «գուրակ սաբակ, գուրակ սաբակ, չիտրի պիտրի, չիտրի պիտրի», իրանք էլ չը հասկանալով թէ ինչ են ասում:

Մշակները իբր թէ չ'իմանալով՝ ծուեցան դէպի մարդկանց իտումբը:

— Բարո՛վ էք եկել, գալուստներդ բարի, ձայն տւաւ Խաչի ապէրը, որ գիւղում մեծ յարդ ու պատիւ ունէր. եկէ՛ք նստէք, տեսնենք ի՞նչ կայ, ինչ չը կայ: — Նրանք մօտեցան և բոլորին էլ բարեեցին:

— Ի՞նչպէս էք, հարցրեց Խաչի ապէրը, լա՞ւ աշխատեցիք այս քանի տարում:

— Ինչու չէ, փա՛ռք Աստուծոյ, պատասխանեց Սաքանը, Բագու գնացողը չ'աշխատի՛, հէնց դարտակ տեղիցն էլ որ ման գաս փողը հող է:

Այս պատասխանի վերայ գիւղացիները, կարծես, քնած տեղերից ցնցւած զարթեցան, աչքները չորս արած, ձեռները դէպի փողի կուտակները մեկնեցին՝ հաւաքելու այդ կենսատու արծաթը: Ամեն մէկը մտա-

ծում էր. Կը գնամ անպատճառ, կուղարկեմ անպատճառ տղիս, եղբօրս. բայց ի՞նչպէս ափսոսում էին և իսկոցն տիրում, որ առաջ չեն ուղարկել, առաջ չեն գնացել:

— Ի՞նչպէս է, լա՞ւ տեղ է Բագուն:

— Նա՛տ, շատ լաւ:

— Նաւթը, ասում են, ջրի պէս է այնտեղ. Ճշմարի՞տ է:

— Ի՞նչ նաւթ, է, այնքան հորեր կան քանդած, որ տափի երեսին սաղ տեղ չը կայ. Նաւթը ցածից խփում է վեր՝ շատ վեր և այնտեղից թափւում է լձակները, ծով դառնում. փութը ինչո՞վ են ծախում. — մի կոպէկ, շատ շատ որ թանկանայ՝ կէս կոպէկ, ջրից էլ էժան:

— Փութը մի քառորդ կոպէկ, ամենքն էլ կըրկնում էին և զարմանալով միմեանց նայում:

— Տեսէք ո՛րքան շատ է, որ այդպէս էժան է, ասաց Ստեփանը նայելով իւր համագիւղացիներին:

— Նա՛տ, ի՞նչ շատ, եթէ բոլոր հորերը բաց թողնելու լինեն, աշխարհքիս ամենամեծ գետիցն էլ մեծ կը լինի:

— Հարուստ մարդիկ շա՞տ կան, հարցրեց Խաչի ապէրը:

— Հէնց բոլորեքեանքն էլ հարուստ չե՞ն, պատասխանեց Դանին, աղքատի տեղ չէ. լաւ հաշւով ապրողի փողին փող չի համնի, փող շատ ես աշխատում, բայց ինչ կ'անես, շատ էլ մսխում ես.

այստեղի նման չէ, որ մի օր ցամաք հացով մարդկառավարւի, մի օր մածնով, մի օր հաւկիթով. չէ՛, չի լինում, անպատճառ պիտի կերակուր ուտես և ի՞նչ տեսակ կերակուր, մարդու մատներն էլ հետն են գնում ուտելիս:

Գիւղացիները դարձեալ միմեանց զարմացական հայեացքով էին նայում և նոցա ասածները հալած իւղի տեղ ընդունելով՝ իրար հետ վիճում էին հեռու կանդնածները. մէկն ասում է. — «Ինչո՞ւ կ'ուտեմ, ինչպէս այսուղ եմ ապրում, այնտեղ էլ այսպէս կ'ապրեմ»:

— Զէ՛, Սանթի՛, պատասխանում է հարեանը, չես տեսնում Դանին ի՞նչ է ասում, — ասում է չի լինում:

— Տօ՛ նա երիտասարդ է, այլպէս կը լինի, նրանք իրանց բերանից չեն կարող կտրել, ինչպէս մենք կարող ենք անել:

Սոքա իրանց խօսակցութիւնը կտրեցին, երբ Խաչի ապէրը կրկին հարց տւաւ. այս անգամ իրանց մասին էր թէ ինչո՞վ են պարապել նագու: Նոքա չը յայտնեցին որ մշակ են եղել. այդ բանը շատ կը ստորացնէր իրանց գիրքը համագիւղացիների աչքում, ուստի Սաքանը, որ սուտ ասելում շատ վարժ էր՝ ասաց.

— Գործարաններումն ենք եղել, մշակների վերակացու: — Այդ լսելով մնացած մշակները՝ թէ առան թէ թռչեն, կարծես իրանք էլ կասկածեցին, որ մշակ չեն եղել:

— Ամսական ո՞րքան էիք ստանում:

— Ո՞վ է իմանում. այնպիսի ամիս էր լինում 35 մանէթ, այնպիսի՝ 30, 25, մի խօսքով 25-ից պակաս չէ եղել. գործը լաւ կատարելուցն է. մէկ էլ տեսնում ես գործարանատէրը եկաւ, տեսաւ ամեն բան կարգին, սարքին՝ հանեց ծոցից մի կամիր, իշխան տասանոց տւաւ, շնորհակալութիւն արաւ, դուրս գնաց. փող է, ստանում ես, գնում գրպանդ, էլ ո՞վ ժամանակ ունի նստի համարի, տեսնի ամիսը որքան է ստանում:

Սորան էին սպասում գիւղացիները. «35 մանէթ գեռ աւելորդ պարզե էլ, որ շատ անգամ կարող է 40-ին էլ հասած լինի», ասում էին միմեանց, ձեռքերը իրար քսում և բացականչում: «Այ, այ, այ, տես մենք իմացե՞լ ենք, մենք մեր գիւղում քնածի պէս ենք, աշխարհս տանողի վերայ է, աշխատող՝ աշխատողի, իսկ մենք մածից ձեռք չենք քաշում, մեր տաւարի գոմից չենք զգւում»:

Խորամանկները ոչինչ չին ասում, նոքա ծրագիրներ էին կազմում սուս ու փուս և զարմանում մշակների պարզամտութեան վերայ, որ այդպէս ճշշդութեամբ ասում էին իրանց ստացած փողի քանակութիւնը, մոքներովն անգամ չ'անցնելով, որ նոքա անձնասիրական զգացման տակ մոռացել էին այդ պարզ հաշիւր:

Այնուհետև գիւղացիները շատ երկար հարց ու փորձ արին Բագուայ մասին. մշակները աշխատում

էին, որքան կարելի է, չափազանցօրէն նկարագրել իրանց տեսած քաղաքը և գերբնական երեցնել նոցա աշքերին:

Արել մայր մտաւ. հնչեցին եկեղեցու զանգերը. դիւղացիները խաչ հանեցին երեսներին, ոօրհնեա'լ է Աստուած յամենայն ժամ ասելով ոմանք գնացին իրանց աները, իսկ ոմանք եկեղեցի:

Բ.

Մութը գետինն էր առել, իսկ ու շառը բաժանել, ոտը խաղաղւել, կորւել. ամեն մարդ շտապում էր տուն իւր սրտինը, իւր բարի ցանկութիւնը իւր օջաղի մօտ, կոճերի տակ ասել, խօսել ուրախ ուրախ: Որքա'ն քաղցր, սիրելի էր այդ բոպէին չափահաս որդին ծնողի համար, ամուսինը՝ կողակցի, եղբայրը՝ քրոջ, որովհետեւ առաջներին օտարութիւն՝ հեռու երկիր կար գնալու:

Արդէն ամեն մէկը հաստատ որոշել էր Բագու գնալու խնդիրը: Ստեփանը, որ մենք տեսանք նորեկ մշակների հետ, բոլորովին անձնատուր էր եղած այդ հարցին. նա վառւել, ոգեսրւել էր և հաստատ վճռել էր այլ ևս չը մնալ գիւղումը. գիւղի օդը, գիւղի նիստ ու կացը նրան անտանելի էր թւում. նա շտապում էր որքան կարելի է շուտով տրեխների փոշին թափ տալ և պանդիստի ցուպը ձեռքը առնելով՝ հեռանալ գիւղից:

Ստեփանը մշակների հետ զրոյց անելով ճա-

նապարհ էր գցել նրանց, այժմ յետ էր դառնում տուն. նա թռչոտում, ցատկոտում էր զիւղի ծուռ ու մուռ ճանապարհներով՝ անդադար քարերով ընկնելով. նա մոռացել էր ամեն ինչ. նորա մտածողութիւնը միայն կենդրոնացել էր Բագուայ վերայ. ոչ մի չէր տեսնում, ոչ մի բան չէր կարողանում մտաբան չէր տեսնում, ոօր մի բան չէր շուտով տուն ընկնել, աշքալոյս տալ, որ այնուհետեւ աղքատութեան քարը գլորած է համարում իրանց ընտանիքի համար. որչա'փ քաղցր էր տեսնել իւր ընտանիքը ազատ այդ աղքատութեան ծանր քարի ճնշումից, բոլորովին ազա'տ... Կարո՞ղ էր չը թռչկոտալ Ստեփանը, կտուրների վրացով չը ցատկել. մի՞թէ նա միայն դրանով էր բաւական.—ոչ, այդ շատ քիչ բան համարեց, երբ մշակների բոլոր ասածները մտաբերեց. «Աղքատութեան քարը գլորելը կայ ու կայ, մտածեց նա, դու ուրիշ բան ասա՛... չէ մին սրանից յետո՛յ էլ պիտի վիզներս փոկ անենք, փողի առաջ դողդողանք. էլ պրծաւ, հէ՞նց ապրեմ, հէ՞նց տունս պահեմ, որ սաղ աշխարհքը զարմանայ. Սաքուն, Դանուն նման կ'ապրե՞մ, նրանք չեն իմանում. Ե'ս, Ե'ս կը տեսնեն ինչե՛ր կ'անեմ մի երկու տարուց յետոյ...»

Ստեփանը հասաւ տուն. կնիկը, որդիքը շատ ուրախացան իրանց տէր-տիրականին սովորականից գուրս ուրախերես անեսնելով. որդիքը—երկու աղջիկները՝ ջառին ու Մանուշակը, որոնցից առաջինը վեց տարեկան էր, իսկ երկրորդը՝ չորս, հեռուից հեռու

չերն ման տալիս իրանց հօր շուրջը, մօտեցան, մինչև
անգամ ուղեցին նորա գոգում նստել. իսկ փոքրիկ
տղան, որ նոր-նոր սկսել էր չորեքթաթ տալ, աչ-
քերը դյած հօր մեծ մեծ, ուրախութեամբ լիքը
աչքերին, մի կերպ փորսող տալով մօտեցաւ՝ ոտերին,
ձեռներին անելով, փափլիկ թաթիկը դրաւ կոշտ
ծնկան, սպասելով որ ուրախ հայրը վերցնի, ձեռ-
քերի վերաց առնի: Թագուհին—Ստեփանի կողակիցը,
աչքի անկիւնով նայելով մարդու լայն, սպիտակ, պարզ
ճակատին, չափից դուրս ուրախ ու զւարթ դէմքին
և սրած ընչացքին՝ ժպտաց, մի քնքշական զգաց-
մունքով համակեցաւ, իւր աչքերն էլ փայլատա-
կեցին, իւր յօնքերն էլ յետ գնացին. որքա՞ն ուրախ
կը լինէր միշտ այդպէս տեմնէր, միշտ այդպէս զգար...

— Խէր լինի, տեսնես ի՞նչ կայ, որ ուրախ է, մտա-
ծում էր ուրախ ուրախ թագուհին. հիմա լաւ ժա-
մանակն է՝ ասեմ, որ մի քանի պակասորդ ունիմ
առնի. վա՛յ թէ էլի բարկացաւ... չէ՛, ասեմ, նա
ուրախ է, չի բարկանայ. այսօր էն ի՞նչ էր իմ դրու-
թիւնը մեր հարեանների մօտ, — քօշերիս կապը
կտրած, գլխիս լաչակը ծրորած, արխալուզ ափոխւմ
ափոխմ դառած. չէ՛, պիտի ասեմ ինչ էլ որ լինի:

— Այ աղայ, դարձաւ ամուսնուն, բա ե՞րբ ես
առնելու քօշերս, լաչակս... և հաղիւ հազ կարողա-
ցաւ այդ բոլորը ասել:

— Դու մեծ բաներ ուզի, դրանք ինչե՛ր են,
դու գեռ մի քիչ համբերի, յետոյ կը տեսնես ինչ

կը լինի, տես քեզ խաս ու զումաշում չեմ պահում, —
էլ սազրի քօշերս որն է, զառ չարղաթս, աբրիւշում,
զարբաբ արխալուզս, բոլորը բոլորը աւել աւել կը
լինի, սկի մի բանի նեղութիւն չես քաշիլ:

Թագուհին սկզբում կարծեց մարդը իրան ձեռն
է առել, ծաղր է անում, բայց յետոյ աեսնելով որ
անկեղծ խօսքեր են, որ գուրս են գալիս յորդաւատ
կերպով Յտեփանի բերանից, ոտը աւելի առաջ դրաւ:

— Ել ե՞րբ, ասաց առելի համարձակ, քանի՛ մէկ
սպասեմ, թողնեմ, որ բանը բանից անցնի, միս
երևաց, յետոյ առնես. երևի քաղաքը ցորեն ես տա-
նելու ծախելու, կ'առնես չէ՛:

— Աղջի՛, ի՞նչ քաղաք, ի՞նչ ցորեն, գիտ է,
զլսին ձի է քացի տւել, ես ինչ եմ ասում, սա ինչ.
բա ականջներդ. բամբակով լքցրել ես, այսքան հարաց
ենք տալիս հարայ՝ գեռ դու նոր ես Վարդան վա՛յ
անում. հա՛, հա՛, հա՛, լաւ կնիկ ես, լաւ իմ աշխա-
տածը կը պահես այդ անխելք զլսո՛վդ... Բագու եմ
զնալու, Բագո՛ւ, դու հիմիկւանից պատրաստութիւնը
տես, ճած, ճոթոածը կարի՛ր, կարկատի՛ր, որ մի
բանի էլ ասես պակասութիւն չը քաշեմ. դու տես
այստեղից ինչե՛ր եմ բերելու է՛. դու տունը լաւ
պահի՛ր, երկու տարի չի անցնիլ և մենք կ'ապրենք
այնպէս ինչպէս մի քաղաքացի, էլ չես ասի՛ ա՛յս
բեր, ա՛յն բեր, այն ժամանակը առանց բերանիդնե-
ղութիւն տալու իւր սոսովը կը գայ առաջդ կը կանգնի.
լա՞ւ է, բաւակա՞ն ես ինձնից, սրանից էլ աւել ի՞նչ

ես ուզում. բայց պէտք է մի քիչ հուփ տւած ապ-
րել, շատ կը տեսնես, շատ էլ շաղ կը տաս:

—Բագու. ա'յ մարդ, էդ ի՞նչ ես ասում, բա ասա
մենք էլ մարդամէջի կ'երևանք էլի. խալիի կնանիքը
այսօր քիթները աստղերի տեղերովն էին մանաժում,
չէին էլ ուզում մեզ հետ խօսել, ինչ է մինի տղան,
միւսի մարդը Բագու է. լա՛ւ, հիմա էլ թող չը խօսեն,
ա'յ ես նրանց գլուխը թաղեմ, ցա՛ւս քաղեն նրանք
էլ, նրանց մարդիկն էլ, հէնց են իմանում թէ մենակ
իրանք են աշխարհում, մին կենամ, մին հագնւեմ,
որ բերանները մնայ բաց. իսէ դու ո՞ւմնից ես պա-
կաս,—Դանուց, Սաքուց, որ սաղ Բագուն հաւաքել
են, վեր առել եկել:

—Աղջի՛, մարդի անուն տո՛ւր, ինչ ես խօսում.
Թող քո այդ քիթները ցից կնանիք սպասեն մի
երկու տարի էլ, այն ժամանակն թող քիթները տա-
նեն աստղերին կպցնեն. ը՛հ, էլի խելքները պակաս
կնանիք են է՛, հէնց են իմանում թէ մենակիրանց
տղաներն են աշխարհումն, բա մենք ոչինչ, լա՛ւ:

Թագուհին էլ ամուսնու նման վառւեցաւ. սիրու-
նատեսիլ կերպարանքը մի բռպէում փոխւեցաւ—զւար-
թացաւ. սեւսեւ, խոշոր աչքերը ծիծաղկոտ կոպերի
մէջ փայլեցան, ձեռք ու ոտքը ուրախութիւնից դող
ընկաւ, շտապում էր ալեն ինչ, ինչ որ ամուսնու
բերանից դուրս էր գալիս, մի ակնթարթում կա-
տարել, վերջացնել. բայց ուրախութիւնից մի տեղ
հանգիստ չէր նատում, կամ մնդուկն էր բանում,

շորերը հանում կամ մի ուրիշ տեղից կապոց էր բե-
րում, շորերը միմեանցով տալիս: Այսպէս անվերջ
մինչեւ լոյսը կը խառնէր, միմեանցով կը տար եղած
չեղածը, եթէ Ստեփանը չը նկատէր նրան, որ հանդար-
տութեամբ մի տեղ նստի, իւր բանին կենայ:

Երջանիկ էր Ստեփանը. առաջի անգամն էր, որ
նա այնպէս ջերմ սիրով տղային կրծքին սեղմէց,
համբուրեց, առաջի անգամն էր, որ այնպէս քաղցր
քաղցր, առանց բարկանալու, հայցոյելու իւր կո-
ղակցի հետ մի երեկոյ անցկացրեց: Նորա ոգեսորու-
թիւնը գեռ չէր նստել, ներսը, կարծես, քանի գնում
այնքան աւելի էր եռում, եփում. նստած տեղը քրտնել
էր, կարծես, վաղելուց էր տուն ընկել. գոտակը դրած
գետնին, ձեռքը կողքին՝ երևակայում էր իրան նագու:
Բագուն նորա աչքին պատկերացաւ մի այնպիսի քա-
ղաք, որ ոչ ճունդ ունի ոչ պուճախ. այժմ ինքը
ընկած է այդ քաղաքը, փողը ակի պէս է, հաւա-
քում է հա հաւաքում, չի կշտանում, չի ուզում
շուտով տուն դառնալ, ուզում է աւելի փող աշխա-
տել, բոլորովին ապահովել և ապա թէ առօք-
փառոք յետ զառնալ: Յետ զարձաւ. զբանները ար-
բաքում է, ապրում է ինչպէս մի բէդ. նա թիք տւաւ՝
իրան բէզի զիրք տալով:

Թագուհին բանի տակ նստած՝ ասեղը ձեռքին
կարկատան էր անում, մի և նոյն ժամանակ վառւած
երևակայութեամբ Բագուայ մասին մտածում. — ա-
մուսինը յետ է զարձել հագուստը փոխած, բերել է

շատ փող և հագուստներ, աղջիկները քաղաքացու հագուստում են, իսկ ինքը արծաթի գօտի ունի ածած: Անցաւ մի երկու ամիս, ձիաները կանգնեցին բակումը, պատրաստում են զիւղը թողնելու. քաղաքում են և ի՞նչպիսի տներում են ապրում, ի՞նչպէս են հագնած, ո՞րքան երջանիկ և ուրախ են.... Թագուհին այնքան էր յափշտակել, որ փոխանակ ծրորած տեղերը կարկատելու, սաղ տեղերին էր գցում կարկատանը և կրկին քանդում:

Երեխանները քնած են. ձայն-ձուն չը կայ: Ստեփանի ականջը ձայնի էր, նրան շատ վատ էր թւում, որ աքաղաղները շուտով չէին յայտնում իրանց ձայնով բարի լոյսը. նորա համար ժամանակը կանգնած էր, առաջ չէր գնում, կարծես, մութը անվերջ պիտի տեւէր, իսկ քունը, հէնց գիտենաս, նորա աչքերը չը զիտէին. երեւակայութիւնը հեռուները չէր գնում, բարձր թուչքները փողի կոյտերն էին, որ ուրախ ուրախ աչքերը մեծ բացած հաւաքում հա հաւաքում էր: Ստեփանը չէր դադարում այդ մի և նոյնը զանազան ձեւերով երեւակայել:

Թագուհին դադրեց կարկատաններից, կարի վերայ ննջեց՝ քաղցր երազներ տեսնելով ապագայի համար: Ստեփանն էլ ոսկու կոյտերի վերայ ննջեց և այդ ոսկու կոյտերը քնած տեղն էլ հանգիստ չը տւին:

Փ.

Սուրբի լուսին քաղցր հնչում էին եկեղեցու զանգերը և ժամասէրներին հրաւիրում Աստուծոյ տունը: Ոտի վերայ էին զիւղացիները. ծերերը կուչ ու ձիգ անելով եկեղեցի էին գնում, հարս ու աղջիկ անլւայ կուժերը ուսերին իրանց աղբիւրն էին շտապում: Աղբիւրը կենդանացաւ լուսաբացի հետ, ապիտակ ու կարմիր լաչակներ էր, որ փոփում էին նորա վերայ. նոքա ախտրժակով չոմի-չոմի երեսներով տւին պաղ ու վճիտ ջուրը, գւարթացան և թշերի վերայ թարմ վարդեր բացւեցան. լցրին իրանց սիրելի կուժերը աղբիւրի ակից և ուսերին զրած կաքաւի պէս շորորալով ու ցատկուալով տուն եկան, կժերը վայր դրին, աւելլ ձեռներն առան, տուն ու դուռը սկսեցին աւլել, սրբուել:

Ստեփանի կինը վաղ դարթել, անժեղած կրակը իրար էր դրել, ջուրը բերել, սրբուել. իսկ Ստեփանը գիշերւայ մեծ մասը անքուն անցնելով, անդադար Բագուայ մասին մտածելով, այն մի մասն էլ քաղցր քաղցր երազներ տեսնելով դարձեալ Բագուայ մասին՝ վեր էր կացել առաւօտ-առաւօտ Մկրտումենց տուն գնացել Սաքանին Բագուայ մասին հարց ու փորձ անելու:

Ժամը վերջացաւ. ժամաւորները դուրս եկան, ողորմի Աստուծածա ասելով քժախսոտ համեցէք արին իրար և ոտերը կախ տւին: Տէր-Մարկոսն էլ դուրս

հկաւ և խօսակցութիւնը աւելի կենդանացաւ։ Ծերերի մէջն էր և Սկրտում ապէրը՝ Սաքանի հայրը։ Նա կուչ եկած, աչքերը կուլ գնացած, երեսը խորշոմներով ու կնճիռներով ծածկւած, ձերմակ կոշամիրուքը խճճւած՝ երեսին կպած, ծնօան ու ընչացքը քթախոտից դեղնած մի ծերունի էր։ Նորա սովորականից դուրս արտազայտութիւնը ու ուրախ աչքերը անխօս ասում էին. «Տղաս եկել է, էլ առաջնայ Մկրտումը չեմ, որ պտածակից նայեմ։ քթախոտ էլ կաշւի մէջ չեմ պահում, տղաս Բագուից տուփի է բերելու։ Մկրտում ապէրը ցանկանում էր անպատճառ տուփը հանել, թէեւ կարիք չէր զգում քթախոտի. ուստի փոքրիկ, ջրջրոյ աչքերի անկիւնով դէս դէն նայեց, դողալով տուփը հանեց, մի քանի անգամ վախվելով կողքերին խփեց և որովհետեղու չը գիտէր տուփի բանացնելը՝ երեսը փոխանակ դէպի վեր պահելու ցած պահեց, բացւեցաւ և քթախոտից բաւականին թափւեցաւ. նա առաւ մի քաշ՝ մտքումը ինքն իրանից նեղանալով թէ ինչու այդ պահին հանեց, որ չար աչք կպչի և այդ օրին հասնի իւր սիրելի տուփը։

— Նորհաւո՞ր լինի, շնորհաւո՞ր, Մկրտում, ի՞նչ լաւ տուփ է, տղադ է բերել հա՞, այս ու այն կողմից ձայն տալով մի-մի քաշ վերցրին և խեղճի քթախոտը վերջացրին։

— Մկրտում եղբա՞յր, ե՞րբ ենք աչքալուսանք գալու, ասաց տէր հայրը։

— Զերն է տունը, ի՞նչ էք հարցնում, համեցէք գնանք, — ասաց և առաջ ընկաւ տըմբտըմբալով։ Հինգ, վեց ծերունի և տէրտէրը հետեւցին Մկրտում ապօրը։

— Բարո՛վ, հազար բարի, գալուստդ բարի, Սաքա՞ն, ասաց տէրտէրը տուն մտնելուն պէս։

Սաքանը թախոտից իջաւ, տէր հօր աջն առաւ։ Բոլորեքեանք տեղաւորւեցան թախոտի վերայ։ Օղիի սրւակը թերախորով ձւաների հետ Բագուից բերած մատուցարանում մէջ տեղ եկաւ։ Սաքանը օղին ածեց և տէր հօրը համեցէք արաւ։

— Ասուուած կեանքդ երկար անի, բաժակը ձեռին օրհնեց տէր-Մարկոսը, բարով ամեն անգամ օտարութիւնից այլպէս անվտանգ տուն գաս. Ասուուած էլ աւել խելք, շնորհք, իմաստութիւն տայ։ Մկրտում, բարով տղիդ պատրաստւիր, քեզ պիտի պարեցնեմ, ասաց ու խմեց ընչացքը ծծելով։

Բաժակը պտուտ եկաւ չորս բոլորը, ամեն մէկը իւր բաժին օրհնանքը տալով Սաքանին։

— Սաքա՞ն, Բագուից սկի չես պատմում. ախր գնացիր օտարութիւն չորս, հինգ տարի մնացիր, աշխարհք տեսար, մեզ նման ամեն բանից դուրի չես, մի պատմիր գոնէ լսելով իմանանք, թերախորովը խմելով հարցրեց տէր-Մարկոսը։

— Տէրտէ՛ր, այնքան բան եմ տեսել, որ եօթը
օր, եօթը գիշեր նստեմ պատմեմ չի վերջանայ:

— Ելի դէսից դէնից պատմի՛ր, բոլորը չեմ ա-
սում խօ:

— Տե՛ղ, տե՛ղ նա է ոչ թէ մեր գիւղը, մենք
մեր գիւղում կարծում ենք թէ էլ ուրիշ տեղ չը
կայ, ասաց Մկրտում ապէրը:

— Տէրտէ՛ր, սկսեց Սաքանը, որ աշխարհքս պիտ-
տես՝ այնպէս մեծ, փողը շատ քաղաք չես գտնի.
Է՛, որ շատ անգամ կանգնում ես ծովի մօտ, մնում
ես հէնց զարմացած. ապրանքը ապրանքի ետևից
չի կտրւում, գալիս է հա գալիս. որքան ներս է
մտնում, այնքան էլ դուրս են հանում. ծո՛վ է ծո՛վ,
ինչ քաղաք:

— Ի՞նչ տեսակ ապրանք են բերում, հարցրեց
տէր հայրը:

— Ինչ տեսակ որ ասես, աշխարհիս ամեն ծայ-
րից էլ այնտեղ ապրանք են բերում և այնտեղից էլ
նաւթ առնում, տանում իրանց երկիրը: Ո՛րքան
նաւթ են տանում և ո՛րքան են աշխատում՝ սկի
կարելի է հաշւով ասել: Մի տեղ որ ծխից երկինքը
միշտ թխպած լինի, տես ո՛րքան դործարաններ կը
լինի. տես որքան են իրանք աշխատում, որ բանւոր-
ներին այնքան առատ են վարձատրում. նրանց համար
փող՝ մի և նոյնն է հող:

— Այդ բոլոր գործարանները հայերի՞ է:

— Ոչ, հայի էլ կայ, ոսի էլ, թուրքի էլ:

— Իսկ բանւորները հայե՞ր են:

— Հայ, ոռւս, թուրք լիքն են և լաւ փող են
վերցնում:

— Հապա որ այդպէս է՝ մեր տղայքը էլ ինչո՞ւ
են տաւար պահում, հողը վարում, էշ կենում, էշ
մեծանում, հէնց գնան այնտեղ էլի. թէ լաւ փող կը
ստանան, ինչպէս դու ես ասում և թէ աշխարհք
կը տեսնեն, մարդավարութիւն կը տպօրեն. տեսնելով
կը լինի, գիւղում մնալով ի՞նչ կը լինի. գիւղացին
ի՞նչ է իմանում ժամը ի՞նչ է, քահանան ի՞նչ է. կը
գնան, կը տեսնեն՝ թէ ինչպէս նրանք ժամանէր,
քահանացասէր են, կը վերադառնան և նոյնը իրանք
կանեն, զեռ ուրիշներին էլ կը խրատեն: Ա՛յ Սաքանը,
ես իմ Աստուածը, նա, ես գիտեմ, այժմ աւելի ժա-
մանէր, աւելի քահանացասէր է, քան թէ առաջ էր՝
երբ տաւար էր պահում ու վար անում:

— Տէրտէ՛ր, բոլորը գէն, քահանան ի՞նչ է, որ
տեսնես՝ եպիսկոպոսի է հաւասար նրանց մէջ, ի՞նչ
տեսակ տներում են կենում, ի՞նչ նստել վեր կենալ
ունին, ոտով չեն մանգալիս՝ կառքով, ծառաները
յետևները գցած: Բազուցիք ի՞նչպէս են վարձատրում
քահանացին, — առանց համարելու փողը ջէբներից
հանում, քահանացի սուրբ աջը առնում և այնպէս
ծածուկ են տալիս, որ իրանց ձախ ձեռքը անգամ
չի իմանում: Քահանան մի նշան է օրհնում, հա-
րիւր մանէթ է վերցնում. սորանման էլ ուրիշ բաները:

— Բա՛ որ ես ասում եմ. մինչև մարդ մարդա-

վարութիւն չը սովորէ, ի՞նչ կ'իմանայ ժամի նշանակութիւնը, քահանացի գինը. մի նշան է օրհնում մի քանի րոպէում, հարիւր մանէթ է ջէբը դնում, իսկ մենք, որ ամբողջ տարին քանի քանի մլրտութիւն, նշան, պսակ ենք անում՝ հարիւր մանէթ վերցնում ենք: Դէ ե'կ համ ապրի'ր, համ էլ քահանացութիւն արա՛: Այ, քահանայ լինես Բագու և ոչ թէ գիւղում: Զէ՛, մեր գիւղացիները շատ ցիմարութիւն են անում, չեն թողնում իրանց որդիւրանց տանից դուրս գան, գնան փող բերեն, մարդավարութիւն սովորեն, որ գիւղն էլ մի քիչ շնորհք ընկնի, թէ չէ այսպէս ապրուստ չի լինի. ի՞նչ ենք մենք, ի՞նչ, ինչի՞ ենք նմանում, մեզ էլ է Աստուած ստեղծել, քաղաքացուն էլ, մենք կարո՞ղ ենք մարդ անունը համարձակ տալ մեզ. չէ, հէնց այսօրւանից ես կը քարոզեմ բոլոր ծնողաց, որ իրանց որդիւրանց ուղարկեն Բագու. բաւական է որ քան քնած մնացինք:

Երկրորդեցին օղին: Տէր-Մարկոսը Բագուայ քահանաների մասին էր մտածում և երանի տալիս նրանց. ի՞նչպէս նա ևս կը ցանկանար մշակների հետ գնալ այնտեղ քահանայ լինել կամ թէ չէ հէնց ոոր մի գցել այնտեղ. նա մտածում էր. «Ես ծերացել եմ, չեմ կարող էլ այսուհետեւ օտարութիւն գնալ, թող գիւղացի տղաները գնան և հարուստ վերադառնալով մենք էլ այնպէս կը վարձատրենք, ինչպէս մեր եղբայր քահանաները Բագում»:

—Այսքան էլ անխելքութիւն կը լինի, որ մենք

ունինք, ասաց ուրախ ուրախ Ստեփանը. մեր գիւղում քնած ենք, իսկ ուրիշները աշխատում հաշխատում են:

Ուրախ էր Ստեփանը, որովհետեւ գաղափարակիցներին գտել էր. իւր մտադրութիւնը կատարել անհրաժեշտ էր համարում, որովհետեւ տեսնում էր աչքի առաջ՝ թէ ի՞նչպէս ժողովրդի արթուն հովիլը քարոզում էր տաւարն ու գութանը թողնել, շտապել քաղաքները, բերել փող և մարդավարութիւն, փոխել գիւղացու կեանքը և լինել քաղաքացի: Տէր-հայրը թւում էր նորա աչքերին ինչպէս ժողովրդի բարեացակամը, նորա շահերին պաշտպանը և լուսաւորութեան առաջնորդը: Նա տեսնում էր տէր-Մարկոսի ձեռին մի բոցավառ լապտեր, որ լուսաւորում էր ամբողջ գիւղը, և գիւղացիները այնպէս էին լոյսի վերաց գալիս, ինչպէս ոչխարները ազիվերայ:

—Օրհնեա՛լ լինիս, Ստեփա՞ն, լաւ ասացիր. Սաքանն է ասում թէ այնտեղ մարդիկ ոչ քուն ունին և ոչ դադար, միշտ գործում, աշխատում են, թէ իրանք շահւում և թէ իրանց քահանաները. որ նրանք մի նշան օրհնելով հարիւր մանէթ չ'առնեն բաե՛սպիտի առնեմ մեր գիւղ տեղը, որ բացի տաւար պահելուց ու վար անելուց ոչինչ չը գիտեք: Մի մարդ, որ տարին տասներկու ամիս տաւարի հետ լինի, ախր նրանից էլ ի՞նչ կարելի է պահանջել, նորա մարդավարութիւնը էլ ի՞նչ կը լինի. առակը անխոտելի

Է՛ աէշը ի՞նչ զիտէ նուշը ի՞նչ էս. կամ թէ չէ ուր մեզ չեն յարդում, մեզ ինչպէս քահանայ չեն ընդունում, ախր ի՞նչպէս կարող ենք մենք աւելի պահանջ ունենալ. ասած է՝ աէշի քացուց բէդամաղ մի՛ լինիր»։ Սիրելի՛ք, ինչպէս մեր հայրերն են եղել, այնպէս էլ ուզում ենք մենք լինել, մի աչքներս հեռու չենք դարձնում, տեսնենք եօթը սարի, եօթը ձորի յետե ի՞նչ են անում, որ մենք էլ սովորենք և ըստ այնմ մեր կեանքը բարեփոխենք. բաւական է, այսքան էլ համբերութիւն կը լինի. դուրս եկէ՛ք ձեր կրծերի տակից, առէ՛ք ճանապարհորդի պարկը, Աստուծոյ անունը տւէ՛ք, գնացէ՛ք այնտեղ՝ ուր կայ շատ փող, ուր կան մարդիկ, որոնք ժամասէր, քահանայասէր են, սովորեցէ՛ք նրանցից քրիստոնէութիւնը, դարձէ՛ք ձեր տգէտ ու թշւառ ծնողաց մօտ, որ ծերութեան ժամանակ հասկացնէք նրանց այն ճանապարհը, որ տանում է հանդերձեալ երանաւէտ կեանքը։ Ես այս մենակ այստեղ չեմ ասի, աներում, եկեղեցում կը քարոզեմ, թող ականջները լաւ բանան, բարին չարից զանազանեն, անեն այն ինչ որ դէպի Աստուծոյ ճանապարհն է տանում։ Ես ինձ համար մեծ մեղք կը համարեմ, որ, երբ տեսնում եմ զիւղացին փոխանակ աջ գնալու՝ ձախ է գնում, ճանապարհին շատ տեղ սացմաքելով՝ եթէ չը զգուշացնեմ նրանց ասելով. Սիրելի՛ ժողովուրդ, գնացէ՛ք աջ, այնտեղ կան ոսկու կոյտեր, այնտեղ կայ քրիստոնեաց բնակիչ, ձախ մի՛ շեղւէք, կ'ընկնէք մութ խորխորատ՝ ուր կեղտոտ տա-

ւարին պիտի ծառայէք, ուր ցեխոտ գութանի յետեից պիտի քաշքաշ լինէք»։

Մկրտումի տունը կենդանացել էր. հարեանները թափւել, լցւել էին. քահանան օղին խմած ոգեորեւել էր, և գիւղացիներին օգուտ էր ուզում տալ՝ աչքի առաջ ունենալով իւր սեպհական օգուտը, այն է՝ մօտ ապագայում իւր առատ վարձատրութիւնը։ Գիւղացիների պէս նա էլ մտքումը կորկոտ էր զցել, բաղու ուղարկած երիտասարդներին համարում էր տոկոսով տւած փող։

Ոգեորեւել էին գիւղացիները, ուրախական բացականչութիւններ էին հանում. այս ու այնտեղից լուսում էր. օներանի՛դ, այդ սուրբ բերանի՛դ մատադ, որ մեզ համար հոգս ես անում, զու այդ քո բարութեամբ արքայութիւնը ժառանգեցիր»։ Էլ ուրախութիւնից ոչ ոք չէր կարողանում խօսել։ Իւրաքանչիւրը իւր առանձին մատածողութիւնը այժմ ընդհանուրի մտածողութեան հետ ներդաշնակ և նման տեսնելով՝ աւելի և աւելի ոգեորեւցաւ. մէկը եթէ որոշել էր մէկ տղային ուղարկիլ, այժմ երկուսին, երեքին էլ միանգամից է ուզում ուղարկել. նոքա լաւ տեսնում էին թէ Սաքանը ի՞նչպէս մաքուր, ի՞նչպէս լաւ հագւած մի քաղաքացու տղայ է դարձել. նորա բերած մատուցարանը, որ սիւնի ճակատից էին կախել օղին խմելուց յետոց, կանաչ-կարմիր փոքրիկ մնդուկները, որ պատի տակովն էին շար զցել և վերջապէս հօր քմախոտի տուփը, որ հանգիստ չէր

գտնում Մկրտում ապօք ձեռին, — այս բոլորը տեսնելուց և տէր հօր ասածները լսելուց յետոց՝ նրանց հայեացքը անխօս ասում էր. «Ել ի՞նչ ենք կանդնել, այսուհետեւ էլ սպասելը չի բռնի, դէպի առաջ, դէպի ոսկու կոցտե՛րը, դէպի աւետեաց երկի՛րը»:

Թ.

Ստեփանը և Սաքանը փոքրուց էլ, մինչև իրանց ինքահայրութիւնը, միմեանց շատ մօտ են եղել: Սաքանը իւր ընկեր տղաների մէջ համարւում էր մի խորամանկ, խեղկատակ տղայ. թէև չափից դուրս սուտասան և կեղծաւոր էլ էր, բայց նա այնպիսի ճարպիկութեամբ էր ծածկում, որ ոչ ոք չէր կարողանում իմանալ թէ Սաքանը դո՞րդ է ասում թէ սուտ, կեղծում է թէ ոչ ընկեր հարեւանները օձիք էին պատում նրանից. պառաւ կանայք նրան համարում էին «օձը բնից հանող», բայց իւր ընկեր տղաները նրան սիրում էին, որովհետեւ միասին հաւաքւած ժամանակ, երբ մտադրում էին մի բան անելու, ինչ դժւար, խորամանկութեան, խելքի բան էր լինում, նա էր միայն յաջողութեամբ կատարում՝ ուրիշ ոչ ոք:

Գալով Ստեփանին, Ստեփանը մի դիւրահաւան, անկեղծ, սրտոտ և անձնավստահ տղայ էր. բոլորեքեանք էլ նրան կը հաւատային. ոնորա սուտը ուրիշի զորդից զորդ է, — այսպէս էին ասում իւր ընկերները: Ոչ մի պառաւ կին նորա վերայ չէր բարկա-

ցած, այլ ընդհակառակը միշտ օրհնում հա օրհնում էին, որ բարեկիշտակ է իւր մօր ու հօր համար: Մի խօսքով, Ստեփանը Աստուծոյ օրհնած դառն էր: Այսպէս քաջութեան և հաւատարմութեան կողմից նշանաւոր էր իւր ընկերների մէջ Ստեփանը, իսկ խորամանկութեան կողմից Սաքանը: Այժմ երկուսն էլ, որ երեսուն տարուն հասուհաս են, դարձեալ նոյնն են. մէկը կեանքի մէջ չի փոխւել, էլի այն պարզսիրտ, դիւրահաւան և քաջն է ինչ որ առաջ էր, իսկ միւսը Բագու ընկնելով աւելի էր եփւել խորամանկութեան ու խարդախութեան մէջ, շահափրութիւնը նորա մէջ ամեն ինչ խեղել, սպանել էր. նա պատրաստ էր ամեն սրբութիւն ուրանալ, ոտի տակ տալ շահի համար. կեղծաւորութիւնը վերին աստիճան էր. հասցրել. չորս, հինգ տարի մնալով Բագու՝ սովորեց այն բոլոր բաները, ինչ որ հարկաւոր են մի խորամանկ, կեղծաւոր և շահասէր մարդու: Սաքանը Բագու օրերն էր համարում, թէ ե՛րբ պիտի իւր սրտի ցանկացած գումարը ձեռք բերի. և երբ այդ փափագին հասաւ, սկսեց մտածել թէ ի՞նչպէս գործադրի այդ գումարը, որ մէկին մէկ փող աշխատի հանդիսատ իւր տանը նստած. նա լաւ տեսնում էր, որ չորս, հինգ տարի շարունակ մշակութիւն անելով, այլ ևս զժւար կը լինէր կրկին մշակութիւն անել. վերեղակութիւնը ամենայարմարը գտաւ և, Բագուից ճանապարհելիս, գնեց մի հարիւր բուրդու մանրունք, ճանապարհ ընկաւ իրանց գիւղը. նա մըտ-

քումը հաստատ կորկոտ էր զցել, որ տանը ծալապատակ նառած, առանց մէջք կոտրելու տասնապատիկ աւել կ'աշխատի: Այժմ գիւղումն է. նա իւր ապրանքի գները լաւ բերան է արել, վճռել է փողով չը ծախել, այլ փոխել ցորենի, գարու և այլ բերքերի հետ. նա իւր օդուար աշքի առաջ ունենալով այդ արաւ, և միւնցն ժամանակ գիւղացու համար հեշտացրեց առուտուրը:

Ստեփանը այդ բոլորը գիտեր. Սաքանն էր ասել, յացտնել էր նոյնակէս, որ այդ առուտուրից չափից գուրս մեծ աշխատանք կ'ունենայ և եթէ ուղում է կարող է ինքն էլ ընկերանալ, միշտ բագուից ապրանք ուղարկել:

Ստեփանը հաւատալով Սաքանի ամեն ասած ու պատմածին նեղանալով ասաց.

—Ամմա՛ ինչ տղայ ես, վեր կացիր սուս ու փուս, առանց իմաց տալու մի քանի ընկերներով գնացիր բագու, աշխարհիս հարստութիւնը բերիր, հիմա կուռդ գլխատակովդ դրած կարող ես ապրել, մեզ նման չես հո՛ւ:

—Ստեփա՞ն, փա՛ռք Աստուծոյ, բագուն իրան տեղն է, չը փախա՞ւ հու, ինչ կայ որ. զորդն ասած՝ փախեցանք քեզ յացտնել, դու էլ իմաց տաս ծնողներիդ, այն ժամանակ էլ մեր գնալը չէր բռնիլ, մեր հայրերը կ'իմանացին, էլ կը թողնէին որ մարդ ուոր ոտի առաջ գնի. լաւ արինք մենք գնացինք և ձեզ համար հաստատ տեղեկութիւն բերինք. լաւ կը լի-

նէր, որ միասին վեր կենացինք, գնացինք ու վա՛յ թէ այնպէս աշխատանք չը լինէր, ինչպէս մենք տեսանք, այն ժամանակ ի՞նչ կը լինէր մեր զրութիւնը:

—Հա, շա՛տ լաւ էք արել, զորդ ես ասում, Սաքա՞ն. Սաքա՞ն, ասում ես ամիսը երեսուն, քառասուն մանէթ աշխատանք կարող եմ վերցնել. ասամ մի երկու տարւայ մէջ լաւ փող կը շինեմ էլի, և կ'ընկերանանք, այստեղ խանութ կը բանանք. հը՛, ի՞նչ ես ասում այս խելքին:

—Լա՛ւ ես մոտածել, ես իմ Աստուծածը, քեզ հետ որ չ'ընկերանամ, էլ ո՛ւմ հետ պիտի ընկերանամ. միտդ է, հէնց պատիկուց էլ ընկեր ենք եղել: Դու Բագուից ապրանք կ'առնես կ'ուղարկես, իսկ ես ացանել կը ծախեմ, դու տես ի՞նչպէս աշխատանք կը վերցնենք. մեր փողին էլ փող չի հասնիլ, մի քանի տարուց յետոց դու էլ կը գաս զիւղը և ինձ նման կ'ապրես: Ստեփա՞ն, այս քեզ եմ ասում հա՛, չը լինի թէ բերանիցդ հանես, ուրիշները հասկանան, ձեռներիցս կ'ընկնի հա՛:

—Խելքս թոցրե՞լ եմ ինչ է, ինչո՛ւ պիտի ասեմ. զու միամիտ կացի՛ր, խօսքը՝ խօսք է, տղայ ես հէնց ծախի՛ր, ես այնտեղից ապրանքը ապրանքի տաից չեմ կարիլ: Նատ լաւ եղաւ է՛, չես իմանում, հաւատացած եմ որ շատ շուտով պիտի հարստանք. տօ հարստութի՞ւն, հարստութի՞ւն, առանց հարստութեան ի՞նչ ենք մենք, ո՞վ է նացում մեր կզակին, ո՞վ է մեր խօսքը չւանի դնում; դու այն ժամանակը տես ի՞նչ կը լինենք:

— Ստեփան, ինչպէս երևում է բանից, ուզում
ես այս երկու օրը դուրս գալ, գնացողներ շատ կան:
— Խօ՞սք կայ, խօսք կայ, էլ մնամ, քո առւնը
շինւի. որ ճարումն ճար լինի՝ հէնց ալսօր դուրս կը
գտամ. Սաքա՞ն, սիրու ճաքում է, էս, էս անտէր
օրն էլ, ասես, անվերջ պիտի գնայ, մթնում էլ չի, որ
էգուց շուտ գայ, վեր կենանք, այս խարաբին թքենք,
հեռանանք:

— Դէ որ այդպէս է ականջդ ձայնի պահի՞ր,
ինչ որ ուզեմ ուղարկի՞ր. դու տնից միամի՛տ կացիր,
աչքս միշտ վրան կը լինի, շուա չը վրազես գաս,
մտածելով թէ տունը անտէր անտիրական է:

— Երեխա՞յ ես ինչ է. քեզ նման եղբայր տղան
որ ունիմ էլ ի՞նչ կը մտածեմ. զորդ է, բարեկամներ
ունինք, բայց աւելի լաւ է զուինքդ նայես, — վարի
ժամանակ վար անել տաս, հնձելու ժամանակ հնձել
տաս, մի խօսքով ինչ որ հարկաւոր է. մեր տաւարի
խոտն ու դարմանը կայ, ձմռնահան կարող են լինել,
նեղութիւն չը կայ դրանում, ցորենն էլ աղած է.
ոչինչ պակասութիւն չ'ունինք, մնում է ճոթ ու
պատառը, այն էլ եթէ կը հարկաւորէի կը տաս ի
հարկէ:

Սաքանի դիտաւորութիւնը կատարւեց. նա մի
հինդ հոգու էլ այնպիսի դրութեան մէջ էր դրել,
որ իրանք մեծ ուրախութեամբ, ինչպէս Ստեփանն
էր, առաջարկեցին ընկերանալ, բագուից միշտ ապ-
րանք ուղարկել և երգւեցին գաղտնի պահել այդ

ընկերութիւնը. իսկ իրանց աները երես արին Սա-
քանին, որ նեղ տեղ ընկած, մի կարիք պատահած
ժամանակ՝ ճեռնհամ լինի ինչպէս տանտէր:

— Ել ուրիշ մի բան չ'ունի՞ս ասելու հու, ասաց
Ստեփանը. ես մի գնամ մնով անցնեմ, պատրաստու-
թիւն տեսնեմ, վաղ առաւօտեան երեսիս խաչ հա-
նեմ, ճանապարհ ընկնեմ:

— Ել ինչ կայ որ, ինչ որ հարկաւոր էր խօսե-
ցինք. գնա՞ պատրաստութիւնդ տես. ճանապարհի
պաշարը շատ վերցուր, հիմա Թագուհին, ես եմ ի-
մանում, ինչե՞ր է պատրաստել:

— Սաքա՞ն, այս ջանը մեռնի՝ թէ բանից տեղե-
կութիւն ունենամ. կ'ուզես մի գնանք, տեսնենք ինչ
է շինել, մի-մի բաժակ կը դցենք, Աստուծու տւա-
ծից էլ նհար կ'անենք:

— Խէր բանին ինչպէս կարող եմ չէ ասել,
գնա՞նք:

Թագուհին կռները սոթտած եփում, թխում
էր, Սաքանին տեսնելով զլխով բարեւ արաւ, էլի բանին
կացաւ:

— Աղջի՛, ի՞նչ ունիս, բեր մի տեսնենք, ասաց
ինքնաբաւական կերպով Ստեփանը և օղիի շիշը ա-
ռաջը դրաւ:

Թագուհին իսկոյն մի խօնչի մէջ պատրաստեց
հաց, պանիր ու մի խաշած հաւ և բերեց առաջ-
ները դրաւ:

— Սաքա՞ն, Սաքան, մի կտորի՛ր այս հաւը քո

Հալալ ձեռքով, ջահէլ տղայ ես: Առ մի շնորհաւորի՛ր մեր ընկերութիւնը և Աստուած կանչի՛ր, որ կապը երկար լինի:

Սաքանը ընկերութիւն բառը լսելուն պէս՝ աչք ու ունքով արաւ, որ ոչինչ չ'ասի ընկերութեան մասին, իսկ Ստեփանը չը հասկանալով ուզում էր շարունակի, որ դէս-դէն նացելով կամացուկ ասաց.

— Ստեփան, տունդ շինւի, կնիկարմատի մօտ այդպիսի բանից կը խօսէ՞ն. մնասից զատ օգուտ սկի չի բերիլ, հարկաւոր չի:

— Բա՛ մոռացել էի. դէ լաւ, խմի՛ր, նա ոչինչ չի հասկացել, միամիտ կացի՛ր. կնիկը ինչ խելք ունի, որ այդպիսի բան էլ հասկանաց:

Կերան ու լիացան Սաքանն ու Ստեփանը հանաքներ անելով, իրանց երեխացութիւնից պատմելով: Թագուհին լսում էր և շատ ուրախանում, որ ամուսնուն Բագուից եկած մի քաղաքավարի մարդ բանի տեղ է զցում, հետը հաց ուտում և, որ գըլխաւորն է, հանաքներ անում. և այդ ժամանակ ամուսինը աւելի բարձր երեաց իւր աչքերին. ինչքա՞ն ուրախ կը լինէր հէնց այդ րոպէին Բագուից եկած տեսնէր նրան: «Այ զնաց Բագու՝ կը զայ, նորա շւաքը բամբակով կը հաւաքեն, և այդ երկու տարուց յետոյ պիտի լինի, երկու զատիկ պիտի անցկենաց էլի—մէծ բան չի», մտածում էր Թագուհին:

— Սաքա՞ն, այնքա՞ն ուրախ եմ, որ էլ չեմ կարող ասել, ասաց Ստեփանը օդին երրորդելուց յետոյ.

մի տես է՛, մեր տանը բոլորեքեանք էլ ուրախ են, կարծես, մեր սեւացած կոճերը, մեր ծխոտած պատերն էլ են ուրախ. եթէ դու չը լինէիր, կարո՞ղ էի ես այս օրին հասնել, քե՞զ եմ պարտական, քե՞զ. տունս, տեղս քեզ ֆէշքէշ, այսուհետեւ քո տունը համարի՛ր, մեր կնիկն էլ քո քոյլը: Աղջի՛, Թագուհի՛, դառնալով կնոջը, սրանից յետոյ տանտէրը Սաքանն է, էլ ես չը կամ, վաղը ես գնում եմ, Սաքանի բոլոր կարգադրութիւններին կը հնազանդես, պակասութիւն եղած ժամանակը կ'ասես:

— Հերիք է հերիք, Ստեփան, ա՛ դու ի՞նչ տեսակ մարդ ես եղել, դու պէտք է ասես, որ ես հասկանա՞մ. էլ հարկաւոր չի, տունը այսուհետեւ իմն է, ես գիտեմ Թագուհին, քեզ ի՞նչ կաց:

Թագուհին աւելի ուրախացաւ, որ անտէր չը պիտի մնաց Ստեփանի գնալուց յետոյ: «Ինչպէս իրար սիրում են, մտածում էր նա, իրար համար կարող են մեռնել, նեղութիւն սկի չեմ քաշիլ, այս լաւ եղաւ»:

— Դէ, Ստեփան, դու քո պատրաստութիւնդ տես, վերկացաւ տեղից Սաքանը. ես մի գիւղովը անցնեմ, տեսնեմ ինչ կայ, ինչ չը կայ. դեռ բարի ճանապարհ չեմ ասում, ճանապարհ գցելուց կ'ասեմ. սանամօրը լաւ օյինի մէջ ես զցել, հիմա բէզարած կը լինի,— ասելով դուրս գնաց:

Ե.

Պանդուխստ գնացող քսանի չափ տղամարդիկ, որոնց մէջ էր և Ստեփանը, պարկերը, խուրջնները շալակած, երկար մահակները ձեռներին, իրանց ծնողների, կանանց և բարեկամների առաջև էին կանգնած: «Մի րոպէ չի անցնիլ մնաս բարե ասելոց յետոց, կը թողնենք իրար», մտածում էր ամեն մէկը: Մայրը համբուրում էր իւր սիրասուն որդու ճակարը, լցւած աչքերով խրատներ տալիս՝ լաւ կենալ, փող աշխատել և իրանց չը մոռանալ. ամուսինները ձեռք ձեռքի տած խորհրդաւոր հայեացքով, լուռ ու մունջ միմեանց հետ խօսում էին, իրար յաջողութիւն մաղթում. զոքանչը փեսին բռնած պատւիրում էր աղջկաց համար լաւ լաւ հագուստներ բերել, իսկ ընկեր-հարեանների նամակներն ու ապսպանքներն հօ՛ անվերջ էին:

Հասաւ ժամը. պանդուխտները ճանապարհ ընկանքաջ քաջ, կարծես, դէպի պատերազմի դաշտը. ա՛խեր, ո՛խեր դուրս թռան քնքոց սեռի վեր ու վար անող կրծքերից. արտասուքի կաթիլներ թափւեցան նոցա ոչ ուրախ և ոչ տրտում աչքերից. լուռ կանգնած նայում էին գնացողներին. րոպէական էր դոցա տիրութիւնը, կը ծռւեն պանդուխտները դէպի ձախ, էլ չեն երևալ, այնուհետեւ անձնատուր կը լինին երևակայութեան, օդային ամրոցները կը վանէ տիրութիւնը և ուրախութիւնը կը թագաւորի թռուարե սրաերին:

Վերջին անգամ երկու կողմից էլ իրար նայեցին գիւղացու հեռատես, սուր-սուր աչքերով և հայեացքով մնաս բարե առաջին ու աներեւոյթացան: Նատերի աչքերը անթարթ նայելուց դեռ ևս պատկերացնում էր ճանապարհի և օդի մէջ իրանց սիրելիների հասակը:

«Գնացի՞ն»—այսու այն կողմից ձայն տւին: «Աստուած բարի ճանապարհ տայ, բարով գան», — ահա՝ «գնացինի» պատասխանը, որով իրանց կոտրած սրտերը սաղացրին և «բարով գան» բռւռն երևակայութեան տակ ստեղծագործւած՝ ի՞նչ տեսակ ապագայ երջանիկ կենցաղավարութիւն հասկացան, ապագայ վարդագոյն յոցեր—ահա՝ կոտրած սրտերի գեղթափիլ: Բայց նոցա համար մի քանի տարին, ինչպէս իրանց ամուսիններն էին ասել, թէ գլխարկի մի քանի անգամ շուռ տալու չափ կը տեի, երկար ու ձիգ ժամանակ էր թռում. նոքա հեռու ապագայով ասլրել չէին ուզում, այլ այն զաւ ապլելը, գաղափարական կեանքը, որ իրանց մշակ ամուսինները պիտի գիւղը բերէին, ուզում էին մօտ ապագայում—վաղը, միւս օրը տեսնել և սրաի փուշը հանել. նրանք կանալք են, անհամբեր և հետաքրքիր, նոցա ձեռքերը շուտով է բանում գաղտնիքը ծածկող խուփը, նրանց աչքերը մաղն է շրջում տակը տեսնելու, նրանց օրը մի տարի է, նրանք սպասել չը գիտեն: Բայց ինչո՛ւ նոցա դէմքերի վերաց ուրախութեան գծեր փայլեցան. չ'ասես, երևակայու-

թեան աշխարհի շէմքը կոլսեցին, ուրախութիւնը լի ու լի է՝ մտան հոյակապ ապարանքները։ Մարդու միտքը մի ակնթարթում ինչե՛ր չի ստեղծագործում, ի՞նչ ապարանքներ ու դարպասներ չի կառուցանում։ Նոցա ապարանքները թէև բազմայարկ, շքեղ, զարդարուն, բայց մի վայրկեանում ստեղծագործւեցան և հէնց վաղը պիտի տիրանան և երջանիկ լինին. բայց միթէ չեն յուսահատւի վաղը իրանց խաբւած տեսնելով. — վաղը դարձեալ աւելի բարդ, աւելի զարդարուն կը ստեղծագործէ նոյն ամրոցները միւս վաղւաց համար. այսպէս էգուցները կ'ընթանան աննկատելի կերպով և իրանց ամուսինների ասածին պէս՝ մի քանի տարին գլխարկի մի քանի անդամ շուռ տալով չափ կը տեի։

Զ.

«Տղա՛ք, ձեզ եմ բաշխում Բագուն, տե՛ղ, տե՛ղ սա է, է՛շ, դարձաւ ուրախ ուրախ Ստեփանը իւր ընկերներին, երբ Բագու հասան։

Քսան հոգի՝ մեծ ու փոքր՝ պլշած աշքերով և դէմքով շտապում էին Ստեփանին հասնել, որը, ինչպէս յաղթանակը տարած զօրապետ, սրի տեղ մահակը ձեռին խոչընդոտները յաղթահարելով տիրապետել էր քաղաքը, մտել ներս, ուրախ և սիզաքայլ առաջ էր ընթանում։

Օրը կիրակի էր, առաւօտեան ժամի տասը։ Գիշերը աշխանային էր. մանրամաղ անձրել փոշին

նստացրել, օդը մաքրել, լրիները լւացել էր. կապոյտ երկնակամարի վերաց թագաւորում էր այրութիւնը անցրած աշխանային արեգակը. ի՞նչ դուրալի էր նորա լոյն ու ջերմութիւնը։ Տները, կարծես, հէնց այդ գիշերն էին ներկել սպիտակ, կարմիր, դեղին։ Երկնակամարը աւելի կապոյտ էր երևում այդ օրը, իսկ ծովը երկնքի պատկերն էր. նա ծփծփում էր քաղցրադէմ արեգակի տակ և հանդարտ ու քնքշիկ դողդոջով ափերն համբուրում, գուրգուրում. լաւ գիտէր, որ ժամանակաւոր էր այդ երջանիկ ու քաղցր բոպէն, կ'անցնի, ով գիտէ, մի ժամ կամ գուցէ աւելի քիչ, հիւսիսը իւր դառնաշունչ քամին շառաչելով կը փէտ, այն ժամանակ արեգակը ամպերի տակ կը կորչի, իսկ իւր պատկերով զմայլող սիրուն օրիորդներն ու երիտասարդները փոշուց կուրացած դէպի տուն կը վազեն։ Նոյնը և մարդիկ մտածելով ուզում էին այդ սքանչելի օրը դուրսը անցնել։ Ո՞նչ գեղեցիկ օր է, սատանի ականջը խուլ, քամի չը կայօ, — յաճախ կրկնում էին մարդիկ և իրանց համար զօսնում ծովի ափում, պարապետի վերաց և այդում։

Հայ գիւղացու աչքի առաջն էր իւր Աւետեաց երկիրը, իւր երևակացութեան ստեղծագործած իդէալ Բագուն։ Ո՞րքան ճոխ ու փարթամ, ո՞րքան բազմամարդ ու հարուստ էր երևում նոյսա։ Բաւդի մէջ փակւած՝ չը գիտէին ո՞ւր էին գնում, ո՞ւր պիտի դադար առնէին. պլշած աչքերով ուզում էին ամեն ինչ միանգամից տեսնել ու իմանալ, հետեւ-

բար և մէկ բանի վերայ կանգ չէին աւանում: մէկ նայում էին երկյարկ, եռյարկ սրբատաշ աներին, մէկ մեծ մեծ խանութներին ու կրպակներին: «Ո՞ւր են զնում այս մարդիկ, ոսով ու կառքով ացապէս շտապով, հէնց այսօր էր մնացել, որ քաղաքից դուրս գնացին», մտածում էր Ստեփանը, կարծելով կառքով պտտողները դէպի ուրիշ տեղ են ճանապարհորդում:

Այսպէս անգեղակոթցիք հասնելով դէպի ծովը տանող լայն փողոցը, լրիկի վերայ հաւաքւեցան և սկսեցին հետաքրքրութեամբ խանութների ասլակէ դռների յետե դարսւած իրեղէններին ու պատկերներին նայել: Երթևեկող պարոններն ու տիկինները կծու հայհոյում էին և արանքները պատուելով անցնում: Թուրք պահապանը նկատելով, լիրը հայհոյանքով հրամայեց ցած գալ լրիկից. լիրը հայհոյանք, մի սինլքոր թուրքի բերանից դուրս եկած, ելեքտրականութեան պէս ցնցեց նոցա և կրակոտ աչքերը չռելով կեղտոտ ու չեչոտ քեալբալայու վերայ, ամեն մէկը մահակը իւր ափում լաւ սեղմեց և պիտի վրայ բերէին խրուիլակի դլխին, եթէ որ չիմանացին թէ իրանք ուր են գտնուում և դէս դէս չը նայէին, որ այդ բոպէին, կարծես, ականջներովն ընկաւ. «Դուք էլ ձեր սարերի ու ձորերի որդիքը չէք, դուք այսուեղ ատրուկներ էք, ինչ որ անում, կատարում են՝ անպայման պիտի հնազանդւիք»: Ոմանք շտապով ցած եկան, իսկ մի քանիսը հետաքրքրւած դեռ նայում էին: Վախկոտ, բայց քաջախրա-

երեացող թուրքը կրկին հայհոյեց աւելի խայտառակ կերպով և բոլորին էլ ցած բերաւ: Նորա արհամարհական հայեացքը դէպի մահակները, կարծես, ասում լինէր. «Երբ կը թողնէք ձեր մահակները, կը շալակէք բեռներ, էլ չէք վիրաւորւի դուք այս իմ համեղ ու քնքոց հայհոյանքներից, որ միշտ որդուս եմ տալիս»:

Պանդուխտները բարկացած յետ յետ նայելով փոխեցին իրանց ճանապարհը և դէպի վեր գնացին:

«Երեւի կուպրած տեղերը միայն քաղաքացիների համար է պատրաստած. ա'խ, ինչո՞ւ մենք էլ չենք քաղաքացի. այս ի՞նչ հագուստ է, որ մենք հագել ենք, ոտներս տրեխս է ծածկում, իսկ գլուխներս մորթի գտակ. այս ի՞նչ զագանակէ ճեռներիս, մտածում էին աւելի երիտասարդները»:

— Յարութի՛ւն, դարձաւ իւր ընկերը Մովսէսը, մեր գիւղացիներից սկի չենք տեսնում, հապա ո՞րտեղ պիտի զաղար առնենք գիշերը:

— Ճիշդ ես ասում, աչքով պիտի պահենք, կարելի է հէնց կը տեսնենք:

Այս խօսակցութեան ժամանակն էր, որ ծանր բեռն տակ, վերից վայր գլորւելով դալիս էր մի մշակ. նա շալակը ցած դրաւ մի խանութի դրան առջև, վրան նստեց և գտակը վերցնելով ճակատի քրաինքը կռացաւ մատով սրբեց՝ ծը՛լլ գետնին. մշջքը տւաւ պատին ուզում էր հանդստանալ, բայց յանկարծ աչքովն ընկնելով պանդուխտները՝ վեր կաշաւ տեղից: Անգեղակոթցիք կը թողնէին նրան և

իրանց ճանապարհը կը շարունակէին, նրան թուրք կամ թալիշ մշակ համարելով, եթէ որ Աղաջանը, այսպէս էր մշակի անունը, չը մօտենար, բարեւ չը տար:

—Այդ դու ես, Աղաջա՞ն, բացականչեց Ստեփանը, և սառը ջուր թափւեցաւ նորա վառ երեւակայութեան վերաց, տեսնելով իւր հայրենակցին ոչ թէ վերակացու, այլ բեռնակիր մշակ, այն էլ այդպէս հալւած, մաշւած ու կեղսոտու: Փոխւեցաւ Ստեփանը.—Նորա ծրագիրները, կառուցած բազմայարկ դարպասները մշուշը պատեց, ինչպէս այդ պահին փոշիով ծածկւեց ամբողջ քաղաքը. հիւսիսային քամին, որ կամաց կամաց տեղից շարժւել էր մի կէս ժամ առաջ, այդ վայրկեանին ամենայն արագութեամբ շառաչելով փչեց: Երկինքը կորցրեց իւր թեամբ կապտութիւնը դորշ դորշ ամպերով ծածկւելով, իսաղաղ կապոյտ ծովը, որ երեխայի պէս, մի քիչ առաջ, ափերի հետ էր իսաղում, համբուրում, թոթվում, պղտոր գոյն ստացաւ՝ գոռուում գոչումով ափերին բաղիսելով: Մարդկանց գոյնն էլ փոխւեց, նոքա էլ երկնքի ու ծովի նման մոխրի գոյն ստացան և աչքները ճպճպացնելով, արտասուքի կաթիւներ վայր գլորելով՝ դէպի կառք, դէպի տուն շտապեցին: Անգութ հիւսիսը իւր ցրտաշունչ քամիով կերպարանափոխեց ամենայն ինչ, մի մշակ իւր ճիւաղ մարմնավն ու համետով փոխեց պարզամիտ գիւղացիների տրամադրութիւնը:

Աղաջանը, բարեւելուց յետոյ, ու կոպէկը առաւ իւր վարձ և համազիւղացիների հետ նրանց առողջութիւնը, անից-տեղից հարցնելով վեր բարձրացան փոշու հոսանքին հակառակ: Աւազը, դարմանը, թղթի կտորտանքը ի մի ձուլւած՝ քամին ամենայն արագութեամբ և արդարութեամբ բաժանում էր այդ Աւետեաց երկրի ամենալաւ բարիքներից մէկը լայն փողոցն ի վայր՝ աջ ու ձախ, վեր ու վայր: Զէր ընդհատում մի բոպէ, մի վայրկեան, որ մարդ աչքերը մի կերպ կարողանար բանալ, իւր առաջի ճանապարհը տեսնէր, որպէս զի աջ ու ձախ յանկարծակի դղրգացող կառքերի տակը չ'ընկնէր: Պարզ, յստակ օդի սովոր գիւղացու աչքերը ճպճպում էին, արտասուքի կաթիւներ էին զլորուում փոշոտած երեսներին և աւազը ատամների տակը ընկնելով ողջ մարմինը սրտուեցնում էր:

—Աղաջա՞ն, Ասուուածդդ սիրես, շուտ արա՛ մի տեղ տար մեզ, թէ չէ կուրացանք, պրծանք, այս ու այն կողմից թախանձեցին պանդուխտները:

—Ոչինչ չը կայ, սա ի՞նչ փոշի է որ այդպէս գանդասաւում էք, սպատախտնեց Աղաջանը:

Այսպէս գնում էին, որ մէկը «մշակ» ճայն տւառ: Ինչ ասել կուզէ որ Աղաջանը, ով էլ լինէր իւր հետ խօսացողը և ինչ կարեռը նիւթի վերաց էլ խօսալու լինէր՝ սկիափի թողնէր և դէպի կարեռը բագոյնը վազէր: Վարպետ մշակը քամու ձեռը տալով իւր համազիւղացիներին՝ ու կոպէկի յետելից գնաց:

Սւ կոպէկը Աղաջանի համար քաղցր էր քան թէ
իւր ընկեր-հարևան, պարզսիրտ համագիւղացիները:
Մի՞թէ Աղաջանը նոցա չէր սիրում. ահա հարց,
որին չորս, հինգ տարով մշակութիւն անողը կը պա-
տասխանի. «Մէր, մի՞թէ սւ կոպէկից զատ կայ մի
առարկաց, մի շնչառոր արարած, որին կարելի լինէր
սիրել»: Նա սիրում է սւ կոպէկը զլիսապատռու,
հոտհոտելով դորա յետելից է գնում հաւաքելու և
ամեն անգամ մատերի ծայրերով շօշափելով այդ
կենսատու պղինձը, խոր ընկած, փոքրացած աչքերը
աւելի մեծ են բացւում, մի վայրկեան փայլում, երբ
գեռ ձեռքին է; բայց հէնց որ գցում է կողքից կախ
կաշւի քսակը, աչքերը կրկին խոր են ընկնում, փոք-
րանում, աղօտանում: Աղաջանը այդ ուրախ վայր-
կեանը ձեռից չը տւաւ. «մշակ» են կանչում, չը կար
մէկը, որ նորա առաջը կտրէր, արգելք լինէր, վաղեց
ինքը մոքումը ասելով՝ «ի՞նչ թեթև ոտ ունին մեր
գիւղացիները»:

Պանդուխտները փոշուց պատսպարւելու համար
մի պատի տակ կուչ եկան մայրը կորցրած ճտերի
նման:

— Ուհ, հազիւ հազ որ վերջացաւ, ասաց Ստե-
փանը ընկերներին թթւած դէմքով:

— Ինչն է վերջացել, մի այն կողմը՝ դէպի ձախ
նայիր, աե՛ս ինչ է զալիս, կարծես սէլ է մեղ պիտի
խեղի, կուլ տայ, պատասխանեց մօտ եղողը:

Ալ' զզ - եկաւ սէլաւը, հայ զիւղացիները չը կա-

րողացան ծածկւել. իրանց սիրելի Աւետեաց երկի-
րը» չը մոռացաւ, որ ունի նոր, պատւաւոր հիւ-
րեր, պաղագայ մշակ-ստրուկներ՝ պատի տակ կուչ
եկած մաս բաժին հանեց իւր հազմատարր բարիքից
իւր սրդար ձեռքով:

— Աղաջանը ո՞ւր գնաց, հարցրեց Աւետիսը
Ստեփանին:

— Զիմացայ, երեխ այստեղի բարեկամներից
կանչող եղաւ. բայց ինչո՞ւ չ'եկաւ, չի իմանում, որ
մենք անձանօթ ենք այս քաղաքին. այստեղ սպա-
սե՞նք մինչև որ նա գայ թէ գնանք. բայց ո՞ւր ենք
գնում, որտե՞ղ ենք ճանաչում, որ գնանք:

Ահա այն խօսքերը, որ Ստեփանի պէս անձնա-
պատուն մարդը առաջի անգամ արտասանեց: Նա
այդ տեսակ յուսահատական խօսքեր մի մոլորւած
ճանապարհի վերայ կամ մի ձեռնարկութեան ժա-
մանակ չէր մտածած անգամ, ուր թէ ուրիշների
գիմաց արտասանած: Ո՞ւր էր այն Ստեփանը, որ աջ
ու ձախ շահատակելով, անվախ, աներկիւդ, առանց
հետեւանքները աչքի առնելու գործէր. էլ չը կար
առաջւայ կրակը, առաջւայ աւիւնը, հիւսիսալին
չոր ու զօրեղ քամին հանգցրեց նորա լավիլիզող բոցը:

Քամին առաջն առած զանգի զօղանջիւնը
դէս-դէն բաժին բաժին անելով կիսատ-պուատ յաց-
տարարեց փոշիապատ քաղաքին ժամի մէկը:

— Տղա՛ք, չ'եկաւ Աղաջանը, երեխ գործ ունի,
քաղցած չէք, նստենք հէնց այստեղ, անց ու դարձ

անող չը կայ, մի քիչ հաց ուտենք, փոշին էլ ինչպէս երեռում է նստելու վրայ է, ձայն տւաւ Յովէփիք:

— Նա՛տ լաւ կը լինի, այս ու այն տեղից վրայ բերին, կարծես, բոլորեքեանքն էլ այդ տեսակ մի առաջարկութեան էին սպասում:

Նոքա կերան իրանց գիւղից բերած պանիրհացը, ինչպէս պախ ու փլաւ:

Դարձեալ չ'երեեցաւ Աղաջանը, նոյի ագրաւն էր դարձել: Նա բեռներ ունէր շալակելու, ի զոր չը ասել՝ «ի՞նչ թեթև է դիւղացիների ոսր»: Քայցը է աշխատանքը. եթէ կան իրար վերայ դարսուած հակեր և պէտք է կրել, նա չի հեռանալ ոչ մի պատճառով, նա ուժասպաւ, անշնչացած երեսն ի վայր կ'ընկնի հակի տակ, քան թէ կասի՝ «պարո՞ն», խիստ դադրած եմ, սպասէ՞ք մի ժամ հանգստանամ և դարձեալ շարունակեմ կրելլա, կամ թէ չէ «բաւական է, այլ ևս չեմ ուզում կրել, ես հանգստանալ եմ ուզում»: Աղաջանը ինքն իրան բանաւոր արարածի շարքը չէր դասում, որ համարձակւի վաճառականի առջև այդպիսի մի միտք յայտնի:

Աղաջանը գործի մէջ էր խրել. լաւ իւղոս թիքայ էր, ինչպէս իրանք են սովոր ասելու. իւր բաղզից մենակ ինքն էր, մշակի հոս չը կար, և ինքը մոտադիր էր մինչև երեկոյ պարոն վաճառականի հակերը կրելու: Նա արիւն քրանքի մէջ կորած բեռներ էր որ տանում էր և միւնոյն ժամանակ ճանապարհին միշտ կրկնում կրած բեռների

հաշիւր. երբ բեռների հաշիւն էր միտը բերում, ստանալիք փողի գումարն էր իսկոյն և եթ զրընդ զրընդ ափումը տեսնում, և այդ ինչպէս ողելից խմիչք թոյլ ոյժերն էր գրգռում, հետևաբար՝ ըստ երեսոյթին հեռանում էր դադրածութիւնը և մնացած հակերի կրելը աւելի ուրախութիւն էր քան տանջանք:

Ժամի չորսն էր: Քամին նւազել էր. այժմ փոշին էլ կոպտաբար չէր վարւում, միանգամից անակնկալ հոփի անում ու խփում մարդու աչք ու երեսին, այլ ինչպէս մի կատարեալ նոր լուսաւորութեան հետեւղ տիկին կամացուկ, քնքշիկ, ահազին տիւրնիւրով բարեւ էր տալիս անցնողին, և անխտիր հարստին ու աղքատին, մեծին ու փոքրին, հակառակ պարագանդէների վարչութեան խստօրէն հաստատւած հանդէներին՝ առաջարկում պարելու և միւնոյն ժականոններին՝ առաջարկում պարելու և միւնոյն ժամանակ հովհարով զովացնում և մաղով անցկացրած փոշին, ոչ թէ աւազը, աչքերին ու միրուքին խփում: Թողնում էր տիկինը ասպետին, և շտապում էր գրիշին գրիել, որովհետեւ զամբըթաթախ ջրաղացուրիշին գրիել, որովհետեւ զամբըթաթախ ջրաղաց պանի էր աւելի նմանում, քան պարահանդիսում զարդարւած երիտասարդի:

Ահա այսպէս փոշին նստել էր. փողոցների սև կոլորիկ քարերը տնկել էին իրանց մաքուր գլուխները. փոշին տեղ տեղ տների ու լիկների անկիւնները. փոշին տեղ տեղ տների ու լիկների անկիւնները.

Ներումն էր կուտակւել։ Ասպարեզը սաստանու քամուն էր մնացել. նա էլ սկսեց կամաց կամաց, սաստիացաւ, ցատկեց մի ուրիշ աւելի փոշու տեղ, ուր պարզւած էին երկու շիկահեր արհեստաւորներ, ոլորւեցաւ, վեր բարձրացաւ՝ թղթի կտորտանքն ու փոշին ոլոր-մոլոր խաղացնելով դոցա զլուխների վերայ։

— Հիւանդ են այս ընկած մարդիկը տեսնես՝ թէ՞ քնած, հարցրեց Կարապետը իւր մօտ եղողից, մի կարեկցական հայեացք գցելով դոցա վերայ։

— Ասես թէ քնած լինին։

Անգեղակոթցիք դեռ այդտեղ էին՝ երբ դուրս եկաւ մօտիկ գինետնից ոչխարի եփած գլուխը ձեռին այդ ընկածների ընկերը. նա ոչխարի գլուխը կը քարձելով, ծուռ ու մուռ անելով, գնացող եկողին հայհոցելով մօտեցաւ ընկածներին և սկսեց ճուխտ ճուխտ խօսել։

— Իւա՞ն, ա'յ յիմար Ի-Իւան (մի խայտառակ հայհոյանք աւելացնելով), ահա բե-բերել եմ, քո քո սի-սիրելի կերակուրը։

Ասում է, կրծում, կողքին ու մշջքին ոտով խփում; Իւանը մի փոքր շարժւեցաւ և իւր սովորական արիւն ու մարմին դարձած հայհոյանքը բերանից հանեց: Կանգնածը դրանով չը բաւականացաւ, պարզւածի վերայ ընկաւ, ձեռքից չը տալով ոչխարի գլուխը. չարչարւում էր Իւանը, խրխռում, հայհոյում էր, բայց նա ոչինչ ուշադրութիւն չէր

դարձնում, կրծում էր գլուխը և երբեմն պոկած մաից ընկածի բերանը կոխում: Երկար չը մնաց այդպիս, երեկի անհանդիստ էր այդ գրութեան մէջ, ինքն էլ վեր ընկաւ. երկումն էին՝ երեք դարձան։

— Կարապետ, հարբած են է՛, տեսնում ես, կիրակի օր է, երեկի ուրախութիւն են անում, բայց տեսնես ի՞նչ աղգից են, լիզուները հայի չէ։

— Հարբածի լեզուն չի իմացւի, նրանց լեզուն գիր տարած, շփոթով այրած է, այժմ նոքաճուխտ ճուխտ են խօսում, պատասխանեց Կարապետը։

Անգեղակոթցիք հեռացան այդուղից և սկսեցին դարձեալ աննպատակ մանդալ։

Է.

Ժամի վեցն էր, որ Աղաջանը, քրտինքի մէջ կորած, երեսը չէնց իմանաս ցեխաթաթախ, մազերն ու վիզը մի մատ փոշիով ծածկւած, ներկայացաւ վաճառականին՝ կրած հակերի վարձը ստանալու։ Չը կար վաճառականը. երեկի դեռ չէր բարեհաճում դուրս գալ կամ ներս կանչել մշակին. բայց ի՞նչ, միթէ մշակի սուրբ պարտականութիւնը չէ սպասելու, թէկ քրտնած, ջուր կտրած կանգնած է հիւսիսային քամու դիմաց, մինչեւ պարոն վաճառականը մի ժամանակ կը ցիշէ կամ չի ցիշի, կը տայ վարձը կամ չի տայ՝ ասելով առաւօտը գայ։

Աղաջանը սպասում էր. հիմա է, մի ժամից

յետոյ է՝ իւր վարձը կը ստանայ. բայց կանչող չը կայ:
Մտնէ՞ր ներս, մտածում էր. բայց ինչպէս փորձւած
մշակ, լեզուն կծած, ձայնը փորը գցած ապասում էր
պարոնի երևան գալուն:

«Բաւական փող պիտի ստանամ, 15 հակ եմ
կրել. քիչը քիչը մէկը երկու կոպէկից հաշւելու
լինի՝ այդ կը լինի քեզ երեսուն կոպէկ, բայց եթէ մի
կոպէկից հաշւելու լինի, այն ժամանակ կէսը կը
լինի. ի՞նչ եմ ասում, մի՞թէ այդքան էլ անաս-
տուած կարող է լինել մի տարիքն առած մարդ։
Դէ՛ լաւ, ճարս ի՞նչ, այն ժամանակ ես էլ քսան
կոպէկ կ'ուզեմ»։

Ապուշի պէս կանգնած էր Աղաջանը. քամին
սկզբում հովացրեց նորա ջերմ մարմինը, բայց յետոյ
հաստ կեղտի շերտով ծածկւած շապիկն ու արխա-
լուղը սառցրեց և կոթ գարձրեց, այնպէս որ մարմինն
կպշելիս սրսում էր ողջ մարմինը։ «Մթնում է թէ
լուսանում, կարծես, մի ձայն այն ժամանակ ազ-
դարարեց. ի՞նչ ես կանգնել անասունի պէս, ողոր-
մութիւն խօ՛ չես ուզում, քո արդար աշխատանքի
վարձն ես ստանում, մտի՛ր, ստացի՛ր և փասափուսէդ
քաշի՛ր քամու առաջից։ Նա, ճիշդ է, մտաւ բայց
չուզենալով, որովհետեւ այդ տեսակ մշակներին երես
առած են համարում և նրանց էլ միւս անդամ գործ
չեն տալիս։

— Հը՛, ի՞նչ կայ, գորդուալով գարձաւ պարոնը.
չե՞ս տեսնում ձեռքիս գործ կայ, չե՞ս կարող մի քիչ

սպասել. օ՛հ, սիսիանցի մշակնե՛ր, լաւ է սատանին
պարտական լինեմ քան թէ ձեզ, որ մարդ կարողա-
նայ սրանց երեսը չը տեսնէ է, վերջացրեց իւր խօսքը
ձեռքի գրիչը բարկացած սեղանի վերայ նետելով։

Աղաջանը ձայն ու ծալտունը կտրած յետ յետ
դուրս գնաց քթի տակ մրժմրժալով։

«Ասր չէի ուզում գնալ, ի՞նչ յիմարութիւն
արի; չէի կարո՞ղ մի քիչ սպասել, ինքը դուրս կը
գար և լաւ կը վարձատրէր, այժմ բարկացրի, երեխ
հաշիւը սխալացրի, պիտի կէս վարձը տայ. տեղն է
ինձ, ասա երբ ես այդպէս բան բռնել, որ այժմ
բռնում ես. բայց նա այնքան որ խօսեց, հա՛, չէր
կարո՞ղ փողը տար, ճանապարհ գցէր. է՛հ, էլի սա-
տանի մտքեր եկան գլուխս, այդ ինչ իմ գիտնալու
բան է, ինչպէս նա ցանկանում է, այնպէս էլ պիտի
լինի, ախր ուրիշ տեսակ ո՞նց կարելի է»։

Զէր անցել մի քառորդ ժամ, որ դուրս եկաւ
հաստափոր վաճառականը և մի սպիտակ երեք շա-
հանոց դրաւ Աղաջանի ձեռքը։ Վերջինս երեք շա-
հանոցը տեսնելով, կարծես, տաս և հինգ հակի
արած ծանրութիւնը այդ բոպէին զգաց։

— Նա՛տ քիչ է, համեստ կերպով ասաց և
պարզեց ձեռքի երեքշահանոցը դէպի վաճառականը.
տաս և հինգ հակ եմ կրել, երկու կոպէկից էլ չէք
հաշւում, ուրիշներից մէկին երեք, չորս կոպէկ եմ
առնում։

— Ուրիշները այդպէս փող են գտել էլի, որ դու-

մի հակ դնես մէջքիդ, այստեղից ուրիշ տեղ տանելու համար երեք, չորս կոպէկ ստանաս: Ի՞նչ ես յետ տալիս, չես ամաչըւմ, այդ էլ նոր սովորութիւն է, օ՛հ, օ՛հ, լաւ է ձեզ հետ միշտ գործ չ'ունինք, թէ չէ էլ ոչ հաւատ, ոչ հոգի կը թողնէք մեր մէջ:

— Զէ՛, պարոն Զախար'ր, փողը վերցրէ՛ք, ձեզ համար տասն և հինգ հակը ինչ է, որ ձրի չը կը եմ: Ճշմարիտ, փող չեմ ուզում:

Աղաջանը երկու ծալրայեղութիւններից դուրս ուրիշ մի միջին ճանապարհը տանջանք էր համարում, ցանկանում էր անպատճառ իւր ուզած երեսուն կոպէկ ստանալ կամ թէ ոչինչ: Փողը տւաւ պարոնին, նա էլ վերցրեց բարկանալով. «Նատ ես խօսում, դէ կորի՛, էշ գիւղացի՛, փոշմանած կը գաս վաղը, տասը կոպէկ էլ չես ստանալ: Եղբա՛ց, խօսացնել չի լինում էլի սրանց. մեր փողը բոլորը սրանց ջիբերն է մտնում, էլի գանգատաւոր գանգատաւոր. տալիս ես գործը, առանց խօսելու, ասում ես՝ դէ հայ է, մի հինգ կոպէկ էլ աւելի կը տամ, էլ ինչ առաջուց խօսեմ, չանայ թակեմ. 10 կոպէկ կը տացի անպատճառ՝ եթէ խօսացնէի, ախր ինչո՞ւ յիմարութիւն եմ անում, երես տալիս, որ աստառ էլ ուզեն. բա ա'փսոս իմ 5 կոպէկներ, որ այդ սիսիանցիքն են տարել: Հենց այժմ, որպէս զի իմ սիսալը ուղղած և ինձ համար սովորութիւն շինած լինիմ, ա՛ռ այս երկու շահին:

Երեքշահանոցը արդէն առել ջէրն էր գրել: Հանեց երկու մեծ մեծ սե շահիներ, մէկի երեսը չեչոս, իսկ միւսի կողքը պոատ և մեկնեց Աղաջանին, որ մի քանի քայլ հեռացել էր:

— Ճշմարիտ, պ. Զախար'ր, հանաք չեմ անում, ձրի եմ կրել ես հակերը, ինձ փող չի հարկաւոր, ասաց ու գնաց քթի տակ մրթմրթալով. — տա՛ր մածնի տուր, քսի՛ր գլուխդ, դորանով էլ փողատէր չենք դառնալու. շասը շատի մօտ է գնում, սա զարմանալի չէ, բայց քիչն էլ է շատի մօտ գնում, ա՛յ սա է զարմանալի:

— Գնա՛, աւանա՛կ, կարծում է յետ պիտի կանչեմ, աղաչեմ, չէ մի ոսե՛ր, ու կոպէկին էլ խօ'սք կայ այսուհետեւ. բանը սա է, մէկն էլ տեսնի՝ կը կարծէ վարձը կարել եմ. հիմա կը գնաց այս-այնտեղ չաւ կանէ, սուտ սուտ լաց լինելով՝ «ա՛յ փողս կտրեց, փողս կերաւ էս ինչ մարդը». դէ դու ե՛կ էշը ցիսիցը հանի՛ր, խղճացի՛ր, մի 5 կոպէկ աւել տո՛ւր ինչպէս հայ մշակի: Զէ՛, այդ անիծածներին այնքան փող պիտի տալ, որ հազիւ հազ կարողանան օրւայ հացը ճարել, թէ չէ որ փորները հացոտ է լինում; Ջիբներում կոպէկի չխկոց են լսում, էլ իրանց մշակ չեն համարում: Ճամանակիս ո՞վ է կարողանում փող աշխատել, իսկ այդ գայլագուաւները աշխատում հաշխատում են: Տասը կոպէկ... ո՛րքան պիտի կանգնեմ և քանի գազ պիտի չափեմ, որ տասը կոպէկ աշխատես: Ժամ ու կէսում 10 կոպէկ է աշխատում,

բաւական չէ. եթէ հաշւելու լինինք օրեկան 12
ժամ աշխատանք, տե՛ս որքա՞ն փող կ'աշխատի.
և սկսեց քթի տակ հաշւել, տասներկու ժամ այդ
քեզ երեք աբասի, տասը կոպէկը կ'ուտէ և մնացածը
կը պահէ և ամսական 15 մանեթ փող կ'ունենայ;
15 մանէթ... էշ գիւղացին ի՞նչ է, որ իւր ցիմար
տեղովը գայ քաղաք և այսքան փող աշխատի և
մեր տւած փողով շը բաւականանայ; Դէ կորէ՛ք, էշ
գիւղացինե՛ր, այսուհետև կը տեսնէք — այսպէս վեր-
ջացրեց խօսքը, կարծես թէ դիմացը կանգնած էին
սիսիանցի մշակները:

Բ.

Աննպատակ պտտում էին մեր պանդուխտ սի-
սիանցիք. նոքա չ'ունէին այն ուրախ տրամադրու-
թիւնն ու դէմքը, ինչ որ առաւօտն էր, մի տեսակ
թոյլ, թոշնած, թառամած, ոտները քաշ տալով, փո-
շիաթաթախ անցնում էին փողոցից փողոց, աւելի
ցանկանալով մի տեղ նատել հանգտանալ, քան թէ
նոր նոր բաներ տեսնել քաղաքում: Որտեղից որտեղ,
այդ գրութեան մէջ գարձեալ պատահեցան թուրք
պահապանին. ցած եկան իսկոյն և եթ լրիկից և
իրանց ճանապարհը շարունակեցին, իսկ թուրքը
կանգնեց և դրցա յետելիցն էր նայում թէ ո՞ւր են
գնում: Երբ անգեղակոթցիք լայն փողոցից նեղ փո-
ղոց մտան, թուրքը հետեւեց դոցա: Մի քանի քայլ

էր մնացել նոցա հասնելու, յանկարծ կանչեց ճշող
ձայնով՝ «կանգնեցէ՛ք»: Բոլորեքեանք միանգամից յետ
նայեցին մատածելով՝ «աեմնես ի՞նչ կայ»:

— Ո՞րտեղացի էք, հարցրեց թուրք քեալբա-
լային:

— Սիսիանցի:

— Լաւ, բայց ո՞ւր են ձեր անցաթղթերը, հա-
նէ՛ք տեսնեմ:

Ծոցերից և գրաններից թաշկինակ էր, որ
դուրս էր գալիս փաթաթած անցաթղթերով: Մէկը
չ'ունէր, մնացել էր վիզը ծուռ կանգնած:

— Փոնն ո՞ւր է. դու փախստական ես, մարակը
բարձրացնելով, թո՛ղ ընկերներիդ. ոչինչ չի լինի, մի՛
վախիր, մի քանի տարի բանտումը կը նատես, այ-
նուհետև ձեռք ու ոտք կապած կ'ուղարկեն. զէ
շուտ ընկերներից ջոկե՛ր. հանաք չեմ անում,
չե՞ս լսում. և մարակը վրայ բերաւ որ խփի, բայց
շը կպաւ:

Ստեփանը շրմունքները կծոսում էր, պինդ ու-
նէր մահակը ձեռքումը բռնած, առաջ եկաւ և
խօսքով էր ուզումնրան ճանապարհ դցել:

— Ո՞ւր ես տանում դրան, ո՞վ է փախստական.
սա մեր գիւղացին է, անցաթուղթը շուտով պիտի
գայ:

— Ոչո՛, բարի լո՛յս, տանուտէրի վկան դզերը կը
լինի ի հարկէ. համարձակուում ես գեռ խօսելու, մի
տեսնեմ քո անցաթուղթը: Բաց անել տալով սկսեց

նայել, իբր թէ կարդում է: Քո անցաթուղթը
կեղծ է, տուր այստեղ և դու էլ ճանապարհ
ընկի՛ր:

— Ոնց թէ կեղծ է, մեր գաւառապետիցն եմ
ստացել մի 5, 6 մանէթ ծախսի մէջ ընկնելով:

— Ի՞նչ ես դուրս տալիս, այս քեզ հրա-
մայում եմ ճանապարհ ընկի՛ր. դուք էլ, ձերն էլ է
կեղծ, ցոյց տալով մի հինգ հոգու և մորակով սկսեց
սպառնալ:

Արիւնը Ստեփանի աչքերը կոխեց, մի ակըն-
թարթում վրայ վազեց և երկաթի ափումն էր մո-
րակը բոնած սե, չոր ձեռքը, և եթէ Մկրտիչը, որ
տարիքը առած մարդ էր, ահ ու դողի մէջ ընկած,
չը գար, չը խնդրէր բաց թողնելու, ոսկորը կը ջարդ-
էր, կը փշրւէր ափի մէջ:

Ստեփանը երբ բաց թողեց, թուրքը աւելի
կատաղած սկսեց դոցահետ խօսել: Մկրտիչը ընկած
դուրս եկած մարդ էր, յետ մնաց և թուրքի լեզու
բանեցրեց:

— Բարեկամ, իմ աչքի լո՛յս, մենք հեռու տե-
ղից ենք եկած, ինչո՞ւ ես մեզ վնաս տալիս, խընդ-
րում ենք ներես, բաց թողնես մենք գնանք, չէ՞ որ
մենք էլ մարդ ենք, քո լաւութիւնը չենք մոռանայ,
առանձին շեշտելով վերջի խօսքերը:

— Զէ, բարեկամ-մարեկամ չը կայ, օրէնքը
բարեկամ չի ճանաչում, օրէնքը անցաթուղթ չ'ու-
նեցողներին պատժում է, իսկ այնպիսիները, ցոյց

տալով Ստեփանին, որոնք համարձակւում են մեզ
վերաց ձեռք բարձրացնել՝ կախ տալ:

— Բարեկամ, դու լաւ մարդ ես երևում, արի՛
դու այս անգամ ների՛ր, մենք քեզ կը շահենք
փոխարէնը:

Հէնց թուրքն էլ դորան էր սպասում:

— Դէ լաւ, բերէք տեսնեմ, եռանկիւնի աչքե-
րով այս և այն կողմը նայելով:

— Մարդը մի երկու շահի հանեցէք կպցնենք
ճակատին, ձեռք քաշի կորչի, ասաց Մկրտիչը:

Աւ փողը հանեցին:

— Այդ ինչ է, աև փո՞ղ էք հանում, երեխայ էք
խաբո՞ւմ, կարծում էք ձեր տանուտէրին կամ զզրին
էք տալիս. թուղթ հանեցէք, թուղթ, խելքներդ
ո՞րտեղ է. քաղաքումն էք և ոչ թէ գիւղումը:

— Քեալբալայի՛, ջանիդ մեռնեմ, եկ գու բաշխի՛ր
այս անգամ, թուղթ մանէթ մեզ ո՞րտեղից է, դեռ
ոչինչ չենք աշխատել, հէնց այսօր ենք եկել այստեղ:

— Դէ շուտ արէք, ես այդ տեսակ բաներ չը
գիտեմ. ուզում էք հէնց բանտումը փոք՛ք:

Նորա կասկածոտ, վախկոտ խոզի աչքերը հեռուն
էին նայում, նկատեց եկորներ և շտապեցրեց շուտով
տալ:

— Դէ լաւ, մի մի շահի էլ հանեցէք, մեր
քեալբալայի սիրու մի՛ կոտրէք, ասաց Մկրտիչը:

Այդպէս էլ արին. թուրքը շուտով առաւ, կրնկին
թքեց, հեռացաւ:

— Կա՛ւ տարաւ մեր փողը, այս ու այնտեղից
ձայն տւին ափսոսալով:

— Նուն մարդ է, ի՞նչ պիտի անես, պատաս-
խանեց Մկրտիչը, չես տալ՝ բանս կը նստացնի: Ստե-
փա՞ն, դու էլ կարծում ես մեր տեղն ես, որ այդ-
պէս բաներ ես անում, Բագու կ'ասեն սրան հա՛:

ԹՌ.

— Այդ ո՞րտեղ գնացիր, Աղաջա՞ն, Հարցրին
անդեղակոթցիք, երբ պատահմամբ հանդիպեցին
նրան:

— Գործս շատ էր, չը կարողացայ շուտով վեր-
ջացնել. դէ բաւական է, որքան ման էք եկել, գնա՞նք,
յոդնած կը լինէք, մի քիչ հանգստացէք:

Մութը գետինն էր առել, քամին բոլորովին
դադրել, երկինքը պարզել և նոր-նոր սկսել էր աստ-
ղերը դուրս դալ, երբ Աղաջանը՝ համագիւղացի-
ների հետ միասին՝ մտաւ թուրքի քարւանսարան:

Տեղաւորեցան բոլորեքեանք. դոցանից ոչ մէկն
էլ ախորժակ չ'ունէր խօսելու: Պանդուխտները
տխուր էին՝ Աղաջանի վիճակը տեսնելով, բացի այդ՝
թուրք պահապանին աւելորդ փող տալով: Աղա-
ջանը նոյնակէս տխուր էր այդ օրւայ դէպքից. առևն
անգամ ցիշելով այրուում, խորովւում էր, լաւ գիտէր
որ էլ կորաւ, ձեռքից ընկաւ համարեա մի օրւայ
վարձը:

Նստոտել էին գետնափոր սենեակում, որը թիկն
էր տւել պատին, որը ուներն էր պարզել, մի քա-
նիսը նստած հէնց տեղները ննջում էին, զլուխ-
ները ցած ու բարձր անելով: Թիթեղեայ փոքրիկ
կեղտոտ լամբարը աղօտ լոյս էր սփոռում այդ
խոնջացած, վաստակած և սիրտները կոտրած բնու-
թեան որդիկերանց վերայ. աղօտ լոյսիցը տեսանելիք-
ները միջնելով, սիրտները սեւացել և աւելի ու
աւելի էր կատրել, այնպէս որ չէին ուզում ոչ մտա-
ծել, ոչ խօսել, ոչ ուտել, այլ այնպէս, առանց հան-
ւելու ընկնել, քնել և վաղւան կարգադրութեան
թողնել ամեն բան:

Աղաջանը ամուսնացած մարդ էր, ունէր որ-
դիք, ունէր հայր ու մայր: Նատ ժամանակ էր ինչ
տեղեկութիւն չ'ունէր անից, յարմար ժամանակ գրա-
նելով սկսեց հարց ու փորձ անել: Նա սպասում
էր մի ապապիճնքի, մի զոյտ գուլբայի, բայց ոչ
մէկն էլ չը կար: «Երեւի մի բան եղել է»—մտածում
էր Աղաջանը:

— Էլ ինչու էք ծածկում, ի՞նչ է պատահել մեր
տանը, այնպիսի մի եղանակով հարցրեց Աղաջանը,
որ լսողները գուշակեցին նորա ներքին վիճակը:

— Ոչինչ չի եղել, փառք Աստուծոյ, ի՞նչ պիտի
լինի, պատասխանեց Մկրտիչը:

— Զէ, մի՛ խաբէք, մի բան կայ:

— Վա՛, ախր ի՞նչ պիտի լինի, բոլորն էլ
տանը ողջ և առողջ են և բարեւ են արել:

— է՛հ, ասում ես էլի, ասաց մի խոր հոգոց
քաշելով։

Աղաջանը նոցա խօսալու եղանակից և իրար
նայելուց մի բան հասկացաւ. «Հօրս կամ մօրս
զլուխը մի բան է եկել, եթէ հայրս մեռած լինի,
Տէր մի՛ արացէ. այն ժամանակ տունը առանց գտա-
կաւորի ի՞նչպէս կը կառավարւի, մտածում էր Աղա-
ջանը։

— Էլ ծածկելու տեղը չէ, ասացէ՛ք, վերջը չը
պիտի իմանա՞մ, ասաց ու աչքերը ցառեց գետնին։
Մտածողութեամբ զիւղումն էր. ինչե՛ր չէր անցնում
նորա մտքով՝ հօր մահը, որդկերանց, կնոջ ու մօր
անել դրութիւնը. այս բոլորը կենդանի պատկերնե-
րով ներկայացան նորա աչքի առաջ և եթէ լամ-
բարը պարզ լուսաւորէր, կը տեսնէին անշուշտ իւր
համագիւղացիները նորա նիհար, փոշիով ծածկւած
դէմքի վերայ արտասուքի կաթիլների ակօսած տե-
ղերը։

Մկրտիչը էլ ոչինչ չը կարողացաւ ասել, արտա-
սուքի կաթիլները նորա աչքերումն էլ սկսեցին շարժ-
ել։ «Ասեմ, չ'ասեմ, մտածում էր նա, ասելը լաւ
է, որ վաղը հէնց գնայ իւր երեխաներին տէրու-
թիւն անի. բայց ի՞նչպէս ասեմ, խեղճ է. չէ,
սկէ՛տք է ասել։»

— Ասուածանից միիթարւես, դէ էլ ի՞նչ ծած-
կեմ, հայրդ վախճանւել է. Ասուած հոգին լուսա-
ւորի, Ասուած քո երեխաներին խեղճ գայ, քեզ պահի։

Սրտաճմլիկ էր տեսարանը. վաստակած Աղա-
ջանը էլ չ'իմացաւ ինչպէս պայտ կանչելով ու
լաց լինելով զլուխը համետի վերայ դրաւ։ Յաւակ-
ցում էին անկեղծ սրտերը, տան պատերը, առաս-
տաղը, մանաւանդ լամբարը մռայլ էին ինչպէս ի-
րանց հիւրերը, կարծես նոքա էլ լալիս էին։ Զայն-
ձուն չը կար, Աղաջանը քնել էր. խորթոցը թնդեց-
նում էր սենեակը։ Գիւղացիք անշարժ քարի
արձան էին կտրել, աչքերը Աղաջանից չէին հե-
ռացնում։

«Վա՛յ ապէր, վա՛յ ապէր», յանկարծ ձայնը
բարձրացրեց և սկսեց լալ ու ամենքին էլ լացացնել։

Լռութիւնը կրկին տիրեց։ Աղաջանը խոր
քնել էր։

— Տղա՛յք, ասաց Մկրտիչը լացակումած, մի քիչ
հաց ուտենք, վէր դառնանք քնենք։

Հացը կերան և առանց հանւելու գետնի վե-
րայ վէր թափւեցան և քնեցին։

Ժ.

«Ո՛ւհ, ողջ մարմինս ասես վշրւած լինի»,
շշնչաց Ստեփանը քթի տակ յօրանջելով ու ձգձգւե-
լով, երբ արթնեցաւ։ Նորա ընկերները դեռ աջ ու
ձախ պարզւած, քնած էին. դրանցից մի քանիսը
շշշրջւելով զլորւել իրար վերայ էին թափւել,
որ աւելի դիակների էին նմանում, քան թէ քնած
մարդկանց։ Հերոսը խոցւած սրտով նայեց իւր ըն-

կեր զօրականներին և հէնց բունես նորա մռացլ դէմքը, քնաթաթախ աչքերը ասում լինէին. «Յաղթեցինք, տիրապետեցինք քաղաքը, բայց մենք էլ պատերազմի դաշտումը ընկանք». իսկ անհոգ, հանգիստ քնածները ասես թէ իրանց ահեղազոչ խորթոցով պատասխանում էին. «Այս՝ քա՛ջդ Սիւնեաց աշխարհի, յաղթեցինք, տիրապետեցինք, բայց մենք դեռ կենդանի ենք և պատերազմի դաշտում անդուլ անդադար պիտի գործենք»:

Ստեփանը քնաթաթախ տնդըհորած դուրս գնաց մի քանիսի ոտերը կոխոտելով:

Եռայրի քառակուսի քարւանսարան կատարեալ բանտի էր նմանում: Վերը միան բաց էր և երկում էր կապուտակը քառակուսի շրջանակում: Օդը գարշահոսութեամբ էր ծծւած: Խոնաւ գետնի մի անկիւնում յարդով լիքը արկղներ, արկղիկներ էր դարսուած, միւս կողմը երկաթի ձողեր, մի այլ տեղ տախտակներ ու հակեր, իսկ մի անկիւնում աղբն էր կուտակած: Յիսունի մօտ սիսիանցի մշակը, կզկզւած սպիտակախառն, ծխաթաթախ մազերով, նիհար դէմքով, որի վերաց տեղ-տեղ երկում էր թուփակ թուփակ կաժուկի պէս կծկւած մազեր, կրակ էր գցում կուչ ու ձիգ անելով՝ հակառակ պատի տակ դրւած մի քանի սեացած, ժանգուտած, կողքերը նիճճկած, եռոտանի, երկոտանի, ծորակների տակը խմորած ու կլացակած հեշտաեռներ:

Ստեփանը յօրանջելով մօտեցաւ Պետրոսին,

այսպէս էր մշակի անունը, բարեւ տալուց և հետը մի քիչ զրուցելուց յետոյ, ջուր խնդրեց լացւելու: Բագուայ աղի-լեղի, պղտոր ջուրը գւարթացրեց նորա տիսուր դէմքը, մէջքը պատին տւած, զլուխը կրծքին խոնարհած, ինչպէս մի յոռետես, մելամաղձալին մտածմունքների անձնատուր եղաւ:

«Ես մշակութիւն պիտի անե՞մ, ասաց Ստեփանը մի սարսուռ զգալով ամբողջ մարմնում: «Քա ի՞նչ... վերադառնա՞մ զիւղը... ի՞նչ կ'ասեն ինձ. չէ՛, չէ՛, կը մնամ ինչ որ էլ լինի»:

Սրեւ ծագել էր, երբ անգեղակոթցիք քնաթաթախ նպառու աչքերով, տնդըհորած դուրս եկան մէկ մէկու յետեւից: Ի՞նչ կ'ուզենային գիւղի ազգեիւրը իրանց առաջը ունենալ, մի կռանալ վճիտ ջրի վերաց, իրանց պատկերները տեսնելով չոմի-չոմի տալ երեսներին. բայց աւա՛զ, նա հեռու էր, նա իրանց գիւղումն էր: Նոքա պատոնդուրս կանգնած ամենայն հետաքրքրութեամբ նպառում էին պատերին, պատուհաններին ու հեշտաեռներին:

Դուրս եկաւ և Աղաջանը՝ աչքերը արիւնով լցւած ու ուռած: Նա մի գիշերւաց մէջ մեծ փոփոխութիւն էր կրել, կարծես, աւելի էր չորացել ու փորը մէջքին կաել, դէմքը աւելի նիհարել ու ացտոսկրները դուրս ցցւել: Այս և այն կողմից իւր ընկեր մշակները եկան միսիթարանը ասացին, սիրտ դրին:

— Աստուածանից միսիթարւես, զարձաւ Պետ-

րոսը, ամենքս էլ պիտի մեռնենք, ո՞վ պիտի մնայ այս աշխարհքում, ծնւել ենք, որ մեռնենք, դեռ բաղդաւոր ես, որ հայրդ ծերացած է մեռնում:

Աղաջանը ոչինչ չը խօսեց, աշքերը գետնին յառած անթարթ նայում էր:

— Տիրութիւնը ձեռք չի տալ, Աղաջա՞ն, շարունակեց Պետրոսը, հայրդ ծերացած մարդ էր, ծերը ի՞նչ ունի աշքի առաջ—միայն մահ, և որքան շուտ է վերահանում այդ քաղցր մահը, այնքան էլ շուտով է ազատում այս ունայն աշխարհից և ճաշակում երջանկութիւնը. նրանցը այն միւս փեանքն է. նոքա ուրախ են, երբ Գաբրիէլ հրեշտակի սուրն են տեսնում: — Նատ սառնասիրս և վատահ կերպով զրուցելով մօտեցաւ հեշտաեռներին, ակը տւաւ, կրկին եկաւ Աղաջանի մօտ:

— Աղաջա՞ն, ինչպէս տեսնում եմ պիտի գիւղը գնաս անպատճառ, տունը անտէր անտիրական թողնել չի լինի:

Այս խօսքերից ցնցւած պատասխանեց Աղաջանը խռպոտ ձայնով.

— Գնալլ հեշտ է:

— Ի՞նչ կայ որ. բա առանց տղամարդի ի՞նչպէս կը լինի, քո վար ու ցանքը ո՞վ պիտի անի, դու էլ զիտես, որ ժամանակիս հեշտութեամբ չեն իրար օգնում:

— Պետրոս, ի՞նչպէս գնամ, ի՞նչ ունիմ, որ գնամ, եղած չեղածը սորանորա մօտն է. չէ, աւելի

լաւ է փող կուղարկեմ, այնտեղ իրանք կը կառավարւեն, մինչև որ Աստուած ողորմած է:

— Երեխացի պէս ես խօսում, անողամարդ տունը, որքան էլ որ լիութեան մէջ լինի, գարձեալ տան նմանութիւն չի ունենալ. էլ այսուհետեւ քեզ մշակութիւն անելը չի բռնիլ, հայրդ քանի որ կենդանի էր, հա, արժէր որ դու այստեղ աշխատէիր, բայց այժմ չէ: Տան մեծը դու ես. անմեծաւոր տունը անսիւն տան է նմանում, որ ամեն րոպէ պատրաստ է փլւելու: Աւելի լաւ է քո վարն անես, քո երեխաներին տէրութիւն անես, քան այստեղից փող ուղարկես:

— Ճիշդն ասեմ, սիրոս չի տալիս գիւղը գնալ. հէսց այս րոպէին էլ աչքիս առաջն է գալիս՝ թէ ի՞նչ կը լինի վիճակս, երբ մի օր մշակութիւն չ'անեմ:

— Օրհնեւած, վարելլ, հնձելլ, կալսելլ մշակութիւն չէ. հէսց պէտք է մէջքիդ ահագին բեռնես, քրտինքը ծլծլալով ման դա՞ս:

— Ղորդ ես ասում, նա էլ մշակութիւն է և աւելի հանգիստ, բայց այստեղի առաւելութիւնը շօշափելի է, այստեղ աշխատելուց դրապանս փող է տեսնում, իսկ այնտեղ ո՞վ է մեր ցորենին փող տւողը. իսկ մեզ հարկաւոր է փող և այդ էլ քաղաքներումն է:

— Դու էլ ես զորդ ասում, բայց որ հանգամանքներդ չեն ներում, աւելի շուտ փողից պէտք է ձեռք քաշես, քան թէ տնից. բայց քո գիտնալու բանն է, դու գիտես, լաւ մոածի՛ր:

Պետրոսը միշտ սովորութիւն ունէր խորհուրդ տալուց յետոց այս խօսքերը ասել մոտածելով՝ «բան է, ասածս արաւ, մի փորձանքի հանդիպեց և զորա պատճառը ես կը լինի»:

Աղաջանը մինչև կէսօր գործի չը գնաց. հաստատ վճռեց տուն չը գնալ, փող ուղարկել:

Աղաջանի ընկերներից Խոսրովը դարձաւ նորեկ համագիւղացիներին. «Ինչ էք նստոտել, դուրս զանք գործի, աշխատանքի ժամանակ է, բայց համետ չ'ունէք, պէտք է գնել, այ' իմին պէս, թէ չէ առանց այդ բեռ շալակել չի լինի»:

Ստեփանի վիճակը անտանելի էր. «Համետո խօսքը, որքան որ հեշտ արտասանեց Խոսրովը, այնքան ծանր, մի սարի ծանրութեամբ ճնշեց Ստեփանին, և ոչինչ չ'ասաց, տխուր տրտում ոտները քաշ տալով հետեւց հայրենակցին»:

Գիւղացիները իրանց սիրելի մահակները թողեցին և համեաները կոնակները առան։ Համեաները խանի պէս բազմած գիւղացիների լայն մէջքերին կարծես ասում լինէին. «Ի՞նչ լայն ու փափուկ է մեր բազմոցները, բայց աւա՛ղ, կ'անցնի մի քանի տարի և չոր ու ցամաք սակորների վերաց կը շնթռկենք»։

Խոսրովը ցոյց էր տալիս այն փողոցները, որտեղ գործ շատ էր լինում. երբ անցան մի ուրիշ փողոց շեշտելով ասաց. «Այսուեղ աղբ շատ է լինում, այստեղ էլ աչքից չը պիտի տաք»։

«Աղբ» խօսքը որ չը լսեց Ստեփանը, համետը, որ զեռ ձեռին էր, դէն գցեց գժւածի պէս և արհամարհանքով սկսեց նայել մէկ համետին, մէկ Խոսրովին։ Մնաց կանգնած. մնացածները Խոսրովի հետ միասին առաջ էին անցել։

«Ներիք չէ համետը մէջքիս եմ գնում, դեռ աղբ էլ պիտի շալակե՞մ. և այն վիթխարի հսկան մնաց. կուչ եկած համետի առաջ կանգնած։ «Բայց չէ՛, կը մնամ ինչ էլ որ լինի, թէկուզ աղբ չը լինի, ինչ էլ լինի կը շալակեմ, կը մնամ այսուեղ և զիւղը չեմ գնալ, թքածս չեմ լիղիլ»։ Այսպէս խօսելով մօտեցաւ, համեալ ձեռքն առաւ և հետեւց խմբին։

— Ստեփան, ինչո՞ւ չես կոնակդ անցնում համետդ, ա՛յ այսուեղ շատ գործ է լինում, ասաց Խոսրովը։

— Ե՛հ, ինչ անցնեմ։

— Տեսնում եմ, Ստեփան, որ փոշմանածի նման ես այսուեղ գալով, մի՛ տխրիր, ինձ էլ սկրզբում մշակութիւնը վատ էր երեւում, բայց այժմ սովորել եմ. թէկ շարչարւում, շան տանջանք եմ քաշում, բայց ձեռք չեմ վերցնիլ։ Պէտք է մի քիչ համբերել, քաղաքի հետ ծանօթանալ. սկզբում, ի հարկէ, աշխատանք քիչ կը լինի, բայց յետոց, որ լաւ ծանօթացար, ջուր տո՛ւր, քշի՛ր։

Ստեփանը, Խոսրովի ասածին իւր խելքումը տեղ տալով, սուս ու փուս համետը կոնակն անցրաւ։ Համետը բարձրից նայելով իւր ընկեր հա-

մետներին, հէնց գիտենասս պարծենալով ասում լինէր. Առնա՛կ, կռնա՛կ սա է է՛, փափուկ, լայն ու ձիգ, լող եմ տալիս վրան»:

ԺԱ.

Անգեղակոթցի երիտասարդ ու տղամարդ, որը նախանձից դրդւած, որը ընդհանուր հոսանքին մատնած և վերջապէս որը պարտքերից ազատելու համար, Բագու գնալով մեծ նեղութեան մէջ էին թողել իրանց աները: Համարեա ամեն տուն ամեն տեսակ զրկանք, նեղութիւն վիզն էր առել և տոկունութեամբ տանում էր ասելով. «Մի կերպ կառավարւենք, Աստուած ողորմած է, խօ միշտ այսպէս չը պիտի լինինք. կ'անցնի երկու զատիկ՝ մեր տղան մեծ կարողութեամբ կը գայ...»: Այսպէս հայ գիւղացին զրկանքով բեռնաւորւած՝ ներկան ուրախութեամբ զոհում էր լիութեամբ ու բարիքով բեռնաւորւած ապադային:

Ստեփանի տունը առ այժմ ոչ մի բանի պակաս սութիւն չ'ունէր: Թագուհին թէւ, ինչպէս կի՞ն, երեակացութեամբ էր ապրում և ամենայն օր իւր կանացի յեղեղուկ մտածողութիւնը աւելի պարզ, որոշ գոյներով էր ստեղծագործում իւր դարպաները, բայց այնու ամենայնիւ սրտով սիրած ամուսնուն մտքից չէր հեռացնում: Նա շատ անգամ վրձինը ձեռքին, երբ ներկերի խառնուրդի մէջ էր

թաթախում հոյակապ դարպաները ներկելու, յանկարծ որ միտք չէր գալիս իւր սիրելի ամուսինը՝ ձեռը թուլանում, վրձինը վեր էր ընկնում և բազմացարկ գիւղական ճաշակով զարդարւած պալատը աներեւոյթանում, ձեռները պարզում էր դէպի Ստեփանը, որ կենդանի աչքի առջևն էր երեւում և կարծես մժութեան մէջ խարիսափում էր անգիտակցաբար, բայց խարձւած տեսնելով սթափւում և ընկըզմւում էր տիսրութեան մէջ. գլուխը խնարհած բարակ, քաղցր ձայնով, բայաժու տիսուր եղանակով քինթկալի տակից սրտի զգացմունքն էր գեղգեղում և արցունքները երկար թերթերունքների ծացրից այտերի վրացով զլորւելով քինթկալն էր թանում: Երգն ու արցունքը, ինչպէս զեղթափ, ազդում էին Թագուհու սրտին. թոռ-արև սիրոց երկար տիսուր չէր մնում. նա մոածում էր. «Ախ, իմ սիրելի մարդը ինձ որքա՞ն է սիրում, որ թողել է տունը, հեռու հեռու երկիրներ է զնացել փող աշխատելու, որպէս զի մեր կեանքը լաւացնի, գիւղացի չը լինինք, լաւ ապրենք...»: Եւ սրանից յետոյ ոսկեձեղուն դարպասը դարձեալ պատկերանում էր աչքերին և վրձինը ձեռին ներկում էր մեծ աշխատժով և ճարտար հմտութեամբ:

Ստեփանի բացակայութեամբ եթէ մի բան փոփոխութեան չէր ենթարկեել՝ այդ երեխաներն էին. նրանց համար հայրը եղած չ'եղած միւնոցն էր, քանի որ իրանց հօր գրկում չէին նստել, բազուկ-

ներին թառ եղել և համբոյրներին սակաւ էին արժանացել: Իրանց մայրն էր, որի հետ սերտ սիրով կապւած էին, իսկ հօր հետ այնպէս էին ինչպէս մի օտարականի:

Բագուն դեռ ևս չը տեսնողները, նորա ծարւով առողությները գնացին և դեռ շարունակ շաբաթ չէր անցնում, որ Բագու տանող ճանապարհի վերաց սեին չը տան պանդուխտ գնացողների խումբը կուռնկների նման, որոնք չւում են ուրախութեամբ դէպի առաք երկիրներ. իսկ տեսնողները գիւղում երկար չը մնացին, չը կարողացան գիւղական կեանքը տանել, պանդուխտի պարկերը շալակները առնելով՝ շտապեցին դէպի Բագու իրանց համեսների կարօտով վառւած:

Սաքանը մնաց գիւղումը: Նա Բագուից բերած փերեղակի ապրանքը ըութիւնած ման էր ածում տնից տռւն և կանաչը ու աղջիկներ, որոնք ցորենը փող չէին համարում, առատ առատ տալիս էին մի ասդի, մի գնդասդի, մի սանրի, մի կանթած կեղծ ոսկու և հազար տեսակ զիզի-բիզի բաների, որ կանանց աչքը շատ է սիրում: Սաքանը կանանց խաբելու, շոյելու, շողբքորթելու և իրան բարի ցոյց տալու մէջ ունէր մեծ ճարպիկութիւն. Նա լաւ գիտէր ում հետ որդիական հնագանդութեամբ պիտի խօսէր՝ իւր շահը ձեռքից չը տալով, ում հետ ընկերաբար, ում հետ իշխանաբար և ում հետ սորկաբար:

Սաքանը, ինչպէս խօսք էր տւել, Ստեփանի

տանը կատարեալ տանսէր դարձաւ. շաբաթ չէր անցնում, որ մի քանի անգամ չը գնար Թագուհու մօտ և պակասութիւնները չը հարցնէր: Թագուհին թէեւ ուրախացաւ երբ իմացաւ, որ Ստեփանից յետոյ անտէր անտիրական չի մնալու, բայց այժմ Սաքանի ներկայութիւնից քաշում էր. Սաքանը երբ գալիս էր, ինքը դիտմամբ մի բան էր գտնում, ներս ու գուրս անում կամ թէ չէ աղջիկներին մօախց չէր հեռացնում. նստած տեղը, կարծես, ցաքի փշերի վերաց էր լինում նստած, բոպէններն էր համարում թէ երբ պիտի նա գուրս գայ: Սաքանը թէւ կնքահացը էր, բայց այնու ամենայնիւ Թագուհին քաշում էր և աչքը միշտ զրանն էր պահում թէ այս է որտեղ որի է մէկը գոնովը ներս պիտի մտնի. մտածում էր. «Աստուած շանի եկող լինի, ի՞նչ կ'ասեն: Նա սկի չէր կասկածում Սաքանի ազնւութեան և բարութեան վերաց, բայց որ չը պսակւած տղամարդ է, իսկ ինքն էլ երիտասարդ կին է, դա տեղիք էր տալիս հասարակաց աչքով նայել ինդրին:»

Սաքանը, ինչպէս ասացինք, Ստեփանի գնալուց յետոյ շատ անգամ էր Թագուհուն տեսութեան գնացել, բայց առանց իւր մանր-մունրի. մի օր մոքումը դիեց, որ ապրանքը մի տանի Թագուհուն ցոյց տայ. այդպէս էլ արաւ:

— Սանամէր, առւն մտնելուն պէս բերանը բացաւ Սաքանը, ախր չես ասում սովորաքեար ես դարձել, Սէրդի՛, ինչո՛ւ մի օրից մի օր Բագուից իրիդ առած

ապրանքդ չես բերում մի մենք էլ տեսնենք. ա'խ,
սանամէ՛ր, լափ խեղճ ես, իմ օրումն կերած-կորած.
ուրիշները՝ ծանօթ, անծանօթները տանել են տալիս,
տեսնում են, քրքրում են, քեզ ի'նչ է եկել, որ
օխուր բարեկամից էլ աւել ենք: Դէ էլ մի՛ քաշւի.
է՛հ, ինչ ես վեր կացել, նստի՛, նստի՛ ա՛. նորահարս
չես, որ չես խօսում ինձ հետ, հերիք է թողի՛ր
այդ սովորութիւնը, ես օտար չեմ հո՞ւ:

Սաքանը այսպէս խօսելով իւր ունեցած չու-
նեցածը հանեց, աչքների առաջը դրաւ: Թագուհին
և աղջկերքը աչքները չորս արած մի առարկայից
միւսն էին դարձնում, ուզում էին միանգամից ամեն
ինչ տեսած լինել: Սաքանը, ճիշդ է, գովում էր իւր
ապրանքը, բայց աչքերը չէր հեռացնում Թագուհու
աչքերից, աչքերով ուզում էր թէ ուտի:

— Դէ, սանամէ՛ր, էլ մի՛ քաշւիր, ինչ սիրով
ուզում է քեզ համար, աղջկերանցդ համար, սրան
սրան՝ այս փափլիկի համար վերցո՛ւր. աչքս չը կպչի,
բոլորն էլ քեզ են եկել, ի'նչ սիրուն են, հէնց են
հրեշտակի ճոեր լինին: Փողի համար սկի մի՛ մոտ-
ծիր, վա՛յ թէ մոռքովդ փող-բան անցկացնես, իմա-
ցած կացիր որ էլ ոչ ես ոչ դու, ձեր դոներով էլ
չեմ անցնի, հասկացա՞ր. և մի պղնձի խաչ
հանեց, աղջիկներին տւաւ աւելացնելով. խելքս
գնացել է սրանց վերաց, ի'նչպէս գեղեցիկ են,
ճշմարիտ, սանամէ՛ր, բոլորն էլ քեզ են եկել:

Թագուհին հիացաւ Սաքանի պարզաբանու-

թեան վերաց: Ինչ լաւ մարդ է եղել մեր կնքա-
հայրը, մտածում էր նա, բայց ինչպէս ասեմ՝ այս
տուր, այն տուր, շատ բան է հարկաւոր:

— Դէ էլ ի'նչ ես մտածում, ինչ որ հարկաւոր
է ասա՛:

— Դէ, կնքահէ՛ր, մի հացելի, մի սանր, մի
քանի հատ ասեղ, գնդասեղ տո՛ւր, զար-զօռով, ա-
մաշելով ասաց Թագուհին:

— Հէնց ա'յդ, ինչ ես այդպէս քիչ վերցնում.
տեսնում եմ ամաչում ես, շատ բանի հարկաւորու-
թիւն կ'ունենաս, ասելով ուզածները և ուրիշ բա-
ներ վերցրեց և Թագուհուն տեց:

— Դէ, կնքահէ՛ր, չը նեղանաս, դրանց գները
ասա՛, ցորենը չափեմ տամ:

— Դէ ասա ուզում ես, որ ձեր դոները էլ չը
կոխեմ էլի, ինչպէս երեւում է դու զեռ ինձ լաւ չես
ճանաչում: այս անդամ, սանամէ՛ր, քեզ բախչում
եմ, բայց որ մէկ էլ բերանիցդ հանել ես՝ իմացած
կացիր ձեր դոներով էլ չեմ անցնիլ:

— Դու ես իմանում, բայց հաշիւլ պահի՛ր, որ ինքը
(Ստեփանը) Բագուից գալուց միանգամից բոլորը տայ:

— Ելի. հաշիւս ո'րն է. ի'նչ ես ասում չեմ ի-
մանում. կնիկը ի'նչ է, հաշիւների մէջ մտնելը ի'նչ.
իմ ու Ստեփանի մէջ ի'նչ հաշիւներ պիտի լինի:
Ինչպէս Ստեփանը՝ ինչ որ առնում, ծախում էր ոչ
մի ձայն ծալտուն չէիր հանում, այնպէս էլ այժմ
չը պիտի հանես, ասելով դուրս գնաց:

«Տասն և հինգ կոպէկ արժէք բոլորը, մոտածում էր Սաքանը ճանապարհին, այդովնէ միայն կարողանամ ձեռք դցել. բայց ի՞նչ կտորն է... Նա ինձ սիրում է անպատճառ և ո՛վ չի սիրի ինձ, իրանց մարդկանց պէս վար անող ու տաւար պահող զիւդացի չեմ հո՞ւ, սովորաբեա'ր եմ, սովորաբեա'ր: Բայց ի՞նչպէս ես դրան խելքից տանեմ. ինչ եմ ասում, զեռ նոր պիտի խելքից տանեմ: մի քիչ առաջ աչքը աչքս էր դցել նայում, փա՛հ, փա՛հ, ի՞նչ սիրուն աչքեր ունի, ջէցրան մարալի աչքեր լինի ասես... Ստեփանը, դըմբօ Ստեփանը, գնաց բագու, թող գնաց մի քիչ էլ նա մաշտի տանջւի. տանը ոչ ոք չը կայ, մենակ ինքն է ու ինքը, մօտ բարեկամ էլ ոչ ոք չը կայ, որ քթի մազութիւն անի. բանս բան է»: — Այսպէս կիսատ-պուատ խօսելով գտակը ծուռը զրած մոտաւ ուրիշ բակ:

Իսկ Թագուհին Սաքանի թողած տպաւորութեան տակից դուրս չ'եկաւ. Սաքանը մի բարի հրեշտակ երևեցաւ նորա աչքերին, որ զիտէ օգնել զիտէ վարւել, քիթը ցցած չը նայել իրանց՝ զիւդացիների վերայ: Նա այնքան էր յափշտակւել Սաքանի քաղցր լեզուով և արած բարութիւններով, որ ընկեր-հարեաններին էլ ասաց՝ թէ ի՞նչպէս Սաքանը գնում գալիս է, պակասութիւնները հարցնում և ինչ որ հարկաւոր է լինում տալիս է:

ԺԲ.

Զմեռւայ օր էր. գորշ ամսկերով ծածկւած երկնակամարը ասես կապարի ծանրութեամբ ճնշում էր քաղաքը: Հիւսիսային չոր սաստկաշունչ քամին՝ աչեղագոչ վշելով՝ ձինի հատիկները փետուրի պէս ոլոր-մոլոր խաղացնում էր և ապա պատերին, հեռագրական սիւներին ու լապտերներին խփում, կպցնում:

Մշակի օր չէր: Նրանք՝ թուրք, պարսիկ՝ թուիս ու կեղասոս գէմքով, խուզած կոշտ ընչացքով և բաց կրծքով հացթուխների և խաշեփողների խանութների պատի տակ լքչան լրիկի վերաց պալքած՝ զրընդ-զրընդ գողգողում էին: Գործ չ'ունեին, անգործութիւնից մրսում էին. բեռան կամ արևի բացւելուն էին սպասում, բայց ոչ այս կար և ոչ այն: Թուրք չացչին, որ հոտը վեր առած շան նման զոցա հազար մի չարչարանքով ու տանջանքով հաւաքած ու կոպէկների յետևիցն էր ման գալիս ամենայն օր, ճարեց որսը: Ճարպիկ վարպետ չաչու յօնքերը յետ գնացին, ուրախ ուրախ ձեռքի կալայակած կոլոր ինքնաեռը ցած զրաւ և գօտիկ վերաց կապած արկղից փոքրիկ բաժակը հանեց կապոյտ ծաղկաւոր, ճաքճաքուած բաժակակալի հետ և առանց մի որ և է տեղից պատեր սաւանալու, «փա՛հ փա՛հ» անելով, մի բաժակ թէյ պատրաստեց: «Ի՞նչ թէյ է, վերլի սօրթ, Փօփօվ է», գովում էր ու

խսում ընչացքը ծծելով։ Մշակների ախորժակը գըրդը զըռեց։ սլլնկի տաք ջուր էր, որ ածում ու համեցէք էր անում պղղած մշակներին։ Մշակները թէջ խմելիս մեծ ախորժակով էին նայում տաք տաք լաւաշներին, որ հացթուխները թուրից հանել և շորի պէս թառ էին տւել խանութների առջևից, բայց միւնոյն ժամանակ մտածում էին՝ «տաք հացը մարդու փոր չի կշտացնիլ, շատ կ'ուտւի, թող մի քիչ էլ հովանայ»։

Թուրք փինաչիները իրանց տեղը լաւ ճարել էին. երեք, չորս փինաչի՝ հացթուխների ու խաշեփողների խանութների մօտը նատոտած՝ այս ու այնտեղից ծակ տրեխ ու լապչին էր, որ ստանում էին։

Թուրք սափրիչն էլ մշակների տեղը գիտէր. նա ածելին սրելով գոտիից կախ պսպղուն կաշւի վերայ՝ մօտեցաւ դոցաւ Վարպետ սափրիչի ցաքհասի աջ ու ձախ վրայ բերելուց մերկանում էր ցաքապատ, խորդ ու բորդ սարահարթը. պրծնում էր մեկի գլուխը, դեղին հայելին խսկոյն տալիս էր նրան իւր պատկերով զմայլելու և սե փողը պատրաստելու, մինչեւ որ մի ուրիշի զլուխը կամ երեսը կը սափրի կռան տակը գցած։

Խաշեփողների աչքը ջուր կտրւեց. նրանք հանել էին պղնձից ոչխարի եփած ոտ ու գլուխը և ափսէի վերայ ճաշակով կուտակել։ Գոլորշին բարձրանում և հոռը մշակների քթներին էր դիպչում. բոլորի բերնի ջուրն էր գնում, բայց չին ուզում

աւելորդ փող ծախսել, քանի որ անգործ նստած էին. նոքա լաւ գիտէին, թէ երբ պէտք է գնել այդ իրանց համեղ, կիրակնօրեաց կիրակուրը։ Խաշեփողն էլ չայցու պէս արաւ. ոչխարի գլխից մի կտոր մորթի պոկեց, ձեռքերը լպատելով, չմիշմիացնելով կերաւ նոցա դիմաց։ Մշակները, ճիշդ է, շաղի քները կուլ տւին, բայց դարձեալ չը մօտեցան։

Դոցանից մի քիչ վեր առանձին նստոտած էին իրանց համետների վերայ տասը հոգի հայ մշակներ։ Դոցանից մի երեք, չորս էին, որ կարելի էր ասել թէ հայ էին դէմքով, իսկ մնացածները եթէ խառը մնէին նստոտած թալիշների ու թրքերի հետ՝ դժւար թէ կարելի լինէր զանազանել նոցա ազգութիւնները։ Դոքա էլ գործ չ'ունէին, քամու ձեռքից պատի տակն էին կուչ եկել, ատամ ատամի սիփում, սըրթսըրթում։ Զայչին հայ մշակներին աչքաթող չ'արաւ։ Խաշը նոքա էլ էին տեսնում և նոցա բերանների ջուրն էլ էր գնում, մանաւանդ նորեկների, բայց մի հզօր տնտես ձեռք արդելում էր գոցա այդ ցրտին կուշտ ուտել՝ ազդարարելով։ «Ձեռքդ տա՛ր գրպանդ, տե՛ս նոր սե փող եկաւ՝ տասանորդը փորիդ տո՛ւր, եթէ ոչ, մոռացի՛ր քաղցդ և ձրի օդ կուլ տուր»։

Հայ մշակների մշն էր Ստեփանը։ Երկու ամիս էր անցել այն օրից, երբ նա համետը անվճռաբար կոնակն առաւ, սկզբում—առաջի շաբաթում վարանման մէջ էր ընկնում, մէկ ուզում էր տուն

գնալ, մէկ հաստատապէս ասում էր՝ «չեմ գնայ
ինչ էլ որ լինի», իսկ մի շաբթից յետոյ՝ հաշտւելով
իւր բաղդի հետ՝ լայն մջքը կուպրաւ, անձկուն
վիզը ծռեց, իւր ընկեր մահակը թողեց փոշուելու,
պարանն առաւ ձեռքը: Այդ օրւանից նորա հպարտ
ու անկեղծ աչքերը ոչինչ չէին ուղում տեսնել, բայց
միայն սև կոպէիները: Թակարդի մէջ ընկաւ. փողը
քաղցրացրաւ նորա ստոր պաշտօնը, մոքից չը տալով
ապագայ օլաւ ամրելլու և կնոջ խոստացածները: Նա
ստանում էր օրեկան 30—50 կոպէկ. ցամաք հացով
էր ապրում և դորան տւած փողն էլ կորած էր
համարում, որովհետև թանկ ու կրակ էր նորա հա-
մար հացը և բացի այդ իրանց հացի համն ու հոտը
չուներ:

Երկու ամիսը ընտանիքում մեծացած ամուսնա-
ցած մարդու համար մեծ ժամանակամիջոց է: Սկզբ-
քում Ստեփանը թէե շատ քիչ էր յիշում ամուս-
նուն, բայց յետոյ ուշք ու միտքը գիւղումն էր,
կարծես մի բան կորցրած, ցրւած ու ապուշ էր ե-
րկուում: Յիշելով իրանց երջանիկ ամուսնական կեան-
քը ուղում էր թէեր առնի, թռչի դէպի գիւղը, մի
բոպէ տեսնի իւր սիրելի կողակցին և յետոյ կրկնն
վերադառնայ, իւր սև կոպէիները ժողովի: Տանջւում
էր, աղքատիկ ապրուսոր մի կողմից, չարքաշ կեանքը
միւս և անցեալ երջանիկ կենցաղավարութեան իրա-
կանանալու փափազը մի երրորդ կողմից՝ նրան հալ
ու մաշ անել էին սկսել: Փոխւել էր. լիքը թշերին,

ապիտակ փայլուն ճակատին, և վառվուն աչքերին
չարքաշ կեանքի և մելամաղձութեան վրձինը թեթև
կերպով անց էր կացել:

—Այսօր, տեսնում է՞ք, դործ չը կայ, լուռ-
թիւնը խանգարեց Եղիան:

—Դեռ ոչինչ չեմ վերցրել, ժամի տամներկուսը
շուտով կը խփեն:

—Մենք էլ ոչինչ չենք վերցրել, ձայն տւին
այս և այն կողմից:

—Այսօր, ինչպէս երկում է, ոչինչ չը պիտի
աշխատենք, աւելացրաւ Ստեփանը:

—Աստուած է իմանում, տեսնենք, վրայ բերաւ
կողքի նստածը:

Այս խօսակցութեան ժամանակն էր, որ դրանց
առաջով անցկացաւ մեր ծանօթ պարոն Զախարը:
Նա ամբողջ մարմնով շուռ եկաւ, չը կարողանալով
հաստ վիզը ծռել և Ստեփանին ձեռքով արաւ:
Ստեփանը ծլունկ եղաւ տեղից, հետն էլ մօտի նրա-
տածները:

—Հը, ի՞նչ է, ի՞նչ նորութիւն, մարդ չէք կուլ
տալու խօ, ես սրան կանչեցի, ցոյց տալով Ստեփա-
նին, տեղներդ շնթռկեցէք, նախատեց պ. Զախարը:

—Աղա՛յ, բա իմ հաշիւը չէ՞ք վերջացնում,
զարձառ վախվախելով Աղաջանը:

—Ի՞նչ հաշիւ է: Հաշիւս ո՞րն է, ասես ինձ
համար բանկի զբէքտօր է, հաշիւ է պահան-
ջում:

Այն օրը որ ձեզ համար 15 հակ ապրանք կրեցի, նորա փողը մնաց:

— Ի՞նչ է ասում, զիմ ես, գլխիդ ձի է քացի տւել, ինչ է. գնա՛, գնա՛, ինչպէս երևում է գլխովդ քամի է անցել:

— Աղա՛յ, ախր...

— Դէ կորի՛, էշ գիւղացի՛, ինչ ես զլուխս տանում. այնքան եղանք, որ քո տասնև հինգ կոպէկը չը կարողացանք տալ:

Աղաջանը ճարահատեալ լեզուն կծած յետ դարձաւ: Պ. Զախարը յիշեց, որ պարտք է մնացել, բայց այն տեսակ ձեւ տւաւ, որ Աղաջանը ինքը անգամ քիչ մնաց կասկածի:

— Հա, անունդ ի՞նչ է, հարցրաւ Ստեփանին:

— Քեզ ծառայ Ստեփան:

— Լաւ, Ստեփան, ես քեզ տեսնում եմ, որ քաջ և սրտոտ կը լինես և բացի դրանից հաւատարիմ, դորա համար ուզում եմ քեզ մի գիշերապահութեան պաշտօն տալ:

— Ծառադ եմ ի՞նչ խօսք, ինչպէս հրամայում էք, պատասխանեց Ստեփանը բոլորովին անկեղծ կերպով:

— Հա, դէ որ այդպէս է խօսենք ամսով. ամիսը ի՞նչ կ'առնես:

— Աղա՛յ, դէ ես ինչ իմանամ, զուք ասացէ՛ք: Ստեփանի մաքով այդ բոպէին ի՞նչեր չեր անցնում. և լաւ պատահեց. բաղդս բացւել է. էլ մշակ

չեմ լինի. լաւ մարդ է երկում, ինձ հաւանեց. լաւ փող կը տայս:

— Դէ լաւ, որ ինձ ես թողնում, ես այնպէս ոռոճիկ կը տամ, որ խղճով լինի: Ես քեզ կը տամ եօթը մանէթ:

«Եօթը մանէթ, մտածում էր Ստեփանը, օրը 25 կոպէկ էլ չի գալիս, ցերեկները երկպատիկն եմ վերցնում և գիշերները քնում, գիշերները անքուն պիտի մնամ 20-23 կոպէկի համար. չէ, իմ ուղածը չ'եղաւ:

— Հը, կը մնա՞ս; լաւ փող է, ձեռքիցդ կ'ընկնի հա՛:

— Նատ քիչ է, աղա՛յ:

— Տուն էլ եմ տալիս:

— Աղա՛յ, ճիշդն ասած, ձեռք չի տալ. մշկութեամբ աւելի ենք աշխատում:

— Օրհնւած, էլի մշակութիւնդ արա՛, ձեռքդ բռնողը ո՞վ է. քեզ համար այդ եօթ մանէթը համարեա գտած է. Հը, էլի չը հասկացա՞ր. դէ որ այդպէս է մի մանէթ էլ եմ աւելացնում. դէ էլ չը խօսես, ուրիշին չէի տալ:

«Ճիշդ է ասում, մտածում էր Ստեփանը, այս ութ մանէթը համարեա գտած է. գիշերը գիշերապահութիւն կ'անեմ, իսկ ցերեկը մշակութիւն»

— Լաւ, ձեր ասածը լինի. կը գամի

— Այժմ ասեմ քո պարտականութիւնը. գիշերը ժամի եօթից մինչև ժամի վեցը առաւօտեան պիտի

Հսկես ա'յ այս փողոցը, երբէք չը պիտի քնես: Լաւ, սա հեշտ բան է, խօսք չը կայ. յետոյ ցերեկները պիտի մեր բակը և փողոցը միշտ մաքուր պահես. Հաւաքած ազբը շալակով կրես: Այս սրանք են, տեսնում ես՝ ոչինչ չը կայ. Հա, կարող է պատահել՝ շառ, իսկ մի բան պատահեցաւ՝ մի տեղ գնալու, մի արկղ շալակելու խանութը տանելու, սրանք էլ կ'անես ի հարկէ. ի զուր է մինչև անզամ այս տեսակ ծրտի-պրտի բաները ցիշեցնել: Այս, ցոյց տալով ներքնայարկում խոր ընկած մի դուռ, երբ խօսելով մեծ դռնով մտան բակը, այդ էլ քո սենեակը կը լինի, գնա՛ շորերդ բեր և խանի պէս կ'ասլրես:

Ստեփանը համաձայնւեց և եղաւ գիշերապահ. դարձեալ իւր ընկեր սիրելի մահակը ուրախ ուրախ ձեռն առաւ:

ԺՊ.

Պարզնկաց գիշեր էր: Զիւնը ազօտ սպիտակին էր տալիս փողոցների վերաց: Լոռութիւն էր տիրած, միայն երբեմն կառքերի խուլ դղրդոցն էր լուսում հեռու տեղերից: Մթութեան մեջ սեին էր տալիս մի մարդ, որ ունէր մի ձեռին հասապլուխ մահակ, իսկ միւսում՝ չխչխան: Պարթե էր նորա հասակը. ցրտին գէմ էր տւել իւր լայն կուրծքը և կարծես սառը քամին կաշելիս յետ յետ էր գնում տաքացած: Նա պատում էր փողոցի երկարութիւնը և երբեմն ձեռքի չխչխանը չխչխացնում: Անցաւ

բաւականին ժամանակ, կարծես ձանձրացած պատեղուց կոնակը տւաւ պատին և արձանացտծ սկսեց նայել երկնքին: Լուսինը երկեցաւ պարզ երկնակամարի վերաց և այդ ազօտ լոյսի տակ Ստեփանն ինքն էր գիշերապահի պաշտօնով:

Նայում էր լուսին և ինչե՛ր չէր անցնում մոքովը. իւր երիտասարդութիւնից՝ լուսնի հետ զուգորդած՝ ինչե՛ր չէր ցիշում: Անքթիթ լուսին նայելով, կարծես, նրանից ուղում էր տեղեկութիւն հարցնել իւր հեռաւոր տան մասին: Լուսինը վեր էր բարձրանում լուռ ու մունջ, իսկ Ստեփանը աչքերով հետեւում էր տիսուր ու տրտում: «Ես լինէի լուսնի տեղ այդ բարձրութիւնից անպատճառ կը տեմնէի մեր տունը... այժմ անուշ քնոյ քնած կը լինին... Ել ոչինչ չը կարողացաւ ասել, տիսուր աչքերը գետնին զցեց և անդիտակցաբար ձեռքի շխչխանը շարժեց:

Հարեւան վողոցից մի ուրիշ չխչխոց ևս լսեցաւ և չ'անցաւ մի քանի վայրկեան վողոցի գլխին երկեցաւ մեր ծանօթ Աղաջանը: Դոքա մօտեցան իրար, որ գոնէ խօսակցութեամբ հեռացնեն քունը և մոռանան ցուրտը:

—Այս գիշեր շատ ցուրտ է, Ստեփան, խօսք բաց արաւ Աղաջանը:

—Հա, որովհետեւ պարզնկաց է:

—Ինչպէս երկեռմ է չես մրսում, որ այդպէս պատն ի վեր կանգնել էիր:

— Զէ, այնքան էլ քո ասած չեմ մրտում: —Ստեփան, լաւ չենք անում, մի մաղալից բանից ունենացինք, լաւ կը լինէր: —Ե՛հ, սա ինչ ցուրտ է որ:

Սրանց խօսակցութիւնը դադարեց՝ երբ մօտի գինետնից դուրս եկան երկու մարդ և մի կինարմատ: Երեքն էլ կոնծած էին. կինը մէջ տեղները առած, անվայել շարժմունքներով և կեղասոտ խօսքերով, անցան փողոցի երկարութիւնը:

— Ստեփան, տեսնում ես, ինչպէս քէֆ են անում:

— Ինչպէս երեսում է դրանցից մէկի կինն է:

— Զէ, ի՞նչ կին, այս րոպէին էլի յետ կը դառնայ զինետուն:

— Բա ի՞նչպէս է այս մթին անից դուրս եկել անձանօթ մարդկանց հետ:

— Վա դեռ չը գիտե՞ս, նա մարդ չ'ունի, նորաքան ու գործը դա է: Եւ սկսեց՝ ծիծաղելով Ստեփանի տգիտութեան վերայ՝ մի առ մի, պարզորշ նկարագրել այդ տեսակ կանանց դերը:

Այս խօսակցութեան ժամանակն էր, որ կինը վերադարձաւ: Աղաջանը յետեից կանչեց.

— Աղջի, ո՞ւր ես գնում: Վերջի նախադասութիւնը աղաւաղած ռուսերէն ասաց, իսկ աղջիք բառը հայերէն:

— Աղա՛, քեզ ի՞նչ, պատասխանեց կինը: — Ինչ ես խօսում այդ լրութիւն, թող

մի կորչի է՛, իսկոյն վրայ բերաւ Ստեփանը: — Դու էլ ինձ համար վարդապետ ես դարձ՞լ: — Ամօթ է ամօթ, մեզ չի սազի աղպիսիների հետ խօսել:

— Աղա՛, մրտում ես, ասաց կինը և մտաւ գինետունը:

— Ստեփան, արի՛ գնանք մարդը մի բաժակ օղի խմենք:

— Զէ, չեմ ուզում:

— Հէնց ես իմանում նորա համար եմ ասում, որ նա այնտեղ է՛:

— Հէնց այնտեղ էլ չը լինի էլի չեմ ուզում:

— Ե՛հ, Ստեփան, լաւ տղայ չես, ինչ որ ասում եմ հակառակում ես, դու լաւ մուղղուսացու ես:

Ստեփանը մնացել էր զարմացած՝ թէ ինչպէս մի տարիքը առած ամուսնացած մարդ աչք է դնում մի լիրք, փչացած կնկայ: Աշխատեց հեռանալ նրանից, չը լսել նորա խօսակցութիւնը այդ տեսակ կանանց և իւր գործած լրութեան մասին, բայց չ'եղաւ. ուր գնաց՝ նա էլ հետեւեց, ուզում էր Ստեփանին էլ հետը տանի զինետուն, որ կարողանաց նորա գրաւանից մի քանի կոպէկ պոկ տայ:

— Զէ, չեմ ուզում, կեանկցումն զինետուն մտած չը կամ և չեմ էլ մտնելու, եթէ դու էլ մտնում ես շատ լիմարութիւն ես անում, քեզ ի՞նչ կը սազի աղպիսի բաներ անել, դու մշակ մարդ ես:

— Վա՛, հէնց որ մշակ եմ չը պիտի անեմ,

դու շատ խամ ես երեսում, նոր ես զեռ, մի քանի տարի կ'անցնի, քո ասածները երբ քեզ կ'ասեմ, քեզ վերայ դու էլ կը ծիծաղես:

— Ուզում է հէնց քսան տարի էլ անցնի, ինչ որ կամ՝ կամ:

— Ես էլ այդպէս էի ասում սկզբում, բայց յետոյ տեսայ որ չի լինում, սկսեցի ուրիշների ճանապարհով գնալ. ինչ մեղադրելու բան է:

— Բա սկի միտդ չի գալիս, որ դու կնիկ արած ես:

— Նատ հարկաւոր է թէ կնիկ արած եմ. կինս գիւղութն է, իսկ ես այսուեղ:

— Այդ ինչե՞ր ես ասում, տօ մի լաւ մտածիր ինչ ես ասում է՞: Մեղք է մեղք. էլ ինչո՞ւ ես ասպում, քեզ նման տղամարդ սկի տեսած չեմ կեանքումն, մարդ որ ամուսնանում է, էլ նորա աչքերը միայն իւր կինն է տեսնում, հասկանո՞ւմ ես:

— Ճշմարիտ, մեր գիւղի քահանաներից մէկը վախճանեւէ այս քանի օրը, եկ դու գնա՛ այնուեղ քահանայ եղիր, դու մշակացու չես, ես մեռնեմ թէ մեր քահանան կարողանայ այդպիսի խրատներ տալ:

— Ծիծաղի՞ր, վնաս չը կայ: Հա, եկ մի լաւ մտածենք. դու որ այդպէս ես մտածում, եթէ, Տէր մի՛ արասցէ, քո կինն էլ քեզ պէս մտածի՝ ինչ կ'անես:

— Ինչ պէտք է անեմ, երեխայ ես, կը սպա-

նեմ, էլ ինչ պէտք է անեմ: Է՛հ, ինչ ես երեխայ երեխայ խօսում, չես գալիս՝ ես գնում եմ, ասելով քայլերը ուղղեց դէպի գինետունը: Դուռը բանալիս վերջի անդամն էլ կանչեց Ստեփանին, բայց տեսաւ որ ականջ չի գնում, ներս մտաւ:

— Աղա՛, էլի եկա՞ր. մի բաժակ օղիի հիւրասիրի՛, աղա՛, դարձաւ կինը մշակին:

— Աղջի՛, այս բովէին:

— Լա՛ւ տղայ է թէկ մշակ. դէ եկ այստեղ նստի՞ր:

Աղաջանը կողքին նստեց:

Կնոջ հագուստը, դէմքը պարզ ցոյց էին տալիս, որ ստոր դասակարգի համար էր ստեղծւած: Նորա կէս կարմրած, կէս կապտած, զէպի վեր ցցւած քիթը, կապտած ու ուռած ներքին կոպերը տալիս էին պշտիկներով ծածկւած ալլանդակ դէմքին մի գժոխային պատկիր:

Ստեփանը թէկ սկզբում ուշադրութիւն ըլ գարձնելով պտտում էր անդաղար չխչխկացնելով և շշվացնելով, երբեմն էլ թուրքերէն երգելով, բայց վերջը երբ անցաւ հակառակ լրիկը, հետաքրքրութիւնը շարժեց և սկսեց նայել գինետան դրան ճեղքերով: Հէնց որ Աղաջանի արարմնաքը տեսաւ լիրբ կնոջ հետ, թքեց ու հետացաւ այդտեղից: «Թի՛ւ, թի՛ւ, այդ տեսակ էլ լրբութիւն կը լինի. անունն էլ տղամարդ է զրել»:

Այդ ժամանակ, կարծես, մի ուրիշ ձայն նրան

պատասխանեց. «Քանի տարի է տանից տեղից հեռացել է, ինչ անի խեղճը: Եւ նա սկսեց ուրիշ տեսակ մտածել. էլ այնքան ստոր չէր երևում նորա աչքին Աղաջանը, էլ այնքան չէր պախարակում նորա արարմունքը: Հեռացան մի քիչ առաջ ասածները և թանձր մշուշով պատեց գլուխը: Երեակալութեամբ ապրել էլ չը կարողացաւ. կարծես ոտերը առանց հրամանի ուզում էին ուղղել դէպի գինետունը:

Աղաջանը դուրս եկաւ կոնծած այն ժամանակը, երբ Ստեփանը ծռւել էր միւս փողոցը: Նա չը կարողանալով ոտի վերաց կանգնել, քունը աչքերը կոխեց և այդ ցրտին կուչ եկաւ իւր աղայի մեծ դրան անկիւնում ու մրափեց: Ստեփանը տեսաւ նրան, բայց չը մօտեցաւ: Դուրս եկաւ և կինը բոլորովին հարբած. Ստեփանին տեսնելով վազեց դէպի նա անվացել շարժւածքներով և «աղա, աղա» անելով: Ստեփանը հեռացաւ նրանից դէս դէն խլըշկոտալով, բայց երբ կինը կրկին մօտեցաւ, ձեռքից բռնեց և գինետունը ցոյց տւաւ, էլ Ստեփանը չի մացաւ ինչպէս գինետունը մտաւ: Միայն նա ուշքի եկաւ, երբ գինետնից դուրս եկաւ. նա դէս դէն նայելով յանկարծ դուրս թռաւ գինետնից, ամօթից ուզում էր գետինը մոնիք, ինքը իրանից ամաչում էր. «Զը լինի տեսնող եղաւ, Աղաջանը այժմ որ ինձ վերաց կը ծիծաղի. Հեռանամ այստեղից: Այս ի՞նչ արի ես, թիւ, Աղաջանն էր մեղաւորը, նա չը պատմէր դրանց

մասին, սկի միսս էլ չէր գալ. էլ այսուհետեւ ե՞ս մտնեմ զինետուն: Զէ, էլ չեմ անի ինչ էլ որ լինի. ես մեղա՛յ Ասոծու: Եւ քիչ մնաց թէ լաց լինի:

Արևելքը սկսել էր շառագունել: Փողոցում էլ չխչսկոց չէր լսում: Ստեփանը մտել էր իւր սենեակը և խոր քնի մէջ ընկղմնել:

Արեւ դուրս եկաւ, քաղաքը կենդանացաւ. կրպակաւորներն ու խանութների գործակատարները բոլորեքեանք ստի վերաց էին, ամեն մէկը շտապում էր իւր գործին: Պ. Զախարի գործակատարներն ևս ոտքի վերաց էին: Նոքա դուրս եկան իրանց սենեակից խանութ գնալու: Նոցանից մէկը մօտեցաւ Ստեփանին և ամուր ձայն տւաւ, բայց նա չը լսեց. երկրորդեց, երրորդեց, բայց նա դարձեալ չը շարժւեց տեղից, խոր քնի մէջ էր: Համբերութիւնը հատած մօտեցաւ և ձեռափայտով սկսեց բիշբիշտել. Ստեփանը այժմ որ ցնցւեցաւ և տեղը նատեց:

— Տօ ի՞նչ է պատահել, այդքան էլ կը քնեն, այնքան բղաւեցի, որ ձայնս կտրւեց: Վեր շուտ արի', մի երկու հակ կաց վերցո՛ւր, գնանք խանութ:

Ստեփանը արդէն հագնւած էր. ոչինչ չը խօսեց, լուռ ու մունջ վեր կացաւ, պարանը ձեռն առաւ մտածելով՝ երեխ շատ եմ քնել:

Ստեփանը հակերը կրելուց յետոյ, երբ ուզեց դուրս գնալ մշակութեան, այժմ էլ պ. Զախարը

Նրան հրամացեց բակի, փռղոցի ձիւնը մաքրել։ Ստե-
փանը առանց զժկամակելու հիմա էլ թին ձեռն
առաւ։

Ստեփանի մտածածը՝ թէ գիշերապահութեան
հետ միասին և մշակութիւն կանի՝ չէր լինում։ Շա-
բաթւայ մի քանի օրը իւր տիրոջ գործն էր ձրի կա-
տարում, ուստի և մշակութեամբ շատ քիչ էր աշ-
խատում և իւր երեակայած տասնհինգ բուբլին չէր
տեսնում։

፭፻፲፻

Անցան ամիսներ, Ստեփանը առանց արտօնվածի
կատարում էր գիշերապահութիւնը, բայց միևնուն
ժամանակ լաւ տեսնում էր, որ իւր ոյժերը կամաց
կամաց սպառում են, աշխատանքն էլ զորա հետ
համեմատած շատ և շատ քիչ է. վճռեց թողնել
այդ պաշտօնը և իրան համար ազատ մշակութիւն
անել, յոյս ունենալով դորանով աւելի վաստակի: Եթե
իւր դիտաւորութիւնը պ. Զախարին յայտնեց, վեր-
ջինս ըստ երեսյթին բարի դէմքով և հայրաբար
դարձաւ դէպի նա.

— Ի զուր ես թողնում մեր տունք. վա՛ռք Աս-
տուծոյ, ի՞նչդ է պակաս, տունդ՝ տուն, ուտելդ՝ ու-
տել, (թէև շատ քիչ էր պատահում, որ իւր խո-
հարարը առանց աղայի հրամանին ծածուկ մի կտոր
հաց կամ կերակրի տականք տար) ոռմիկդ՝ ոռմիկ,

Էլ Ե՞նչ ես ուզում. դուրսը մշակութիւն անելով ո-
չինչ չես աշխատի:

—Աղա՛յ, կը մնացի, եթէ կարողանացի շարունակել, բոլորովին ձեռքից ընկել եմ, այնքան անքուն եմ մնացել: Խոչ անենք, էլի ձերն եմ. Ժամանակ անժամանակ մի գործ պատահած պատրաստ եմ ձեր ծառալութեան:

— Օրհնւած, քունը ինչ է որ մարդուս ձեռքից
զցի, շատ քնողը կը ցիմարանայ. արջերն էլ են շատ
քնում, ինչ են աւելացնում: Բայց դու ցերեկը
քնում են:

—Հենց այդ է, որ մշակութիւնից զրկվում եմ և ամսի տակին տեմնում եմ աշխատածո մի բանչէ:

—Հէնց ես իմանում, որ գիշերապահութիւն
չ'անես, միայն մշակութեան գնաս, դրանից շատ
պիտի աշխատե՞ս. քա՛ւ լիցի. օրւայ հացդ հազիւ-
հազ կարող ես դատել, այն էլ հազար մի նեղու-
թիւնով. այն ինչ այստեղ հանգիստ ստանում ես
ո.ոճիկդ և գիշերը քեզ համար պարապասարապ շրվ-
շվացնելով պտտում:

—Աղա՛յ, ճշմարիտ չեմ կարող, լաւը այն է իմ
հաշիւը տեսնէք, թողնէք ինձ գնամ:

Պ. Զախարը տեսնելով, որ զիմացինք այնքան էլ խաբւողը չի, վարպետ է զարձել, բարկացած ասաց.

—Գնում ես, գնա՛, այն դու՝ այն ճանապարհը, էլ ինձնից ինչու ես հարցնում:

— Բայց հաշիւս տեսէք, դեռ մնում է:

— Ելի սիսիանցի է, շուտ մի հաշուի պոչիցն է բռնում, հէնց է իմանում փախստական ենք. այսօր ժամանակ չ'ունիմ, մի ուրիշ օր կը դաս, հաշիւղ կը սեմնենք, բայց հիմկուց ասում եմ, որ փոշմանած գաս՝ կրկին քո պաշտօնի մէջ մտնելու, էլ 8 մանէթ չեմ տալ: Այժմ ուզում ես կացիր միւնոյն ոռնիկով, թէ չէ գնաս զլուխտ այստեղ-այնտեղ մտցնես, դաս, կրկին ասում եմ: Հինգ մանէթ էլ չեմ տալ:

Ստեփանը ոչինչ չը պատասխանեց, դուրս եկաւ գնաց: Երկու օրից յետոյ Ստեփանը շուապեց դնալ պ. Զախարի հետ հաշիւր վերջացնել, վախենալով մի դուցէ իւր փողն էլ կորի Աղաջանի 30 կոպէկի պէս:

— Հը, բարով ես եկել, շինծու քաղցր ժայխոր բերանին ասաց պ. Զախարը, ինչպէս է անցնում մշակութիւնդ. փոշմանած կը լինիս անպատճառ. խեղճ, դէմքիցդ տեսնում եմ թէ այս երկու օրը որքան նեղութիւն ես քաշել. քանի որ ուրիշներին չեմ վարձել դու եկ, էլի քո տունն է:

— Ինչո՞ւ, փա՞ռք Ասուուծոյ, մշակութիւնով կրկնապատիկ եմ վերցնում:

— Այդ հաշիւ չէ. այս քանի օրս կարող է լաւ դորձ պատահած լինի և քառասուն, յիսուն կոպէկ վերցրած լինիս, բայց ամսւայ մէջ քանի՛ այդպիսի օր կը պատահի, շատ շատ մի չըրա, հինգ օր: Մենք ենք մշակներին դորձ տողը. պատահում է, որ մի օր հակերը դալիս թափւում են և մշակները էլ քիթ սրբելու ժամանակ չեն ունենում. իսկ այ-

նուհետեւ շաբաթներ է անցնում և ոչ մի հակ չի լինում:

Ստեփանի զիրքը, հայեացքը անմոռնջ խընդրում էին հաշիւր վերջացնել և դուրս գնալ:

— Հիմա ուզում ես մնա՞լ, դորա համար ես եկել չէ:

— Աղա՛յ, բախշի՛ր, չեմ կարող ձեր ասածը կատարել, հաշուի համար եմ եկել:

— Տօ երեկ չիր այստեղ, ասացի որ ժամանակ չ'ունիմ, մի ուրիշ օր եկ. այդպէս շուտով կը դան, ինձնից որ փողդ առնես հա, ուրիշն չը պիտի տաս պահելու. խօ քո մօտը չե՞ս պահելու:

— Զէ, գիւղը պիտի ուզարկեմ:

— Գիւղումը փողը ի՞նչ հարկաւոր է, որ ուզարկում ես, ի՞նչ շինեցիր, որ այդպէս շուտով ուզարկում ես. դեռ մի փող շինիր ետոյ է:

— Տանը պէտք է այժմ. անպատճառ պիտի ուզարկել:

— Դէ որ այդպէս է մի ուրիշ օր եկ. այժմ մեր բակը՝ քանի օր է ինչ դուրս ես եկել՝ չի սրբւել, սրբի՛ր յետոյ գնա՞:

Ստեփանը քիթ ու մոռմթը կախ դուրս գնաց անիծելով այն օրը, որ դրան պատահեց:

— Բա ձեզ ի՞նչ ասեմ, որ ի՞նչ դառնաք, Ստեփանի յետեից ասաց պ. Զախարը. ասա՛, ասա՛, էլի իրանց էշը պիտի քշեն. չէ, առել է, չը պիտի գայ. բայց ի՞նչ աղջայ է, — արդար, քաջ, աչքաբաց, դործից չը վա-

խեցող։ Զէ, երեսում է, էլ յետ չի դառնալու, ափ-
սո՞ս. բայց ի՞նչ փող կը ստանայ և շուտով գիւղը
կ'ուղարկի՛, այնքան քաշքեմ, որ ինքը իւր ոտով
դայ աղաչի։ Սրանցը այսպէս պիտի լինի, որ ո՛ր
կողմը ծուես իրանք էլ կամայ ակամայ ծուեն։

Մի ամսւաց մէջ Ստեփանը մի քանի անդամ
զնաց եկաւ, բայց չը կարողացաւ իւր տաժանելի
աշխատանքի առաջի պտուղը ստանալ։ Ի՞նչ անեմ,
Տէ՛ր Աստուած, ասում էր նա, կրկին դիշերապա-
հութիւն անեմ իմ փողիս համար, բայց աւելի եմ
վերցնում մշակութիւնով։ Սիր ինչո՞ւ չի տալիս փողը,
փառք Աստուծոյ դրան չի կարօտ խօ։ տունը՝ տուն,
խանութը՝ խանութ, բագուաց հարուատ վաճառա-
կաններից, էլ ինչո՞ւ չի տալիս՝ չը գիտեմ։ Հա, երեւ
ուզում է այդպիսով կրկին նոյն պաշտօնը ընդունեմ։
բայց անտանելի բան է, թէ վարձը քիչ և թէ
նեղութիւնը շատ և բացի զրանից հազիւ եմ ա-
զատւել այն գինետնից, մէկ էլ զնամ։ Զէ՛, չէ՛, գտայ—
առաջւաց պաշտօնս կ'ընդունեմ, որ մի կերպ կարողա-
նամ ստանալիքս պոկ տամ, Սաքանին ուղարկեմ։

Պ. Զախարը երբ իմացաւ նորա միտքը՝ ուրախ
ուրախ ասաց։

— Սիր ես քեզ չ'ասացի կը փոշմանես. հիմա
լա՞ւ է մի ամսւաց ունձիկիցդ ընկար. թէւ այն ժա-
մանակ բարկացած ասացի հինգ մանեթից աւել չեմ
տալ, բայց այժմ խղճալով քեզ վերաց 7 մանեթ
եմ նշանակում։ Որ մի մանեթը պակասացնում եմ

չը լինի մտածես՝ քիչ է տալիս գործս վատ կատա-
րեմ. առաջւայ պէս եղի՛ր, տարիներով քեզ բաց
չեմ թողնի և վերջը կը տեսնես մի գումարատեր
դարձած։

— Ութ մանեթը առանց էն էլ քիչ էր, նրա-
նից էլ էք պակասացնո՞ւմ։

— Էլ աւելորդ մի՛ խօսիր, աշխարհիս տակ ու
գլուխը հինգ մատերիս պէս գիտեմ, քեզ ինչ տալիս
եմ, անձայն վերցո՞ւր և խնարհութեամբ քո գործը
կատարի՛ր։

«Տէ՛ր Աստուած, այս ի՞նչ կրակի մէջ եմ ընկել,
բանը անտեղ է հասցրել, այժմ որ չ'ընդունեմ, վաղը
գամ՝ հինգ կը տայ. ինչ անեմ, զնենք թէ մի մա-
նեթը կորցրել եմ, մի ամիս կը մնամ, ստանալիքս
կ'առնեմ և էլ այդ սե սատանի երեսը չեմ տեսնի»,
մտածում էր Ստեփանը։

— Լա՛ւ, որ եօթն էք տալիս՝ ինչ պիտի ասեմ,
բայց խնդրում եմ մի քսան մանեթ տաք, այս քանի
օրս գիւղը զնացող կայ. անպատճառ պիտի ուղարկեմ։

«Կարծում է իւր մտածածը իմ խելքը չի կըտ-
րում, մտածում էր հեգնական ժպիտը բերանին պ.
Զախարը. ողորմելի՛, ի՞նչ պարզամիտն է. կը ստանաս,
չէ մի ո՛տներ. ուզում է այս ամիս բոլոր ունձիկը ստա-
նայ, ազատ համարձակ գուրս զնայ։»

— Լաւ է կը տամ, ասաց պ. Զախարը, դեռ
այժմ գործ ունիմ, այս քանի օրը առանց քո ասելի
կը տամ, էլ փողի անուն չը տաս։

Ստեփանը ինչ անէր, լաւ ծուղակի էր բռնւել,
ովթերը կուտած հեռացաւ իւր աղայի մօտից, դար-
ձեալ գիշերապահ եղաւ և այդ պաշտօնի հետ
սերտ կապւած գինետունը կրկին նրան մոլորեցրեց:

ՓԵ.

Սաքանը գիւղում նստած փափուկ փող էր
աշխատում. ապրանքի մի մասը արգէն հալեցրել էր,
մտածում էր թէ ինչպէս պէտք է ապրանք բերել
տայ, որ էժան նստի. չէր մոռացել Ստեփանի և
ուրիշների ընկերութիւնը, նրանցից տեղեկութեան
էր սպասում, բայց ոչ մի լուր չը կար. «Ձախորդու-
թեան են պատահել, մտածում էր Սաքանը, նրանք
խարւեցին, գնացին կարծելով սէլի պէս թափւած
է հարստութիւնը, հիմա ես եմ իմանում թէ ի՞նչպէս
շան քթից ջուր խմելով մշակութիւն են անում,
բայց ոչինչ, էլի փող կ'աշխատեն մի կերպ բերան-
ներիցը կարելով, պէտք է զրել ապրանք ուղարկեն
եկողով կամաց կամաց, թէ չէ յանկարծ կը վերջա-
նայ ապրանքը, այնուհետեւ դժւար կը լինի»:

Այսպէս մտածելով նա նամակ դրեց Ստեփանին
և մնացած չորսին, որ անպատճառ, էլ այնտեղը չի,
ապրանք հասցնեն, որովհետեւ ծախելու լաւ ժա-
մանակին է:

Սաքանը մի կողմից ապրանք էր ծախում, միւս
կողմից հաւաքած ցորենն ու գարին նաղդ փող շի-

նում, իսկ նաղդ փողը տալիս էր քառասուն և յի-
սուն տոկոսով վիզները ծուռ մնացած զիւղացիներին,
որ կալի ժամանակ կամ ցորեն տան կամ թէ չէ
փողը: Սաքանը տոկոսով փող տալով կարձ միջոցում
մեծ անուն հանեց, տեղովք վեր կենող նրան ճա-
նաչում էր իրու խեղճերին ձեռք մեխող. մի խօջաց
Սէրգի էր մի Անգեղակոթ:

—Աստուած ձեր պապերի գերեզմանուաց վե-
րայ լոյս թափի, Մկրտում ապէ՛ր, ասում էին ինեղձ
մնացած զիւղացիները, եարաբ մեր ճարը ինչ կը
լինէր, թէ որ խօջաց Սէրգին չը լինէր. մին մին
այդպէս օգնութիւն համող, դարդ ու ցաւ իմացող
հէնց ինքն է որ կայ. ախր ժամանակիս, այն էլ այս
ժամանակին, որ որդին հօրը չի ճանաչում, ո՞վ
կ'անի նորա արածները: Տէր Աստուածը նորա մինը
հազար անի. երեկ չէ միւս օրը պարտատէրս եկել
եղներս էր ուղում քշի տանի. չեմ իմանում ո՞րտե-
ղից էր լսել, Աստուածանից էր, սրբերից էր թէ
ինչ է, եկաւ փողը տւաւ և եղներս ազատեց. հէնց
իմացայ թէ աշխարհքս ինձ բաշխեց, որ եղներս չը
տարան, անունս տափովը չը տւին:

—Անում է, զորդ է, պատասխանում էր Մկրտ-
ում ապէրը աչքերը ճպճպացնելով, բայց սկի մինը
երկու չի դառնում. հէնց է որ փողը սրան է
տալիս, թղթի պատառտանքով մնդուկը լցնում. ախր
սկի չի մտածում՝ մեռնել կայ, սպանւել կայ: — Ե՛, ա
որդի, ասում եմ, բաւական է շահով տաս այդ փո-

զերը. լաւն այն է արծաթ կամ ոսկի շինես, մի տեղ թաղենք, որ ոչ կորչի և ոչ փափի, երեսին ջրով մնայ. ևս եմ լինում ինքը՝ չի անում; — ԶԵՇ, ասում է, դու չես իմանում, այսպէս լաւ է. փողն էլ է փող աշխատում առանց ապրանք առնելու: — Երեկի ինքը մի բան հասկանում է առանց այն չի, աշխարհք տեսած մարդ է:

— Ինչ խօսք, նա աւելի լաւ է անում, որ աղքատ-ուղքուտի օգնութեան է համառում. լաւ է քո ասածը չի անում խօջայ Սէրգին, ախր դրանից ոչ դուք խէր կ'ունենաք և ոչ էլ մեզ նմանները:

Այսպէս գիւղում Սաքանի շւաքը բամբակով էին հաւաքում. ամեն տեղ ձայն ունէր, ամեն խնջոքում վերի տեղն էր նատած լինում տանուտէրի և տէրտէրի մօտ. նորա խօսքին ո'վ կարող էր չէ ասել: Տանուտէրի ու տէրտէրի բերանները կապել էր, նրանց ուտացնելով ու ընծաներ տալով. ինչ անում չէր անում, ոչ մի արգելք, ոչ մի դատաստան չը կար, որովհետեւ խօջայ Սէրգին է արել. մի խօսքով թրի այս կողմն էլ էր կտրում այն կողմն էլ: Աղջկատէրերը օրեր էին համարում թէ երբ է խօջայ Սէրգին աղջիկ ուզելու, իսկ Սաքանը դեռ ևս մտադրութիւն չ'ունէր պսակւելու, նա ուզում էր մեծ անուն և զիրք ունեցողի աղջիկ ուզել, որ ընդ միշտ ապահով համարի իրան խէր-շառ պատահած ժամանակ. իսկ այդ մտադիր էր անել մի երկու տարուց յետոց, երբ իրան լաւ կը դրստէր, կը շինէր:

Նամակը հասաւ Ստեփանին: Կարծելով տնիցն է մէկ ձեռքն էր առնում, բանում, աչքերը գցում սե առղերին, ինքն իրան մտածում. «Տեսնես ի՞նչ են զրել, ա' իս, կարդալ չ'իմանացի որ մէկ կարդացի հանգստանացի»: Մէկ նամակը պաշում է, պաշպարում, աչքերը քսում, ծոցը դնում ասելով. «Կնիկս ու որդիքս մօտն են եղել զրելու ժամանակ, նրանց ձեռքը կտած կը լինի, կնիկս ծոցն է զրել անպատճառ...»: Էլ ոչինչ չը կարողացաւ ասել, արինը կարծես գլխին խփեց, աչքերը սեացան, լիզուն կապ լնկաւ կնոջը ցիշելով: Նա կնոջը ցիշելով զինետունը իսկոցն մտաբերեց և այդ ժամանակ էլ չէր ուզում կնոջ անունը տալ, վախենում, զողում էր ինչպէս մի երեխաց. նա ուզում էր փախչել իւր սենեակից, ինքն էլ չը գիտէր ուր, կարծում էր կինը այդ բոպէին մօտն էր գտնելու, որ իրան կշամբում էր. և այլ ևս կանգնած չը կարողացաւ մնալ, ընկաւ իւր կեղաստ տեղաշորի վերայ և սկսեց զառն արտասուք թափել:

«Ա'խ Աստուած, մեղաւո՛ր եմ, մեղաւոր, ես մեղա՛ց Աստծու, մէկ էլ այդ մեղքը չեմ անի... Բաշխի՛ր, ա' կնիկ... դու կը բաշխես անպատճառ, ես գիտեմ. էլ չեմ անի, վա՛յ, էլ չեմ անի, սուրբ կը մնամ մինչեւ...»

Եւ այս սրտանց մեղայ գալն էր, որ նրան մի քիչ հանգստացրեց. նա կրկին նամակը հանեց և սկսեց պաշպարել, աչքերը քսել ասելով. «Ա'խ ձեր հոգուն մատաղ, դուք ինձ համար այդքան քաղցր էք եղել հա՛յ:

Ամուսնական, ծնողական սուրբ զգացմունք-ները Ստեփանի սրուռմ շարժւեցան բուռն կերպով։ Նամակը համբուրելով կարծես իւր փափլիկների աչքերն էր համբուրում, ծոցումը դնելով վերանորոգւած ասում՝ էր. «Ես քո հաւատարիմ մարդն եմ, դու իմ հաւատարիմ, քաղցր, ամեն բանից էլ անուշ կնիկն ես»։

Ստեփանը ուզում էր շուտով նամակը կարդալ տալ, դորա համար մտաւ աղայի խանութը և գործակատարներից մէկին առաջարկեց կարդալ։ Գործակատարը թթւած դէմքով շուռ եկաւ ասելով. «Փամանակ չունիմ։ ճարահատեալ երկրորդ գործակատարին դիմեց. վերջինս էլ նոյն կերպ վարւեց։ Ստեփանը չը զարմացաւ, նա լաւ գիտէր, որ գործակատարները, թէւ իրանց նման զիւղացիներ են, բայց մշակներից զզւելով զզւում են, հետները մինչեւ անգամ չեն ուզում խօսել, միայն տեղն ընկած ժամանակ լաւ գիտեն թրքերէն լկտի շամախեցու և ոսերէն հարբած զեղջուկների անվայիլ հայոցանքները թափել իրանց գլխին։ Հայերէն էլ գիտեն հայ-հոյել, բայց միայն այն ժամանակ, երբ մշակների հաւատն են հայոցում։ Ստեփանը այս բոլորը իմանալով ի հարկէ ճարահատեալ տարաւ գործակատարների մօտ, որոնց աչքը սովոր էր միայն տեսնել մետաքսի ու շալերի թանգանոց ձոթերը, տիկինների զարդարանքը և դրա իրանց պէս սիրուն ալայուսակների ամուսինների ամսի 20-ին ստացած անծալ,

վեշխան փողերը և ոչ թէ կեղտ ու քրաինքի մէջ կորած նամակը։

Ստեփանը կոյր ու փոշման դուրս եկաւ խառնութից և հազիւ հազ կարողացաւ մի երկու ժամկց յետոյ մէկ աստուածասիրի կարդալ տալ։ Սաքանի նամակի միտքը հասկանալով մոռացաւ իւր հոգեկան տանջանքը ինչ որ մի քիչ առաջ ուներ։ Նա շտապեց ձեռքի եղած չ'եղածով և պ. Զախարի մօտի փողով, որ մի կերպ պոկ էր տւել, ապրանք զնեց։ ԱՄԷկին հինգ է աշխատելու, ես զիտեմ, բանս բան է», մտածում էր Ստեփանը։ «Աստուած խէր տայց, բարի բազար ասելով կապեց, մի քանի օրից յետոյ Սաքանին ուղարկեց։

Ստեփանը հաշիւները աղայի հետ վերջացնելով սկսեց իւր համար ազատ մշակութիւն անել և այդ ժամանակ օր ու գիշեր անելով հազիւ էր կարողանում 10—15 րուբլի դատել։

Սաքանի նամակի պատասխանը և ապրանքը եկաւ։ «Բանս բան է, մտածում էր նա ուրախ ուրախ, մնացածներն էլ կ'ուղարկեն, թո՛ղ ուղարկեն, ես էլ նատած կը ծախեմ, փափուկ փող կը շնեմ, տակս կը զնեմ։ Հինգի տներն էլ համարեա իմ ձեռքին է նայում; ես եմ կառավարում, ինչ ուզում են բաց կը թողնեմ, ո՞վ է կուռս բռնում։ կնիկարմատը հինգ բեր հա բեր անող կը լինի, ես էլ կը տանեմ, ո՞վ է վեսաւում և ո՞վ խէրում։ Սրանք բոլորն էլ լաւ է. ինչպէս ես եմ առաջուց կարգա-

զրել, յոյս ունիմ; որ այնպէս էլ կը լինի, դու նորա դարդը քաշիր. Է՛հ, դարդ չէ մին ո՛տեր, ինչպէս Ստեփանի աշխատանքն է ացուհետեւ իմը, այնպէս էլ Թագուհին է իմը: Բայց չէ, պէտք է մի քիչ էլ սատանայութիւն բանեցնել. վա՛յ թէ չ'եղաւ, բոխ գիւղացի է, կը զրի Ստեփանին, դէ այն ժամանակ արի՛ էշը ցլիցը հանի՛ր, էլ զրանից յետոյ մնաք բարել ընկերութիւն. էլ ո՞վ կը նայի դիւղումը իմ կզակին. չէ՛, չէ՛, պէտք է մի քիչ էլ համբերել, տեսնել խօ Ստեփանը շուտով չի գալու կամ թէ չէ նորա ձեռք ու ոտքը լաւ հաւաքել, բոլորովին սիրահարացնել. ինչ եմ շտապում, փա՛ռք Ասոուծոյ մէկը չի, երկուսը չի, ուրիշներն էլ կան: Բայց ամր զրատեղը չեն տալ, հոգիս ուղի կը տամ, նրանցից ձեռք կը վերցնեմ, միայն....

Այսպէս Սաքանը Թագուհուն իրանը համարելով խաղում էր առ այժմ նրանով, ինչպէս կատուն է խաղում նախ քան կլանելլը որսած մկնով՝ հաստատ հաւատացած լինելով, որ իւր սուր սուր ճանկերից պրծում չ'ունի: Սաքանը թէև շարունակ տեսութեան էր գնում Թագուհուն և միշտ չար մտքով, բայց շատ հեռուները մտածելով սրտինը չէր կարողանում յաջողացնել:

Ստեփանը չորս ամիսը, հինգ ամիսը մի անգամ ասլրանք էր ուղարկում Սաքանին և միշտ գրել էր տալիս տանը լաւ մտիկ տալ, վար ու ցանքը անել տալ, ինչպէս իւր խելքն է կտրում:

Փազ.

Անցել էր գարունը, ամառւայ թեժ ժամանակն էր. արեն կրակ էր թափում: Մեծատուն քաղաքացիք տեղափոխեցան ամարանոցները՝ աղատուելու Բագուայ անտանելի բոց ու կրակից, իսկ միջոցներ չ'ունեցողները մնացին այդ պլազմացող հնոցի մէջ:

Ստեփանի զրութիւնը վատ էր. երկրորդ ամառն էր նորա համար. նա սկսեց կամաց կամաց ծիւրել, հալ ու մաշ լինել. շոգը մի կողմից, սնունդի պակասութիւնը միւս, անառակ կեանքը մի երրորդ կողմից՝ նրան ձեռք ու ոտից զցեցին. վերջը էլ չը կարողանալով զիմանալ հակերի տակ՝ ստիպւած թողեց գործը և մի քանի օր սկսեց քաշ գալ՝ թուլացած, սպրանած, աչքերը խոր ընկած՝ պատերի տակ՝ շւաք տեղերում: Նորա արագաշարժ ոտերը, հաստ բազուկները և միշտ ուրախ գէմքը թռել, կորել էին. այժմ էլ անգեղակոթցի Ստեփանը չէր, այլ կատարեալ մի մշակ ոտից մինչեւ գլուխ: Նա կարծում էր կ'անցնի շուտով այդ թուլութիւնը և շուտով իւր գործը կը շարունակի, բայց չ'եղաւ: Նրան այս ու այն խորհուրդ տուին անգործ չը մնալ, որով աւելի կը վատանայ վիճակը. Նա էլ նրանց խորհուրդը լսելով էլի սկսեց հակեր կրել: Հէնց առաջի օրը, երբ հակի տակ անքտնքալով գնում էր մի պարոնի յետեւից, չը կարողացաւ հետեւ պարոնին. ուզեց հակը պատին դէմ տալ, կանդնել, չը կարողացաւ,

Թոյլ ոտերը չը դիմացան մինչև պատը հասնի, ընկաւ կողքի վերայ՝ պարանը ձեռքից տալով, միւս կողմն ընկաւ հակը, ինքը անվեսա մնաց ընկած։ Պարոնը ծխելով շարունակում էր ճանապարհը, մէկ էլ յետ նայեց, տեսաւ որ մշակը չի գալիս, բարկացած մօտեցաւ. «Այ անպիտաննե՛ր, որ չէք կարողանում, ինչո՞ւ էք վերցնում, կողքին մի քանի քացի չը տաս, որ խելքը զլուխը ժողովւի։ Մշակ, ա՛յ մշակ։ Նոր մշակ կանչեց. հայ մշակը իսկոցն եկաւ. հրամագական ձայնով պարոնը հրամացեց, որ մշակը հակը վերցնի և իրան հետեւի։

Մշակը, որ Ստեփանի մանկութիւնից ի վեր ընկերն էր և որ միմեանց հետ շատ սիրով էին, փոխանակ դէպի հակը վազելու, ինչպէս հակի ծարաւ մշակ, դէպի Ստեփանը վազեց։

— Ստեփան, Ստեփան, ա ինչո՞ւ ես ընկել, վե՛ր գնանք։

— Վա՛յ, մեռնում եմ, Կարօ՛, ինձ տուն հասցրո՞ւ։

— Դէ վե՛ր գնա՞նք։

— Եռւտ արա՛ հակը վերցուր եկ, ես այդքան ժամանակ չ'ունիմ քեզ ապասելու, բղաւեց պարոնը։

— Աղա՛յ, բա չե՞ս տեմնում, խեղճը ընկած է անտէր տնտիրական. չեմ կարող, ուրիշին կանչի՛ր։

— Այ անիծւի՛ք դուք, էլի վսկան հայեր են է՛, ինչ կայ. խօ չը մեռաւ. ասաց ու մի ուրիշ մշակ կանչեց։

Կարօն Ստեփանի կռանոակերից բռնած տարաւ իրանց գետնափոր սենեակը և պառկեցրեց։

Ստեփանի գետնափոր սենեակը մի խուլ փողոցում էր։ Այդ համարեա անպատուհան փոքրիկ սենեակում կենում էին վեց հոգի։ Կարօն էլ այդտեղ էր կենում։ Կենալու ոչինչ յարմարութիւն չ'ունէր այդ բնակարանը։ Խոնաւ յատակի վերայ փոււած էր մի քանի կտոր պատռուած, ցեխոտ խասիրներ, որմաց վերայ աջ ու ձախ կորուած զրւած էր կեղտից սրոց կտրած անկողիններ։ Ամբողջ սենեակի կահ կարասիքը կազմում էր խասիրի կտրտանքը և անկողինները. եթէ սրանց վերայ աւելացնելու լինինք մի կուժ, գաւաթ և մի քանի ծակրտած, մաշւած տրեխներ այս և այն անկիւնում վեր թափուած, սրանով վերջացրած կը լինինք Ստեփանի անշուք բնակարանի նկարագրութիւնը։ Այդ բնակարանին կից էր գոմը, որ տախտակով էր բաժանւած։ Նախանձելի էր երկու ծիաների գոմը. դա աւելի արձակ էր, աւելի լուսաւոր, քան թէ մշակների բնակարանը։

Կարօն լուռ ու մունջ նստած էր հիւանդի մօտ. նա չէր ուզում խօսացնի վախենալով մի գուցէ անհանգիստ անէր Ստեփաննին։ «Թող մի քիչ քնի, հանգստանաց», մտածում էր Կարօն։

Մի ամբողջ ժամ անցնելուց յետոյ Կարօն դարձաւ Ստեփանին։

— Ստեփան, ա՛ Ստեփան։

— Հ'ը. թոյլ կերպով արտասանեց և շրջւեցաւ
դէպի կարօն։
— Աչքերդ մի բա՛ց, օրհնւած, ի՞նչ ես ընկել,
սկի չես խօսում։
— Կարողանում եմ չեմ խօսո՞ւմ։
— Ի՞նչդ է ցաւում։
— Ել սաղ տեղ չունիմ, մեռնում եմ։
— Երեխայ երեխայ մի՛ խօսիր. ախորժակդ ի՞նչ-
պէս է։

— Ախորժակից մի՛ խօսիր, ոչինչ չեմ ուզում,
բերանս լափ լեղի է։
— Բա սոված պիտի մնաս, գնամ բան առնեմ
բերեմ, սովածութիւնը աւելի քեզ վեր կը դցի։
— Զէ՛, չէ՛, կարօ՛, ի զուր ես գնում, չեմ կարող
ուտել, թոքս կրակ է ընկել, դու ինձ մի գդալ ծուր
տո՛ւր՝ թոքիս ածեմ։
կարօն Ստեփանի կուռը բռնելով, նստացրեց
ջուրը խմացրեց։

— Թի՛ւ, թի՛ւ, երանի թէ կուլ տւած չը
լինէի, լեղի է դա՝ ջո՛ւր է, ա՛խ, մեր աղբրի ջուր,
ո՛րտեղ ես... ասաց և խոր հառաւելով թուլացած
ընկաւ տեղաշորի վերայ։

Ստեփանը տեղաշորից չը կարողացաւ վեր կենալ
այդ օրը։ Նա ոչինչ չը կերաւ, միայն յաճախ ջուր
էր ինդրում, բայց երբ բերանն էր առնում՝ զգւած
մէկ էլ բերանից դուրս էր թափում։
Մի երկու օրից յետոյ ձեռք ու ոտ ընկան, մի

թուրք հէքիմ ճարեցին. թուրք հէքիմը, ջիբան
դցած, խորհրդաւոր հայեացքով, թէզիհիմ ձեռին,
մտաւ հիւանդին ացցելութեան։

Աչքերը լրջութեամբ մի կողմ դարձրած բաղ-
կերակը բռնեց, կարծես խորն էր մտածում, ուզում
էր ինչ հիւանդութիւն լինելը գտնել։ Լեզուն էլ
տնտղեց և նոյն լրջութեամբ գլուխը շարժեց։
— Բա ինչո՞ւ էք ուշացրել, ա՛ ձեր տները չի
քանդիւ։

— Հէնց իմացանք թէ ոչինչ չը կայ, կ'անցնի,
պատասխանեց Ստեփանի ընկեր Պօղոսը։

— Զէ, լաւ չէք արել, սաստկացել է հիւանդու-
թիւնը եաթալաղի է փոխւել. բացի եաթալաղից
վէրքեր էլ կան վրան, այն էլ վատ վէրքեր են։
Բայց ոչինչ, ես կ'առողջացնեմ։ մի շաբթից յետոյ
ոտի վերայ կանգնած կը տեսնէք, ինչ էք տիսրում։

— Դէ ուր է, քեալբալայի՛, Աստուած բերանիցդ
լսի, հէնց իմացիր մէկ էլ նոր դու նորան կեանք ես
բաշխում, մենք քո վարձը չենք մոռանայ։

— Աչմ ինձ փող է հարկաւոր, որ մի քանի
հարկաւոր բան առնեմ զեղերի համար. վատ չէր
լինի հէնց այժմեանից խօսենք։

— Լաւ. ի՞նչ պէտք է առնես, քեալբալայի՛։
— Ես տեսնում եմ, որ դուք մշակ մարդիկ
էք. ես ձեղնից աւել չեմ պահանջի, ինձ կը տաք
տասը մանէթ։

— Քեալբալայի՛, տասը մանէթը շատ է։

— Նատ չի', շատ չի'. օրը մի երկու անգամ նեղութիւն պիտի քաշեմ այս ծանր տեղովս գամ գնամ, դեղեր պիտի շինեմ, որի ձեռք բերելը շատ թանկ է նստում, փեղամբարը վկայ՝ զրանից պակաս չեմ կարող:

— Զէ', չենք կարող տալ, ի զուր քեզ էլ նեղութիւն տւինք:

Հեքիմը լաւ տեսաւ, որ տասը մանէթ տւողը չեն՝ իջնելով իջնելով հասաւ մինչև հինգ րուբլի: Համաձայնեցան: Մէկ րուբլի էլ տւին դեղերի համար: Հեքիմը դուրս գալուց դարձաւ Պօղոսին.

— Փահրիզը պիտի անպատճառ պահի, թթւի, կծւի չը մօտենայ. տաք կերակուր երբէք չը տաք, եթէ տւել էք իմացէք, որ տունը գլխին կը քանդէք: Գլուխը, մարմինը լաւ կը փթթորէք, որքան կարողանաք տաք պահեցէք. ազսքանս: Ես երկու ժամից յետոյ կը գամ և դեղերը կը բերեմ:

Ստեփանը ընդունեց քելլբալայու տուտ սուտ պատրաստած դեղերը: Երկու տեսակ՝ սպիտակ ու դեղին փոշիներ էր թղթերի մէջ ածած, սպիտակը ցերեկով պիտի չուր անէր խմէր՝ ժամը մի անգամ, իսկ դեղինը՝ զիշերները:

Անցաւ երկու օր. շարունակ գնում դալիս էր քեալբալային, արդէն երեք րուբլին առել էր, բայց հիւանդը քանի գնում աւելի վատթարանում էր: Հեքիմը յոյս էր տալիս, դեղերը շատ շուտ փոխում էր, շատ անգամ էլ բարկանում էր մշակների վերայ ասելով «Երեխ փահրիզը չէք պահել տալիս, թէ չէ

ինչու չը պիտի առողջացած լինի մինչև այժմ: Հիւանդի մօտից Կարօն շատ քիչ էր հեռանում: իսկ մնացածները իրանց գործին էին գնում, միայն երեկոներն էր, որ դալիս էին և իրանց սիրելի ընկերին շրջապատռամ, անխօս լուռ ու մունջ նորա երեսակահատին մտիկ տալիս: Ակզբում նոքա այնքան էլ նշանակութիւն չէին տալիս, կարծելով շուտով կ'անցնի, բայց երրորդ օրը, երբ հիւանդութիւնը սաստկացաւ, այնպէս որ նա էլ ոչ խօսում, ոչ ուտում և ոչ խմում էր, մնացին շւարած:

— Կարօ', ինչ անենք, Ստեփանը ախր դէպի վատն է գնում, դարձաւ Պօղոսը:

Կարօյի տխուր արտայայտութիւնը լուռ ու մունջ պատասխանեց. «Մենք ինչ կարող ենք անել, մեր ձեռքովը ինչ կը դաբա:

Ազդ ժամանակ Ստեփանը բանդագուշանքի մէջ սկսեց շրջշրջւել տեղաշրուում. «Ե՛կ, Ե՛կ այսոեղ եմ... բեր... բեր ձեռքդ համբուրեմն»:

— Ցիսուս Քիսոս Աստուած, քթի տակ մրմրնաց Պօղոսը և երեսին խաչ հանեց, հրեշտակի հետ է խօսում:

Կարօյի աչքերը արտասունքով լցւեցաւ, ոչինչ չը կարողացաւ խօսել:

— Տէր ողորմած Աստուած, դու դրան խնայիր, կնոջը ու երեխայոց բաշխիր, զգացւած արտասուքը աչքերին ձեռքերը վեր կարկառեց Պօղոսը:

Ստեփանը շարունակեց բանդագուշանքը.

«Ե՛կ, Ե՛կ, այստեղ եմ... աղբը ջուր ևս բերել,
ուխա՛յ, վա՛յ, վա՛յ, չէ, մի՛ գայ... գինետուն... ա-
նիծւած Աղաջան... գնացին... փախչում են... ընկան
կրակը, երեխաներս... վա՛յ, վա՛յ, կնիկս... նորա
շորերը վառւում է, օգնեցէ՛ք»... և անդադար
շրջըրջւում էր տեղաշորում և վերմակը դէն գցում,
իսկ հիւանդապահը հեքիմի ասածները ամենայն
ճշութեամբ կատարում էր, իսկոյն հաստ վերմակը
վլայ էր քաշում։

—Պողոս ապէ՛ր, դարձաւ Կարօն, Ստեփանը
դելն է տալիս, ոչինչ չը կայ, ես այստեղ կը մնամ,
դու մի գնա՛ տես քեալբալային որտեղ կրու։

—Էլ ինչ գնամ, չես տեմնում մահւան հրեշ-
տակը գլխավերելը պտտում է, նա էլ ի՞նչ կարող է
անել, ի զուր փող պիտի տանք. մեղք է մինչեւ
անդամ հեքիմ բերելը, ճակատին ինչ դրած է այն-
պէս էլ պիտի լինի, հեքիմը իրան մարդ տեղովը
ինչ է, որ ճակատի դրածը կարողանայ ջնջել. աւելի
լաւ է երեսը ծածկենք տեմնենք վերջը ինչ կը
լինի։

Հէնց այդ խօսակցութեան ժամանակն էր, որ
քեալբալային ներս մտաւ։ Նա կրկին յոյս տւաւ հի-
ւանդին մի լաւ գննելուց յետոյ և մնացած երկու
րուբլին առաւ, դուրս գնաց։

Հեքիմը էլ չերեւեցաւ, ոտ չը կոխեց մշակների
բնակարանը, նա իւր հաշիւը վերջացրել էր։

Մշակները իրանց ընկերոջ լոյս աշխարհում ապ-

րելու վճիռը անգութ մահւան տնօրինութեան յանձ-
նեցին, երբէք չը կասկածելով, որ նա անողոք է,
նա կատաղի է, նորա սե, զարհուրելի ճիրաններից
հազիւ հազ է կարողանում ազատւել անօգնականը։
Անզօր ձեռքեր, խուփ աչքեր, նւազած սիրո—ահա
անագործն մահւան ձեռք ու ոտը կապած գերին։

Թուրք հեքիմը չը կարողացաւ նրան ազատել,
կը նշանակի ճակատագիրն է՝ այդպէս էլ պիտի լինի,
ուրեմն նորա ասազը թեքւեցաւ, նորա արել խա-
ւարեցաւ։

Ստեփանը մնաց անօգնական, թուրք հեքիմը
էլ չէր գալիս։ Իւր ընկեր մշակներն էին պահում,
խնամում, սրանից-նրանից խորհուրդներ հարցնելով։
Մի օր էլ երբ խորհուրդ էր հարցնում Կարօն մի ան-
ծանօթ պարոնից, որի դէմքը, խօսակցութիւնը
շատ բարի էր և հէնց դրա համար էր որ մօտեցել
էր Կարօն, փողոցում կանգնեցրել և խորհուրդ հարց-
նում, անծանօթ պարոնը հետաքրքրւեցաւ, մտաւ
հիւանդի մօտ, ոչինչ չը կարողացաւ իմանալ, դար-
ձաւ Կարօյին։

—Դու մօտը սպասի՛ր, ես գնամ բժիշկ բերեմ։

—Այսր այդ հեքիմները փող շատ են վերցնում,
էն էլ քանի քանի անդամ պիտի գան գնան, մենք
խեղճ մարդիկ ենք, որտեղից ճարենք նրանց ու-
ղածը։

—Ոչինչ, ոչինչ, փողի համար մի՛ մտածիր, ասաց
ու դուրս գնաց։

Անծանօթ պարոնը բժիշկ բերաւ ի հարկէ իւր փողով. բժիշկը յայտնեց պարոնին, որ Ստեփանը կ'առողջանայ մի քանի օրից յետոյ, միայն նա վերջ չ'ունի, որովհետեւ նա վարակւած է անբուժելի վեներական ախտով:

Ստեփանը մի շաբթից յետոյ առողջացաւ, ոտի կանգնեց. Հիւանդութիւնից յետոյ, կարծես, զզւած էր նայում Բագուի վերայ. նա մտքումը դրաւ անպատճառ գիւղը գնալ: «Ի՞նչ եմ շինում ես այսուղ, մտածում էր նա, ի՞նչ եմ աշխատում, ի՞նչ, աչքս մի բան տեսնում է, ափսոս չի գիւղը, ելի այնտեղ իմ տունն է, ելի այնտեղ եփող, թխող կայ, ինչի՞ պակասութիւն եմ քաշելու. այս ինչ եմ դարձել, ձեռք ու ոտից ընկել եմ, իսկ ջէբումն մի քոռ կոպէկ կայ. եղած չ'եղածը ուղարկել եմ Սաքանին, մի կերպ կ'ապրեմ գիւղում...» Այսպէս անդադար երկար ու բարակ մտածելուց յետոյ վերջապէս հաստատ վճռելով մի երկու ամսից յետոյ ճանապարհ ընկաւ դէպի իւր ծննդավայրը:

ԺԵ.

Թագուհին շատ ուրախացաւ Ստեփանի գալովը. նորա երազած ամրոցները ահա այսօր էգուց է պիտի կատարւէին: Ստեփանին փոխւած տեսաւ. նա ել էր հագուստը փոխել, բայց ոչ այնպէս, ինչպէս Սաքանը, Դանին էին. նա ունէր զլիսին ոչ թէ մորթի գտակ, այլ մահուդի իւղուած, սրոց կորած Փուրաշկայ, հա-

գին մի քանի տեղից կարկատւած և գոյնը գնացած բաճկոնակ, իսկ ոտերին լապճիներ էին. միայն արխալուզն էր նոր: Թէև այսպէս հին—մին էին Ստեփանի հագուստը, այնու ամենայնիւ Թագուհին Ստեփանին փոխւած տեսնելով շատ ուրախացաւ, միայն ներսում սաստիկ տանջլում էր, երբ տեսնում էր Ստեփանին ձեռք ու ոտից լնկած. «քուանամ, քար կտրւեմ, որքան չարչարւել տանջւել է խեղճ մարդս մեզ համար», ասում էր նա: Բայց յոյս ունէր, որ այնուհետեւ լաւ ապրելով Ստեփանը կը վերանորոգւի, այն ժամանակ էլ իրանց բաղդաւորութեան չափ ու սահման չի լինի:

Ստեփանի առաջի բան ու գործը եղաւ Սաքանին հարցնել, գործը ի՞նչպէս է գնում: Սաքանն էլ միամտացրեց նրան ասելով.

—Քէֆդ քէօք պահի՛ր, տղան լաւ աշխատում է. մէկին մէկ, մէկին երկու է աշխատում Բագուայ խուրդաւաթը, այսպէս եթէ գնալու լինի մի քանի տարում մեր փողին փող չը հասնիլ:

Ստեփանը միամուեցաւ, իւր գնալուց յետոյ սատկած եղան հոգսը մոռացաւ մոածելով.

—Լաւ է, ես իմ Աստուածը, մի հարիւր մանէթի ապրանք հազիւ լինեմ ուղարկած, այժմ երկու հարիւր գարձած կը լինի. էլ ինչու եմ գնում Բագու, հէնց կը մնամ՝ այսուղ:

Անցաւ մի երկու շաբթ. գիւղացիների վար ու ցանքի ժամանակն էր. ամեն մէկը իւր գութանը,

տաւարն էր պատրաստում գործը սկսելու, իսկ Ստեփանը ձեռքերը ծալած ոչինչ չէր անում. երբ միտն էր գալիս գութանը, վար ու ցանքը, կարծես, սիրտը ծանրանում, սևանում էր և անիծում էր զիւղը. Ճ'հ, էլի գութանի յետևից պիտի քաշ քաշ լինեմ, էլի պիտի գամ ծխոտած կոճերի տակ նստեմ, էլի նորա երեսը տեսնեմ... չէ՛, չէ՛, էլի Բագուն լաւ է, էլի թէ կեանք, ուրախութիւն կայ այնոեղ է. աւելի լաւ է գնամ Բագու, ականջս հանդարտ իմ մշակութիւնս անեմ, քան թէ այստեղ էլի գութանի մաճը բռնեմ. թող կիտովի վարեն մեր բաժին տափը, ինչ ուզում են անեն, ես կը գնամ, չեմ կարողանում դիմանալ:

Այսպէս Ստեփանը բոլորովին օտարացած գիւղական կեանքին՝ ոչ մի բանի ձեռք չը տւառ. կինը զարմացաւ, նա կարծում էր, որ Ստեփանը մեծ հարատութիւն է բերել և դրա համար է, որ ոչ մի բան չի անում ինչպէս Սաքանն էր:

Երկու ամսից յետոց Ստեփանը պատրաստեց Բագու գնալ: Դորա համար Սաքանից ճանապարհածախքի և դլխահարկի համար փող ուղեց:

Սաքանը ունքերը կիտած դարձաւ Ստեփանին.

— Բա չես ասիլ փողը շահով տւել էի Խօջալ Պողոսին՝ կերաւ. քեզ չը յայտնեցի, ասացի, նոր է տուն եկել, ինչու սիրտը կոտրեմ. բայց ես նորա հախիցը կը գամ. դու գնա՛ Բագու, էլի ուղարկի՛ր, այսուհետեւ ես կ'իմանամ ում կը տամ շահով:

— Բա թուղթ բան չ'ունի՞ս նրանից. ուրեմն ասում է, որ փող չեմ տեսել, հա՛, վհատւած հարցրաւ Ստեփանը:

— Բա չ'ունիմ, ով է թղթին նայում ժամանակիս, հասարակ թղթով բան չի դառնալ, պէտք է էլի մի յիսուն, վաթսուն մանէթ խարջեմ, սրան նրան ուտացնեմ, սրան նրան ոտերը լիզեմ, որ կարողանամ առնել: Փորձանք է, պատահմունք է, այսպէս էլ կը լինի, բա չես իմանում՝ յաջողութեան մէջ անյաջողութիւն էլ կը լինի. ինչու ես տիրում, դու լինես սաղ՝ ես, էլի կը գնաս Բագու, էլի կ'ուղարկես, այն ժամանակ ոչ թէ մինին մին կ'աշխատենք, այլ մինին հինգ, վեց, որովհետև այժմ փորձել եմ, ուստաց եմ գարձել: Այս էլ ասեմ, որ եթէ Պողոսը իրան կոտր չը հանի, եղած չեղածը չը ծածկի, սրան նրան անունովը անի, իմացած կացիր, որ, ինչպէս էլ որ լինի, տղան պոկ կը տայ: Սկի սիրտ մի կտրիր այս ընկերութիւնից, էլի ասում եմ, Աստոծով լաւ կը լինինք:

Ստեփանը հաւատաց Սաքանի շինծու խօսքերին և սիրտը բոլորովին կորւեց զիւղից: Նա մի կերպ Սաքանի միջնորդութեամբ մի տեղից պարտք վեցը բեց, թողեց տունը տակը տակ, գլուխը գլուխ, առանց մի կորեկի չափ անգամ զգացւելու գնաց Բագու:

«Ի՞նչ տեսաց ես, ի՞նչ իմացայ ես, ասաց Թագուհին Ստեփանի գնալուց յետոց, ի՞նչ՝ եկաւ,

ինչո՞ւ գնաց և ինչո՞ւ ոչ մի կարգադրութիւն չ'արաւ. մեր վար անողը ո՞վ է, մեր հնձողը ո՞վ, առանց փողի ո՞վ է անողը. ասենք ոսկու փողը տսել է, բա մեր բերանի հա՞ցը. հա, երեխ Սաքանի հետ խօսել է: Բոլորը դէն, ախր սկի մին չը խօսաց, մին չը հարցրաւ ի՞նչպէս էինք ապրում իրանից յետոց, այսուհետև ինչ պիտի անենք. հէնց որ ուզում էիր հետը խօսալ, ունքերը վրայ էր տալիս. տնից դուրս գալիս, չը գիտեմ, մի ուրիշ տեսակ երևաց աչքիս. բա ասա պրծաւ էլի մեր լաւ ապրելը. բազդի աչքը դուրս գայ, էլի ինձ եկաւ, քոռացաւ: Գնալու ժամանակը, գնալու ժամանակը, սկի մտքից զուրս չի գալիս, մի դարտակ խօսքը ինչ է, այն էլ ափառաց ասելու. բա այսպէս քոռ բաղդ կը լինի, որիմ ճակատին է գրւած: Եւ երկար բարակ մտածելուց յետոց աւելացրաւ. Է՛հ, տեսնես ինչ է պատահել, կամ գործն է կիսատ թողել կամ վնասել է, գնում է վերջացնի: Տէր Աստուած, դու նրան բարի ճանապարհ և գործին յաջողութիւն տաս»:

ԺԼ.

Սաքանը շատ ուրախացաւ, որ Ստեփանը շուտով գնաց և իւր ասածներին հաւատացած գնաց: «Թող գնայ, էլի ապրանք ուղարկի, ասաց Սաքանը, նա այնպէս էր զզւած գիւղից, որ էլ չեմ կարծում մէկ էլ յետ գառնայ գիւղը. այդ լաւ է, ինչ

ուղենամ՝ կ'անեմ այսուհետև, իմ վախս դրանից էր, դա էլ չը կայ, բանս բան է: Այսօր հէնց Թագուհին մի քանի բաներ է ուզել, կը տանեմ, նորա կակուղ դամարը արդէն գտել եմ»:

Այսպէս Սաքանը մտածելով մանրունքը վերցրեց և գնաց Թագուհու մօտ:

— Բարով, սանամէ՛ր, Ստեփանից նամակ ունիմ, սաեց Սաքանը, աչքդ լոց, գործը լաւ է. ուղած բաներդ բերել եմ, լաւերն եմ ջոկել, ախր բա ես վաս ապրանք կը տամ իմ ազիզ սանամօրը. դէ նստի՛, ինչ ես վեր կենում: երեխաները այնտեղ իշրանց համար խաղում են, էլ ինչո՞ւ ես կանչում, նստի ա՛. Է՛հ, ցաւերս նորոգւում է, որ տեսնում եմ էլի քեզ այնպէս, ինչպէս առաջ էիր. ախր ինչպէս ես եմ քեզ հետ վարւում, ուզում եմ, որ դու էլ այնպէս վարւես:

Ճիշդ է Թագուհին նստեց, բայց վա՛յ այն նըստելուն:

— Մի բան եմ ասում, կնքահա՛յր, չը նեղանաս, զարձաւ Թագուհին ամաչելով:

— Տամ ասա՛, քեզ մատաղ, դու բան ասես ես նեղանա՞մ: որ Աստուածդ ուրանաս, ասես, գնա՛սարիցը տակը ընկիր, յետ կենողը չեմ, ինելքդ ո՞ւմ է գնացել:

— Վերցրած ապրանքի գինն ասա՛, որ ցորենը չափեմ տամ:

— Դէ, դէ, էլի կնիկարմատ է, հէնց ուզում ես

դուռը երեսիդ փակ մնաց. սրանից յետոյ թէ ես ձեր դռները կոխեմ՝ ասա՛ թի՛ւ երեսիդ. հերիք է, ես ինչ եմ ասում, աս ինչ. բա այսքան խօսքերից մէկը մոքումդ չը մնաց, բա էլ ո՛ր օրւաց համար ենք մենք։ Ստեփանի տան համար բան պէտք լինի և փողով տա՞մ. ինչ որ տւել եմ յետ կ'առնեմ, կրակը կը գցեմ և էլ ձեր դուռը չեմ տեսնի՛ Աեանքումն գեռ մէկը այնպէս սրտիս չի կպել, ինչպէս այսօր դու կպար։

—Ես չե՛մ իմանում դու. ինչ սրտի տէր ես, բայց լաւն այն է, որ վերցնես։

—Ելի փողի անունն է տալիս, որ այդպէս է՝ երեխ ուզում ես, որ զնամ՝ այստեղից էլ չը գամ. լաւ, ես էլ կը գնամ, ասելով ուզեց իբր թէ տեղից մեր կենալ։

—Սանահէ՛ր, դէ որ ցորենը չես վերցնում, մի ճուխտ գուլպայ ունիմ, այն լինի, վերցո՛ւր։

—Ա՛յ դրան խօսք չ'ունիմ. բայց ինչպէս հագնեմքո մատներով արած գուլպան. սկի կը հազնե՞մ, կը պահեմ իրեւ իշելիք։

Թագուհին գուլպան բերաւ. Սաքանը ձեռիցը առնելով սկսեց գովել. «Ի՞նչ գեղեցիկ է, կեանքումն գեռ այսպիսի գուլպայ չեմ տեսել. ա՛յ ձեռքաջուր, ոսկի է ո՛սկի, ես իմ Աստուածը. չէ, չեմ հազնի, կը պահեմ աչքիս լուսի պէս»։

«Գուլպայ է տալիս, մտածեց Սաքանը, այն էլ Ստեփանի համար արած գուլպան, տե՛ս որքա՞ն

ինձ սկրում է. ժամանակն է, էլ դէս դէս չը կացու։ —Այս ձեռքերո՞վն ես արել, ասելով ձեռքը բռնեց, և ուզում էր սեղմելով ասել՝ «Ղիլար կենաց, բայց խօսքը բերանումը մնաց, որովհետեւ Թագուհին կայծակի արագութեամբ ձեռքը յետ քաշեց։

—Ինչ ես ձեռքդ քաշում. բա այդպիսի ձեռքաջրատէրի ձեռքին չեն մտիկ տա՞յ, ճիշդ ջահիլի համար է, ինձ կը սազի չէ՛, սանամէ՛ր. և այնպիսի շարժմունք գործ դրաւ, որ Թագուհին կիսով շափ հասկացաւ և մի քիչ հեռացաւ։ Սաքանը կրկին մօտեցաւ և սկսեց դարձեալ իւր գովասանքը և հանաքները։ Թագուհին կարմրել, արիւնը տւել էր զլիին, չէր իմանում ինչ անի, մի կերպ, մի հնարքով ուզում էր կամ դուրս գնաց կամ երեխաներին կանչի։

—Բան չ'ունիս խօ, ինչո՞ւ ես դուրս գնում, խօսում ենք, էլի՛. դու էլ տեսնում ես որ այնքան գործ ունիմ, որ միշտ չեմ կարողանում գալ. է՛հ, Ստեփանը հիմա այնտեղ քէֆ է անում. թի՛ւ, այստեղի նման չի հու. այստեղ գիւղացիներ են, չեն հասկանում. այնտեղ լաւ է, անկնկատէր մարդն էլ է կնկատէր։

—Է՛հ, հողս այնպիսի կնիվների զլիին, մենք մատուշկաց չենք հո՞ւ. Ստեփանը այդպիսի բան չի անիլ։

—Հա՛յ, հա՛յ, մին թէ առնես գնաս, նայես, այն ժամանակ միայն կը հաւատաս թէ ինչեր կայ

այնտեղ, ինձնից հարցուր, ինչ որ ասում եմ ինձ հաւատառ։ լաւ, ես մի կողմը, բա այնտեղից եկողը, նամակ բերողը ինչ է ասում։—Ստեփանը լաւ գործում է, ասում է, բայց ինչ կ'անես ստացածը ցրիւ է տալիս, ել աչք չունի դիւզի վերայ. ի հարկէ աչք չի ունենալ, յիմար չի հու։

—Նա՞, Ստեփանը... վա՛յ քո բերողի ծամը կտրեմ, այդ ինչ օյն դրիր դլիսիս, ել ես ինչ պիտի անեմ այս աշխարհում մենակ. վա՛յ քո ծնած օրը սեանայ, դորա համա՞ր շուտ փախար գիւղից։ Եւ Թագուհին ել չ'իմացաւ թէ ինչպէս նստեց տեղը. արտասուքը հեղեղի պէս էր թափում։ նա այդ րոպէին իրան զգաց մենակ լայնատարած աշխարհում և բաղդի ձեռքին խաղալիք։

—Սանահէ՛ր, դլխովդ պտուտ գամ, ոտիդ տակի հողը լինեմ, դորդ ես ասո՞ւմ, բա այդ օյն՞ն է որ դլիսիս է դնում, լացակումած հարցրեց Թագուհին։

—Դորդ չը լինի ել ինչո՞ւ եմ ասում, շատ ուրախ եմ ասելո՞ւ. քեզ եմ ասում, ուրիշը լինէր չէի ասիլ, որովհետեւ քեզ համար է իմ սիրտս ցաւում։

—Ե՛, սրանից յետոյ ել ինձ մեռած համարիր, աւելի լաւ է դուռը երեսիս փակես և գնաս, ել ինձ ոչ մի բան հարկաւոր չի, երբ որ եղած հացը կը պրծնի, ել ուտելու բան չենք ունենալ, այն ժամանակ թո՞ղ մեռնենք։

—Ինչ է ասում, ինչ է ասում. խօջայ Սէրդին

մեռած է ելի, ել ո՛ր օրւայ համար եմ ես, սկի ոչ մի բանի պակասութիւն չես քաշիլ, մի՛ վախիր, այս ջանը քեզ համար չը դնողին մարդ չեմ ասի, խելքդ ո՛ւմ է գնացել. լաց մի՛ լինիր, սանամէր, շատ վատս է զալիս, չեմ կարողանում աչքերիդ արտասուքը տաներ. ես գնում եմ, չը լինի ելի լաց լինես, սիրտդ մի քիչ պինդ պահի՛ր, ինչ է ամեն մի բանի համար լաց ես լինում, ասելով դուրս գնաց։

Սաքանը կիսով չափ նպատակին հասած համարեց. «Ու թող այժմ ել առաջւաց նման մտածի, Ստեփանը նորա աչքում ել մի կոսէկի դին չ'ունի, դէ թող այժմ ել ձեռքը յետ քաշի. նորա օգնողն է սրանից յետոյ նորա տէրը. ինչ պիտի անի որ, ինիկ չի՝ մազը երկար, խելքը կարճ, բանս բան է. դլխահարկի, վարուցանքի ժամանակը կը դայ՝ ո՞վ է տալու, ո՞վ է օգնելու, եթէ ոչ ես. նա ել կ'իմանայ թէ քրոտինքովս աշխատած փողովն եմ օգնում, Ստեփանը սաղ լինի։»

Թագուհին մնաց մենակ. դրութիւնը վատ էր. երազած ամրոցները անդառնալի կերպով շքացան, իւր և որդկերանց խեղճութիւնը միայն աչքի առաջ պատկերացաւ, իսկ Ստեփանը երևեցաւ իրիւ մի անբարոյական, փշացած մարդ, որ չը գիտէ ընտանեկան սրբութիւն, որ չը գիտէ ծնող հօր պարտականութիւնը. նա, մի խօսքով, մի հրէշ էր, որից, կարծես, ուզում էր այդ բոպէին փախչել, ուզում էր այն տնից, որի մէջ միասին ապրել են, հեռանալ, կորչել

առանց յետ նացելու որպէս զի տունը և տան եղած
չեղածը տեսնելով չը մտաբերի նրան:

«Ուհ, Ստեփան, ասաց Թագուհին մի քիչ հան-
դարտելուց յետոյ, այդպէս էլի, այդպէս խարեցիր
էլի ինձ, զնացիր որ էլ յետ չը դառնաս. էլ ինչո՞ւ
ես դուակ ծածկում, էլ ինչո՞ւ ես քեզ մարդ ա-
սում, ա' տղամարդ մեռնես զու, սրանից յետոյ
կնիկդ, երեխաներդ ուրիշ պիտի պահի և ինչե՞ր
պիտի ասեն, ո՛ւհ, փշանաս զու, ինչպէս փշացել ես.
էլ ի՞նչ երեսով իմ պակաս—պուատը ասեմ Սաքա-
նին, շատ էլ նա պատրաստ է տալու, բայց ո՞ր
գիտէ դու էլ չես գալու և իւր պարտքը չես վճա-
րելու։ Ոխ, Ստեփան, կեանքդ սեանաց, ինչպէս իմը
սեացրիր, էլ ես ինչ յուսով տանը նստեմ բանիս
կենամ, բա դու ինձ այդպէ՞ս էիր սիրում. ինձնից
լաւը ճարեցիր, ա' հողեմ դորա գլուխը՝ ջերդ ու-
տելու, տկրոր դուրս անելու քեզ։ Ախ Ասուած, այն-
քան ապրեմ, որ Ստեփանի վերջը տեսնեմ։»

ԺԹ.

Թագուհու ձեռքը էլ բանի չեր կպչում. նա,
կարծես, ինչ որ անում էր ձախ ձեռքով էր անում.
մի բան կորցրածի պէս, ապուշի նման, չը գիտէր
ինչ էր անում. կերածի, խմածի համը չը գիտէր,
հանգստութիւն չունէր ամբողջ օրերով, իսկ գիշեր-
ները՝ քուն։ Նա ընկեր հարևանի հետ, կարծես, կըտ-
րել էր իւր յարաբերութիւնը, էլ առաջւայ Թագու-

հին չեր, որ ոտը կախ տար աղբրին ջուր լցնելիս
կամ աղբրից գալիս. խօսքը, բառն էլ էր կտրւել
նորա բերանից, շրթունքը շրթունքին դրած, ապուշ
և կասկածոտ աչքերով կը գնար ջրի, կը գար։ «Ի՞նչ
է պատահել Թագուհուն, յաճախ բչփչում էին քիթ
քիթի տւած կանացքը աղբրին, հնարքով ընկած չը
լինի, զիր ու փտիկ արած չը լինին։ Այսպէս ամեն
մէկը մի կարծիք էր յայտնում, բայց մի որոշ եզրա-
կացութեան չէին դալիս։»

Թագուհին թէե կորցրած էր համարում Ստե-
փանին, բայց մի օր երբ շատ լաց եղաւ, անիծեց
Ստեփանին, սե արաւ իւր ծնած օրը և վերջը երբ
արտասուքը մի քիչ հանգստացրեց վշտացած սիրտը,
սկսեց հանդարտութեամբ մոածել և յանկարծ մի
լոյս ծագեց Թագուհու գլխում, մի լոյս, որ թէե
մազի չափ երևեցաւ աչքին, բայց որից սիրտը ժա-
մանակաւորապէս կանգ առաւ, հանդարտւեց։ Նա
մոածեց Սաքանին ինդրել, աղաշել որ Ստեփանին մի
կերպ տնով անի։ «Սաքանը ինձ համար ինչ ասես
կ'անի, մոածում էր Թագուհին սրտապնդւած, նա
բարի տղայ է, նա այնպէս կ'անի, որ Ստեփանին
հէնց վաղը բերել կը տայ։ Նորա ոտերը կ'ընկնեմ,
միշ կը տամ նորա ոտերի տակը, կ'աղաչեմ, կը պա-
շտամ որ այս որբերին խեղճ գայ։»

Այսպէս մոածելուց յետոյ շուտով վերկացաւ և
ուղում էր թէ դէպի Սաքանենց տունը գնայ։ մէկ էլ
տեսաւ Սաքանը երեսն ի վեր ելաւ։

— Վա՛յ, կնքահա՛յր, հէնց ես ուզում էի
ձեր տունը գալ, ցաւդ առնեմ, ոտերիդ մատաղ
գնամ, կնքահայր, թուղթ ու գրիչդ ա՛ռ, մի գիր
գրի՛ր ընկերոջդ, գրիր ասա՛ հիւանդ են երեխաներդ,
կնիկդ, շուտ վերկաց եկ, էլ ճար չը կայ:

— Ինչ ես ասում, սանամ՛ր, կարծում ես նա
չի իմանալ, որ խարում ե՞ս. նամակդ կը պատոի,
դէն կը գցի քեզ վերաց ծիծաղելով. ի՞նչ ես շատ
էլ դարտ անում, այդ ինչ ես դառել, բոլորովին
ձեռք ու ոտից ընկել ես, ուրիշի խօ չե՞ս յայտնել:

— Ոչ ոքի, ոչ ոքի չեմ յայտնել, էլ հանգստու-
թիւն չ'ունիմ, թէ մի ճար ունիս, ճար արա՛, թէ չէ
ես կը մեռնեմ այսպէս, խեղճ են այն սկերեսի որբերը:

— Ենչ եմ էլ սպասում, մտածեց Սաքանը, լաւ
ժամանակն է, էլ ինչ պիտի ասի որ:

Այսպէս մտածելուց յետոյ Սաքանը պարզ-որոշ
իւր միտքը յայտնեց և աւելացրեց, որ իւր ձեռքին
շատ հեշտ է Ստեփանին բերիլ տալ. նա չը սպասեց
իւր պատասխանին, ձեռքը գցեց Թագուհու վզովը
ուզում էր հանաքներ անել, մէկ էլ պատն ի վեր
դրած մահակը Թագուհու ձեռքումը տեսաւ: Սաքանը
թիկոնքի վերաց մի քանի հարւած ընդունելուց
յետոյ շատ աշխատեց մահակը առնել՝ չը կարողա-
ցաւ, Թագուհին տղամարդի պէս առաջն արած ծե-
ծելով դուրս հանեց տնից:

— Պա՛, պա՛, պա՛, ժամանակս փոխւել է, հեալով
տուն ընկաւ Թագուհին, այն տեսակ լեզու բանեցրաւ,

այն տեսակ բաներ արաւ, որ եղբօր տեղ ընդունեցի.
տես, տես նորա մտքին նայիր, չորանաց քո ծծած
ծիծը: Քոքերողի ծամը կարեմ, Ստեփան, դու էլ ա-
սում ես գտակ ունիմ գլխիս, կնիկդ անտէր ես թողել
սրան նրան ձեռքին, դու գնացել այնտեղ շնութիւն
անում: աբուոը հացի հետ ես կերել ինչ է, ա՛յ
անխիղճ. ա՛խ Աստուած, ես մարդ լինէի մի դուրս
գայի համարձակ, բոնէի այդ քոսոտին խեղդէի. Ստե-
փանին, Ստեփանին՝ նա ի՞նչ մեղ ունի:

Թագուհին այժմ բոլորովին մենակ զգաց իրան.
Էլ ոչ մի տեղից յոյս չ'ունէր, օգնութիւն անող չ'ու-
նէր, միտում էր ինքը իրան գլխի ճարը տեմսի, բայց
ի՞նչպէս պիտի տեսնէր, կնիկ տեղովը ի՞նչ պիտի
անէր, ո՞վ էր նորա հարկի փողը տւողը, ո՞վ էր նորա
հունձ անողը, — ոչ ոք չը կար. ուրիշ մօտ բարեկամ
չը կար, հօրանց ու մարդու կողմից բարեկամները
ողջ Բագու էին, գնացել, իսկ օտարին ի՞նչպէս դիմէր,
ո՞վ նրան փող կը տար:

«Ախ Աստուած, ճարս ինչ պիտի լինի, ասաց
Թագուհին դառնացած, դեռ այժմ կ'ապրեմ քարին
քացի տալով, բայց յետոյ... Ստեփան աղա՛յ, մէկդ
երկու չը դառնաց, որ դու ինձ այս օրին հասցրիր,
ինչ անեմ, ինչ, մեռնեմ աւելի լաւ չի. բայց այս
ինչ անեմ, ինչ, մեռնեմ աւելի՝ լաւ չի. բայց այս
որբերը ի՞նչ անեն, ո՞ւր գնան, ո՞ւմ ձեռք մեկնեն.— Սա-
քանին. ա՛խ, Սաքան, ոչ կանաչ կարմիրդ կապես, դա-
տածդ վերմակի տակ ուտես, ոչ ուրախութիւն տեսնեաւ:

«Ո՛ւհ, ո՛ւհ, կապտած կը լինի տեղերը անպատճառ, ձեռքը տանելով մէջքը շշնջաց Սաքանը, յետ յետ նայելով. գնամ, գնամ տուն արադ քսեմ: Տեսար այդ անիժածը ինչ դրաւ դլիսիս, կնիկարմատ տեղովը ինձ ծեծեց. դուրս չը գայ չաւ անիս, անունս կոտրի: Դու սպասիր, Թագուհի, այդ քեզ վերայ արժան չի նստիլ, քեզ այն օրին հասցնեմ, որ ոտերս ընկնես աղաչես. լաւ, Թագուհի, այսօր էգուց հարկահանը կը գայ դուռդ կը կարի, ասենք այս փարի մի կերպ կ'ապրես, կիսովի հնձել կը տաս, եկող տարին ի՞նչ պիտի անես, ով պիտի քեզ պահի. ա'յ գիտի բագու հա՛, ո՛վ է տեսել այդպիսի բաներու:

Օրը մթնել էր. Թագուհու դուռը փակ, երեխաները քնած, ձայն-ձունը կտրւած էր. միայն Թագուհին էր, որ այդ մթութեան մէջ չարչարւում, տանջւում էր: Քունը աչքից փախած՝ նա անդադար շրջշրջւում էր տեղերում. Նորա մտածողութիւնը առաջ ոչ այլ ինչ էր եթէ ոչ Ստեփանը, իսկ այժմ Սաքանի արարքը երկրորդ մտածողութեան նիւթ տւաւ. Ստեփանին բոլորովին կորած համարեց, որովհետեւ Սաքանին ծեծեց, դուրս քշեց տնից. Սաքանն էր մենակ, որ մարդուն կարող կը լինէր Բագուից բերել գիւղը: «Ինչ պիտի անեմ ես—ահա՛ այն հետեւանքը, որ դուրս բերաւ Ստեփանի և Սաքանի վարմունքից. երկար ու բարակ չը մտածեց, պարզ-

որոշ աչքին երևեցաւ իւր և որդիկերանց դրութիւնը: Որոշւեցաւ Թագուհու վիճակը, էլ ուրիշ բան չէր մտածում բացի մուրացկանութիւնը, երեակայում էր թէ ինչպէս երեխաներին ոտաբորիկ յետել դցած, իսկ ինքը ցնցոտիներով ծածկւած, տւողին օրհնում, իսկ չը տւողին թթու դէմքով նայում մինչև անգամ անիծում, անցնում է: Միտն ընկաւ նոյնպէս, որ իրանք ոչ մի ուրախութիւն չը պիտի տեսնեն, գիւղացիները էլ իրանց մարդու տեղ չը պիտի գցեն: ուրախութեան ու տրտմութեան ժամանակ, այլ իբրև ողորմելի, թշւառ ընտանիքի՝ միշտ պիտի կոխ տան, անցնեն և իրանցով ծաղր ու ծանակ անեն: Այս բոլորը միտքը բերելուց յետոյ մի սարսուռ զգաց ներսը և լաւ ապրելը իբրև հակապատկեր երևեցաւ աչքերին: Անաքանը բերել կը տայ Ստեփանին, էլի կ'ապրենք միասին և լաւ օր կը քաշենք. չէ՛, չէ՛, չեմ կարող տանելի, սոված, ծարաւ ինչպէս պիտի ապրեմ, Ստեփանը այնտեղ իւր գլուխն է պահում, իսկ ես այստեղ...» և յանկարծ լեզուն կծեց, չը վերջացրաւ, մինչև անգամ չ'ուզեց մտածած լինի, ինքն իրանից ամաչեց, ճակատը սառը քրտինք կոխեց և այդ դրութեան մէջ աւելի լաւ համարեց սոված, ծարաւ դռներին ընկնել հաց մուրալ, քան թէ այդ քայլը անել:

«Վի՛, ծամն կտրեմ, քոռանամ ես ճուխտ աչքերով, այս ի՞նչ է իմ մտքովը անցնում, այրուին, խորովին Ստեփանն էլ, Սաքանն էլ. նեղը ընկած տեղը

ինչ պիտի անեմ, դնենք թէ այն տղամարդ մեռածը չը կայ, մեռել է, աղքատութիւն կ'անեմ, երեխաներիս կը պահեմ։

Այսպէս մոռածելուց յետոյ Թագուհու սիրով փոքր ինչ հանդարտուեց և ջարդած կորատւածի պէս վերմակը գլխովը քաշեց, քնի աշխարհը ընկաւ։

Ի.

Սաքանը մոքումը դրաւ Թագուհուց անպատճառ վրէժ առնել։ Նա առ այժմ մինչև այդ վրէժի գործադրութիւնը աչքով պահում էր Բագու գնացողներին կամ այնտեղից եկողներին, որ տեսնի Թագուհու և Ստեփանի մէջ նամակագրութիւն չը կայ խօ, և երբ տեսաւ որ բոլորովին կորւած է այդ երկուսի յարաբերութիւնը, Թագուհուն այնպիսի դրութեան մէջ դրաւ, որ ինքը, իւր ոտով գայ, աղածի։ բայց Թագուհին ոչ մի նշան ցոյց չը տւաւ և այդ եղելութեան մասին ոչ ոքի չ'ասաց։ Սաքանը իւր միսն էր ուտում, զարմանում էր թէ ի՞նչպէս մի կին — մի խեղճ արարած, անտէր, անտիրական ոչէն է ասել, առել կանգնել և ամեն նեղութեան համբերութեամբ տանում է. իսկ երբեմն երբ խորն էր մոռածում՝ թէ ինչպէս ինքը ծեծւեց մի թոյլ, մի ոսի տակի հող արարածից, արիւնը քիչ էր մնում գլխին խիի։ «Նա, նա ինձ նման սովորաքեարին ծեծի՛, տնից դուրս հանի՛. կաց, խելքը կարճ կինարմատ, դու դեռ ինձ չես ճանաչում, կարծում ես քո մարդի

նման մշակ եմ, ես սկի լայազ չեմ անում տանուտէր ու դատաւորի հետ նստել ասել, խօսել, դու պէտք է ինձ ծեծե՛ս քո կնիկ տեղովդ. սպասի՛ր, այնպէս ճաշդ եփեմ, որ քէֆդ գայ։

Ամեն անդամ ասում էր այս խօսքերը, բայց դարձեալ սիրաը չէր հովանում, նա անպատճառ ուզում էր վրէժ առնել, որովհետեւ պարզ տեսնում էր Թագուհին կակլողը, իւր թքածը լիզողը չէ։

Սաքանի առաջի բան ու գործը եղաւ Թագուհու անունը կոտրել, աշխարհքով մին անել, դորա միջոցը դտաւ. մի օր հարեւանների կանանց մօտ նատած մանրունք էր ծախում՝ սրան նրան խաբելով, հանաքներ անելով, սորա նորա վերաց բամբասելով՝ խօսքը յաջողութեամբ շուռ բերաւ Ստեփանի վերայ։

— Ստեփանը լաւ տղայ է, ասաց նա, բայց ինչ կ'անես կնիկը մի քիչ լաւ ճանապարհի վերայ չէ, ափսո՛ս աղայ։

Կանացը շուռ տւին երեսները, իբր թէ չէին ուզում լսել, այն ինչ հոգեկան մեծ բաւականութեամբ պատրաստ էին լսելու, որովհետեւ մի կնոջ վատ արարմունքը, բարքը պիտի պախարակիւ։

— Աղջի՛, ոնց կը լինի այդպիսի բանը, ասաց կանանցից մէկը, զո՛ց, զո՛ց, վարսս կտրեմ, նեռը ծնւել է։ — Խօսողը վախենալով մի գուցէ խօսակցութեան թէլլ կտրւի, առելացրեց լսաւ երեցթին կամաց, իբր չուզենալով Սաքանը լսի. «Նա խօջաց Սէրգին ի՞նչպէս իմացաւ»։

— Ո՞նց իմացայ... է՛, ա՛ կնանիք, ձեր ցերեկւազ մտածածը ես գիշերը քնած ժամանակն եմ մոտածում. ինձ խօջաց Սէրգի կ'ասեն հա՛, Բագու կացած, ամեն ինչը սովորած. ման գալուց, խօսալուց, հէնց մինչեւ անգամ նայելուց ճանաչում եմ մի աչքաճպումը թէ նա ինչ պառաղ կը լինի՝ չա՞ր թէ բարի:

— Աղջի՛, մոռացել ես քեզ ինչ եմ պատմել նորա մասին, դեռ մի հզոկ չը կար մանուշակի փնջեր էին տալիս աղբբին, դարձեալ իբր թէ ծածուկասաց կանանցից մէկը:

— Ողորմի քո հօրը, էլ ես ինչ ասեմ, դու ինձնից լաւ գիտես նորա տակն էլ գլուխն էլ. բայց նրանից այն տեսակ բաներ եմ տեսել, որ այդ փունջեր ստանալը ոչինչ բաներ են:

— Վո՞ւց, վո՞ւց, աշխարհս փոխւել է, ով է տեսել այդ տեսակ բան, տեսնես ի՞նչ է արել. խեղճ Ստեփանը նորա համար շուտ փախաւ է՛, իրար հետ քչփշում էին կանայք և սրտատրոփ սպասում էին Սաքանի բերան բացւելուն:

— Է՛, լաւ չէ ասելը, խեղճ է, Ստեփանի ականջը կ'ընկի, կը գայ սաղսաղ կը մորթի, ասաց Սաքանը:

— Գլխներիս ձի՛ է քացի տւել ինչ է, որ բերաններիցս հանենք, միաբերան վրայ բերին մօտի նստածները:

— Հարցրո՛ւ, հարցրո՛ւ, տես ինչ է տեսել, բիշուրիշտորում էին չըխօսկանները աւելի մօտ նստածին, որ տարիքով կին էր:

— Նորդ է, ասացի որ Ստեփանի ականջը ընկնի նորա բանը վատ կը լինի, բայց որ ծանր ու թեթև անենք, կը տեսնենք, աւելի լաւ է իմանայ, որ նորա կապը քաշի, ճանապարհ բերի: Ե՛, դէ ինչ էք ուղում իմանալ, նա լա՞ւ բան է արել, որ ասեմ էլ. էլ նրան գիւղումը պահելի չի, ցաքում պիտի դնել կրակել:

— Ասա՛, ասա՛ լաւ, տեսնենք ինչ է արել այդ ծամըկուտուրը, դարձաւ տարիքով կինը:

— Եատ երկար է դրա պատմութիւնը, ես կարճ կ'ասեմ՝ դուք երկար հասկացէք. — Մի գիշեր յետ էի դառնում տուն. Ստեփաննենց տան մօտովը անցնելիս, մէկ էլ ականջովս մի ձայն ընկաւ, նայեցի չորս կողմօ, ոչինչ չը տեսայ, սաստիկ մութ էր. ականջներս սրեցի, աչքերիս զօռ տւի, մնացի մեխւած տեղս կանգնած, աչքերս ջոկեց, մէկի գլուխը երևեցաւ, կնկայ գլուխ էր, մէկ էլ աչքերիս զօռ տւի մի ուրիշ զլուխ էլ աչքովս ընկաւ, այդ էլ տղամարդի էր: Դէ սա բաւական է էլ ինչ ասեմ, վերջը դուք իմացէք:

Կանանցից մէկը բացականչում էր. «Քո բերողի ծամը կտրեմ», միւսը՝ «Քո դուրս եկած օջաղը քանդւի, պիրիշակ մնայ», մի երրորդը՝ «Ծծած ծիծդ չորանար», իսկ չորրորդը, որ աւելի անկեղծ էր՝ «Սեր տանուտէրին մարդ չեմ ասիլ, որ նրան ցաքումը չը դնի, կրակ տայ»:

— Դէ լաւ, վերջացրո՛ւ տեսնենք ինչ է եղեւ ինդրեց տարիքով կինը:

— Դէ լաւ ասեմ. նրանք ինձ չէին տեսնում, սկսեցին անուշ-անուշ զբոյց անել, ամօթը դէն, հեռի երեսաց, այնպիսի բաներ էին ասում, այնպիսի լիրք լիրք խօսքեր էին ասում, որ էլ չեմ կարող ասել, հէնց մնացի այնտեղ քար կտրած կանգնած: Այսպէս ուզում էի տեսնել վերջը ինչ պիտի լինի, որ յետոց մի լաւ քոթկեմ երկուսին էլ, բայց որտեղից էր այդ ժամին մէկ էլ տեսնեմ մէկը էշը առաջը դցած տմունքալի չո՛ւ չո՛ւ անելով եկաւ. հէնց որ այդ ձաշնը լսեցին, իրար վերջին անգամ համբոյր տւին և մարզը կրակ կտրուած ծլկեց. Թագուհին չը կարողացաւ ձեռքի մեկնած բանը նրան տալ, վէր ընկաւ. էլ չը կարողացայ ոչ մէկին հասնել, որ ձաշները եփեմ, հէնց մնաց դաղը սրտումն: Էշաւորը գլուխը քաշ դցած գնաց, մնացի մենակ. մօտեցաց նրանց չափարին և սկսեցի ման դալ, դտնել, տեսնել ինչ բան էր, որ Թագուհին վէր դցեց. երկար պտուտելուց յետոց վերջապէս, էլ ինչ գլուխներդ ցաւացնեմ, գտայ մի ճուխտ գուլպայ. ի՞նչ կը տաք ցոյց տամ, ասելով հանեց գուլպան և նրանց առաջը դրեց:

Էլ կանանց բացականչութիւններին ու հայ-հոյանքներին վերջ չը կար:

— Վի՛, վի՛ աղջի, այդպէս բան կը լինի՞, զորդ որ նորա արած գուլպան է:

— Հա, նա է միայն մեր թաղում այդ տեսակ նախշուն գուլպաներ անում, աւելացրեց մի ուրիշը:

— Նախշուն գուլպաներ է անում, որ ջահէլներին բաշխի հա՞, ասաց Սաքանը:

— Բոլորովին բերաններիցդ չը հանէք, մի քար տակին գրէք մի քար գլխին, դարձաւ տարիքովկինը, ինչ հարկաւոր է, Ստեփանը կ'իմանայ, արիւն կ'անի:

— Ոնց թէ բերաններիցդ չը հանէք, բա այլակս մնայ լաւ է, թող իմանայ, կապը քաշի, իբրև բարեկամ նրան՝ ինձ էլ է ամօթը կպչում չէ, վրէժինդութեամբ լցւած բարձր ձայնով ասաց Սաքանը:

Մինչեւ արել մայր կը մտնէր գիւղացի կանայք համարեա բոլորեքեանք էլ Սաքանի այս շինծու պատմութիւնը գիտէին. չը նայելով նոցանից ամեն մէկը՝ իւր հարեանին ու բարեկամին պատմելուց յետոյ՝ ինդրում էր բերաններից չը հանել, բայց չէր անցնում մի րոպէ, բերաններում տաք ջուր չը կարողանալով պահել՝ ուրիշին էին յացոնում աւելի զարդարուն ծաղկացրած կերպով և աւելադրութիւններով:

Այսպէս կանայք՝ ճիշդ, որոշ գաղափար կազմելով Թագուհու վերայ՝ վճռեցին նորա հետ երբէք չը խօսել և յարաբերութիւն չ'ունենալ:

ԻԱ.

Թագուհին տան եղած չ'եղածը ծախել ծախ-ծխոտել էր և մի կերպ կառավարել. առաջ՝ մինչեւ նորա անունը կոտրւելլ՝ էլի այս ու այն օգնում էր

և ապրում էր քարին քացի տալով, բայց այժմ ոչ
մէկը չի ուզում ձեռք մեկնել նրան, չի ուզում
մինչեւ անգամ կիսովի վարը անել, հարամ են հա-
մարում նրան, նորա տունը, նորա ունեցած չու-
նեցածը: Թագուհին այդ դժւար դրութեան մէջ մի
կերպ նամակ գրել տւաւ Ստեփանին, յայտնեց իւր
դրութիւնը, բայց նամակը տեղ չը հասաւ, որովհետեւ
Սաքանը ճանկն էր դցել:

Ել ոչ մի տեղից յայս չ'ունէր: Գիշեր էր. երե-
խաները չորս կողմը կտրած ժընգժընգում, հաց էին
ուզում. նա աչքը չորս բոլորը դարձրեց մի բան չը
դտաւ, որին կարելի լինէր փող տալ, երեխաների
քաղցը յագեցնել. մինչ անեմ, Աստուած, դուռը
փակեմ և միասին քաղցից կոտորւենք, բա ես ինչ-
պէս տեսնեմ այս իմ կուրացած աչքերով երեխանե-
րիս մահը. ո՛ւհ, չէ՛, չէմ ուզում, աւելի լաւ է ես
ինձ կը խեղդեմ այս գիշեր և թող ինչ լինում է լինի
ինձնից յետոյ: Քնեցէ՛ք, դարձաւ բարձր ձայնով լա-
ցուկումած երեխաներին, էգուց ձեղ համար հաց
կ'առնեմ, այժմ չը կայ, քնեցէ՛ք, որդիք. իսկազ
երեխաներ, քթի տակ ասաց արտասելով, ինչպէս
քնեն, այսօր ի՞նչ են կերել, է՛հ, երեխ ինձնից յետոյ
կը խղճան ձեղ վերայ և այն ժամանակ կուշտ կ'ու-
տէք:

Այսպէս Թագուհին կեանքից ուզեց ձեռք վերց-
նել. չէր ուզում այլ ևս ապրել. մուրացկանութիւնը
միտը չէր գալիս թէ դժւար էր համարում՝ նա դորա

մասին այդ ճշնաժամին չը մոտածեց. ուզում էր շո-
տով, որքան որ հնարաւոր է, որդիկերանց այդ աղե-
կտոր ճայներից ազատւել:

Որդիները ժընգժընգալով, «հաց, հաց անելով,
աջ ու ձախ պառկեցին, քնով անցան; Թագուհին
մնայ նստած աչքերը. հերթին չուած. հերթը բաց
էր, տեսնում էր պարզ երինակամարը, ծալիին տող,
ցանցրիւ ասաղերը և դրանցից բարձր եօթներորդ
երկնքի վերայ իւր Արարշի աթոռը, որի վերայ նստած
Արարիշը աչալուրջ նայում էր բովանդակ համատա-
րած աշխարհին. նորա աչքերից չէին փախչում ոչ
հարուստը և ոչ աղքատը, ոչ բարին և ոչ չարը.
այդ բոլորը լաւ գիտէր Թագուհին և, կարծես, տես-
նում էր, որ իրան—աղքատին էլ Աստուած—իւր
Ամենաբարի Աստուածը նայում է, բայց ոչինչ չի
անում, լուռ միայն նայում է: Թագուհին չի ուզում
ինդրել, չի ուզում երեսի վերայ ընկնել, աղաւել
պաղատել՝ որբերի բերանի հացը տալ. նա շատ է
խնդրել, շատ է չոքէ չոք ժամում սեղանի առաջ
արտասուք թափելով ինդրել, բայց ոչինչ չի եղել.
նա իւր հաւատը մի մազի չափ անգամ չի խախտել
տեղից, այժմ հաստատ հաւատացած է, որ ինքը
մեղաւոր է, ապա թէ ոչ անմեղի աղաչանքը Աս-
տուած կը լսի, Աստուած չի թողնի, որ անմեղը
կորչի: Մեղաւոր է, ով գիտէ ինչ է արել, բայց
այժմ չի լիշում, գուցէ աղքատին երես է շուռ
տւել, գուցէ սուրբերի տակը ամեն տարի չի զնացել,

ժամում մոմ չի վառել, շաբաթ երեկոները խունկ չի ծխել։ Այս բոլորը միտն էր գալիս և այլ ևս չէր ուզում իւր մեղաւոր գլուխը բարձրացնել, Արարէի աթոռին նայել։

«Մեղաւո՞ր ես», կարծես զարադամի մի անկիւնից ձայն տռեց մէկը։

Թագուհին սրսռաց, դողդողաց, զարզանդեց և վախեցաւ նայել դէպի այն կողմը, որտեղից ձայնը եկաւ։ Լռութիւն տիրեց. ոչ մի ձայն չը կար, միայն ականջները թշրշում, վշշում էին. նա կարծես շշեց և ցնորւածի պէս բերանը բաց չռած աչքերը մի կէտի վերայ զցեց, մնաց անշարժ։

Երկրորդ անգամ զարձեալ լսեց նորա թշրշացնող ականջները՝ «մեղաւոր ես» խօսքը. բայց այս անգամ Թագուհին անդիտակցաբար բարձր ճիչ հանեց, գետնին կպաւ, կարծես ուզում էր ձեռքերով գետինը պինդ բռնել, որ ոչ ոք չը կարողանայ տեղից վերկացնել. նա ոյժ գործ դրաւ և կարծում էր մատերը հողի յատակի մէջ է խրել, ամուր բռնել և զլուխը գետնի մէջ կոխել։ Թագուհու աչքերից Ամենաբարի Աստուածը հեռացաւ, երեեցան սատանաները այլանդակ դէմքերով, երկար կէո կէռ պողերով, բարակ սուր սուր պոշերով, շրջապատեցին իրան, պար եկան, ծիծաղեցին, ժըմքը պապաց արին երեսին, թքեցին, հեռացան. Երկրորդ և երրորդ անգամ նոյնը կրկնելուց յետոյ՝ զլիսին, մէջքին թափւեցան, մազերը բաշեցին, պոկեցին, շորերը կտոր կտոր արին։

այդ բոլորը լաւ զգում էր, զգում էր մինչև անգամ ծանրութիւնը, որ իւր վերաց նստած շորերը կտորում էին սուր-սուր դանակներով, բայց ոչ մի շարժմունք, ոչ մի ձայն-ծալտուն չէր կարողանում հանել, քափու քրտինքի մէջ կորած, շնչառութիւնը արագած սպասում էր՝ ահա մի երկու րոպէից յետոյ պիտի շունչը կտրւի, սատանաների բաժին դառնայ։

Հեռացաւ սատանաների խումբը, բայց ահա մի ուրիշ խումբ մանր, բոլորովին մանր, թափւեցան վրան, ողջ մարմինը ծածկեցին, ամեն մի մազի ծայրից կախւեցան, քաշեցին, քաշքշեցին անկիւնից անկիւն, սիւների վրացով բարձրացրին, տարան հերթին հասցրին և այնտեղից պատրաստուում էին բաց թղոնել, կտոր կտոր անել։ Թագուհին լեղապատառ ուզեց հարաց տալ, օգնութիւն կանչել, բայց բերանումը լեզուն չորացել, քիմքին էր կպել, կամաց հաց հաց արաւ, մէկ էլ լսեց մէջ աղջիկը «այսն, այսն» է կանչում և փեշից ձգձգում. կարծես քնից զարթնեց, իւր որդուն տեսնելով մօտը՝ սթափւեց, ձեռքը դէպի մարմինը տարաւ վախվիսելով, բայց ոչինչ չը տեսաւ, գետինը շօշափեց իմացաւ՝ որ գետնի վերաց է, երկիւղ չը կայ. փախան կորան աչքից սատանաները, երեսին խաչ հանեց «Յիսուս Քրիստոս ասելով, մի քիչ ջուր խմեց, սրտի թրթոցը կտրեց, քրտինքը չորացաւ, յետոյ հարցրաւ աղջկան.»

— Ինչո՞ւ ես վերկացել։

— Քնած տեղու յանկարծ մէկը վրաս ընկաւ՝
զարթնեցի:

— Աղջի՛, ո՞վ պիտի ընկնի վրադ, վի՛, քոռա-
նամ, խեղճ եթիմիս զլիսին էլ են թափւել էդ
ծամըկտուրները, իմ մեղքիս համար է իմ, գու-
ի՛նչ մեղ ունիս, ա' անմեղ գառը. բա՛ էլ սրանից
յետոյ այս տանը չի ապրւիլ, քաջքերով լցւել են.
խեղճ երեխիս էլ են ճարել. մի՛ քնիր, կա՛ց, վա՛ց,
իմ եթիմ բալայ:

Աղջիկը ոչինչ չը հասկացաւ մօր ասածներից,
նա քնաթաթախ աշքերը ձմռոտում էր. իւր վերայ
ընկնողը մայրն է եղել, երբ սատանաները չարչա-
րում էին:

Թագուհին համոզւեցաւ, որ սատանաներով
լցւած է իւր տունը մեղքի պատճառով. «Ես ինձ
սպանեմ, մսածում էր նա, ազատւեմ թէ երեխա-
ներիս լաց ու կոծից և թէ սատանաների ձեռքից,
բայց միւս աշխարհում սատանաները ինձ աւելի կը
չարչարեն, կը տանեն դժոխքը, կ'այրեն կը փթոթեն,
և հուր յաւիտենական դժոխքի բաժին կը դաւնամ.
չէ՛, աւելի լաւ է մեղքերս քաւեմ, ողորմութիւն
ուզեմ, երեխաներիս պահեմ, պաս ու ծոմ կենամ;
մեր սուրբի տակը գնամ, մեղքերս թողնեմ, պրծնեմ՝
յետոյ ինչ լինում է լինի»:

Այսպէս մտածելով վեր կացաւ տեղից. նա
զիտէր որ երբ իսաչահանում են սատանաները չքա-
նում են. կանգնեց դէպի աղօթարանը, աղջկան էլ

կանգնեցրեց, խաչ հանեց, նրան էլ անել տւաւ և
այդպէս թեթևացած անկողին մտան:

ԻԲ.

Թաղցր առաւօտը բոլորեցունց տան դռները
բաց անել տւաւ: Դռները բացւելիս արեի կարմիր
լոյսը ներս թափանցեց և մեծի թէ փոքրի, տղա-
մարդի թէ կինարմառի աչքերը խտղտալով ներսերը
գործունէութեան աշխոյժ պատրոյկը վատեց և շտա-
պով նոր գործն հրաւիրեց: Թագուհու գուռը ևս
բացւեցաւ, բայց շատ ծանր, չուզենալով. Թագուհին
էր գուռ բաց անողը. նա մէկ ուզեց բանալ դուրս
դալ և իրեւ մուրացկան յայտարարւել ողջ գիւղա-
ցիներին. մէկ էլ յետ քաշւեց, չուզեց բանալ, կար-
ծում էր բոլորեքեանք էլ գիտեն, որ այնուհետեւ
ինքը պարկը շալակին ողորմութիւն պիտի հաւաքի.
նա պինդ բռնած դրան փակը, լաց եղաւ, անիծեց
իւր ծնած օրը, աև արաւ Ստեփանի հետ պակ-
ւիլը և յետ կանգնելով ասաց. «Ինչ էլ որ լինի
ողորմութիւն չեմ հաւաքի. ի՛նչ կ'ասեն գիւղի մի-
ջումը, լաւ չէ հէնց այս ժամին տափը մտնեմ պրծ-
նեմ. բայց երբ անգիտակցաբար յետ նացեց, և որդ-
կերանց նացեց, որոնք դեռ ևս անուշ քնած էին և
ով զիտէ անուշ անուշ երազներ էին տեսնում թէ
ինչպէս ցամաք հաց պիտի ուտեն որ քնատեղից
վերկենան, զլիսին սառը ջուր մաղւեց, վիզը ծուեց,

թոյլ ձեւքը յետ քաշեց և դուռը բացւեցաւ կամացուկ:

Պայծառ առաւօտ էր. արեւ իւր կենսատու ճառագայթները անխնայ սփռել, տարածել էր ամենուրեք. բոլորեքան ով դուրս էր գալիս տնից առոյդ, շտապ քայլերով, զլուխները տնկած, աչքերը մեծ մեծ բացած, ձեռները յետ ու առաջ տանելով իրանց գործին էին կենում, իսկ Թագուհին մուժ տեսաւ այդ լուսաւոր և գեղեցիկ առաւօտը. զլուխը կրծքին խոնարհած, կոները բոլորովին թուլացած, աչքերը, կարծես, փառով անցած կանգնեց սրահումը, բայց ոտերը չը դիմացան, նստեց փարոսի վերայ և այդպէս նստած մնաց. գուցէ այդպէս անվերջ նստած մնար, եթէ երեխաները մէկ մէկու յեակեից չը գալին «Հաց, հաց» անելով մօր փեշեց բռնէին:

«Մի կտոր հաց, խոր հոգոց քաշելով քթի տակ ասաց Թագուհին, մի կտոր հաց. է՛հ, կար ժամանակ, որ ես էի բաժանում այդ կտոր հացը սրան նրան, հիմա ես պիտի ձեռք մեկնեմ և ո՞ւմ, — նրանց, որոնք լայազ էլ չեն անում թէ խօսեն հետո, է՛ ճարս ինչ, մի սաղ օրից աւելի է խեղճերին խարում եմ, երեւի սա է իմ բազդը, ճակտիս գիրը, գնամ պարկս շալակեմ գիւղն ընկնեմ, ջուրը ընխողը անձրեւից չի վախենալու:

Այսպէս մի ձեռքում բռնեց պարկը, իսկ միւսով փոքրիկ երեխային խոտեց և ճանապարհ ընկաւ: Նա ճիշդ է գնում էր, բայց վա՛յ այն գնալուն, ան-

դադար դէս ու դէն էր դառնում, այս ու այն կրղմը նայում, տեսնի վրան նայող, ծիծաղող չը կա՞յ: Մուրացկանութեան եղանակը դեռ ևս չը գիտէր, անցաւ բաւականին տեղ, բայց ոչ մի տան դրան առաջ չը կանգնեց, հաց չ'ուզեց: Իրանց թաղից անց կենալով բոլորովին ուրիշ թաղ, առաջի անգամը հանդիպեց Սաքանին. Սաքանը աչքերը գետնին զցած ճանապարհը փոխեց քթի տակ ասելով. «Ողորմութիւն է հաւաքում. հա՛, հա՛, հա՛, տեսնեմ ողորմութիւնով ինչպէս ես ապրում և ո՛վ է քեզ ողորմութիւն տւողը, կը կակղես, կը գաս, կը գաս, ձեռքից չես փախչիլ. Ստեփանին էլ չես տեսնիլ. լուրը հիմա որտեղ որ է գնաց, ականջը ընկաւ, որքան ուզում ես գիր գրի, գրիդ նայողը ո՛վ է. դեռ դա ոչինչ, քթածակիրովդ պիտի թափեմ, զու մի քիշ էլ սպասիր: անպայման ան վայրուած.

— Սաքանն է, ա՛ տափը մտնեած ասաց Թագուհին ցնցւած, ամբողջապէս դողդողալով, այդ օձի ճուտը չէր Ստեփանին ինձնից հանողը, ով է իմանում ինչեր է գրել. ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր, մուրացկանութիւն եմ անում պարկը շալակիս, երեխայիս պահեմ, մեծացնեմ, որ մօր աջըղը հանի, որ քեզ պէս քոսոտ աղւեմները մարդու վերաց չը ծիծաղեն. Աստուած տեսնում է բոլորը, քո վերջն էլ կը տեսնեմք:

Թագուհին շարունակեց ճանապարհը: «Ուր եմ գնում, մտնեմ այս բակը, երեխաներիս աչքը հիմա

ջուր կտրեցա, ասելով մտաւ, մնաց չորացած կանգնած բակի մէջ տեղը. մարդ չը կար դուրսը, տեսնող չը կար, որ շուտով աղքատի բաժինը տային, ճանապարհ գցէին, ամօթից գետինն էր ուզում մտնել, պրծնել: «Յետ դառնամ, մարդ չը կայ, ո՞վ է կանգնողը, խօ ներս չը պիտի մտնեմ, ասելով ուզում էր յետ յետ գնալ, որ մի երեխայ դէպի իրան վազեց հարցնելով.

— Ի՞նչ ես ուզում, բաջի:

— Հաց եմ ուզում, բալայ, մի կտոր հաց, ձեռքով չափը ցոյց տալով առանց ամաչելու ասաց Թագուհին:

— Այս'ն, այս'ն, հաց ուզող է եկել, ասելով տղան տուն վազեց:

Մայրը դուրս եկաւ, բայց Թագուհուն տեսնելով՝ թիւ, առաւօտ առաւօտ ում երես տեսանք, շուտով անիծելով, հայշոյելով ներս մտաւ. «Ճամլդ կտրեմ, մհանին նայի՛ր, մհանի՛ն, հիմա էլ տես ինչ օյինբազութիւն է անում, ուզում է ասել թէ չոր ծառը արիւն էք քառմ, տուտ է, տեսնում էք ողորմութիւն եմ հաւաքում. ինչ ես հայը տանում մուռտառին տալիս, վե՛ր դիր, բարկացաւ երեխայի վերայ:

— Այս'ն, այս'ն, լաց էր լինում, երեխան էլ էր լաց լինում, սոված է երեսում. ասելով հացը ձեռքին դէպի Թագուհին վազեց:

Թագուհին դուրս գնաց, փոքրիկ տղան էլ յե-

տեից. երկար ու բարակ նայում էր նորա յետեից զարմացած թէ ինչո՞ւ մայրը աղքատի վերայ բարկացաւ, չուզեց որ հաց տայ:

Թագուհին մտաւ մի երկրորդ բակ. ոչ ոք դուրս չեկաւ տեսնելով ովէ հաց ուզողը, էլ անէծք, հայշոյանք չը մնաց գլխին թափեցին, նա էլ կոյր ու փոշման յետ յետ գնաց:

Մտաւ մի ուրիշ բակ և յանկարծ երեսն ի վեր ելան մի քանի կանայք, որ քիթ քիթ տւած խօսում էին. դրանցից մէկը, որ լաւ գիտէր Սաքանի շինծու պատմութիւնը, բերանը ճղածի նման ձեռքերով, աչք ու ունքով, հարայ հրոցով յարձակւեց Թագուհու վերայ և կարկտի պէս վրայ թափեց. «Ալ լաչա՛ռ, անզգա՛մ, գիշերները ջահիլ ջհուլների հետ ես նստում, վեր կենում, ցերեկներն էլ աղքատի շորերում, պարկը շալակիդ դռնէ դուռը ընկնում, ողորմութիւն հաւաքում, որ ցոյց տաս թէ քեզանում մեղ չը կայ. ասենք ուզում ես զորանով մեղ խարել, բա վերքերով պատած երեսդ ինչ է ասում. ա՛ կնանիք, նայեցէք սրա երեխին, տուտ եմ ասո՞ւմ. ինչ է ձեր թաղեցուց էլ քուն ու դադար չես տալիս գիշերները, գէ կորի՛ր այս տեղից թէ չէ այս թուրնըխառնին, տեսնում ես, վրադ կը կոտրատեմ»:

Մնացածներն էլ նորա օրինակին հետեւեցին, էլ հայշոյանք, անէծք չը մնաց, որ նորա գլխին չը թափէին:

Թագուհին սկզբում մնաց սառած, կանգնած,

յետոյ դողաց սրսռաց, սպրանեց և կանաչք կարծում էին ուշագնաց պիտի լինի, վեր ընկնի, բայց յանկարծ ծիծաղեց, քռքռաց և մեղաւոր եմ ես, մեղաւոր եմ ես, ասելով ձեռքից դէն զցեց երեխային և շորերը պատռատելով, գլուխը քանդելով դուրս վազեց: Թագուհին գծւեց. նա վազում էր բղաւելով, հարաց տալով և ամեղաւոր եմ, մեղաւոր եմ կանչելով. նա այնպէս էր փախչում, կարծես մէկը նրան հետևելիս լինէր: Ձե՞՞ բաց ո՞ն ի՞.

Թագուհու երեխան մնաց այնտեղ ընկած, սկզբառում ոչ ոք չէր ուզում վերցնել նրան, հարամ համարելով. բայց յետոյ մի պառաւ երեխայի լացը չը կարողանալով տանել վերցրաւ, իւր տունը տարաւ:

Տանուտէրը Թագուհու յետևեկց մարդ գցել տւաւ, բռնեց և մի տան մէջ կողպեց, գզրին հրամաշելով ճիպոտներ պատրաստել: Երիկնաղիմին տանուտէրը մի քանի մարդկանցով դուռը բաց անել տւաւ. Թագուհուն մի անկիւնում արնաթաթախ կուչ եկած գտան. սաղ տեղ չէր մնացել, այնքան էր դէն վազել, գլուխը պատերին կոցրել: Այդտեղից ուժով դուրս բերին. տանուտէրը սկսեց հայհոյել, թքել երեխին և ասել. «թո՛ղ, ասում եմ, լի՛րբ, անդգամ, անառակութիւնդ, թէ չէ ցաքում դնել կը տամ կ'այրեմ. ո՞ւմ ես ուզում խարել, սուտ աղքատ ես ձեւանում, սուտ գծւում ես, այդ բոլորը թողիր թէ չէ ճիպոտները պատրաստ է. թողնում ես թէ չէ, սսա. հա՛, թէ չէ՛». և տեսնելով որ Թագուհին

միայն ծիծաղում և վայրենական ձայներ է հանում, հրամացեց ծեծել:

Բղաւում էր Թագուհին, վեր վար էր թուչոտում, հարաց էր տալիս, բայց տանուտէրը ծեծը չէր մեղմացնում, այլ ասում էր. «Ամենայն օր կը ծեծւես, եթէ լաշառութիւնդ չը թողնեա:

Տան չորս կողմն էին հաւաքւած գիւղացիները. Թագուհու ձայնը նրանց ականջը ընկնելով ուլսա՛յ, ուլսա՛յ էին ասում, ձեռքները կրծքերը քսելով. միայն երեխաների վերաց էր, որ վատ տպաւորութիւն էր թողնում, նրանք զարգանդում, փշաքաղւում էին Թագուհու ձայնը լսելով. «Քաջկոտ է ընկեր», ասում էին և փախչում:

— Զէ, գծւած է, ի զուր ենք ծեծում, մեղք է, վերջապէս ասաց տանուտէրը և արգելեց ծեծը. թողէք այստեղ մնայ, հացից ջրից մօտը դրէք, դուռը փակեցէք, գնացէք:

Այդպէս էլ արին. Թագուհուն թողեցին տան մէջ փակւած: Երեխաներից ամեն մէկին տանուտէրի հրամանով մի տուն տւին. նրանց վերաց նոյնպէս վերքեր էր երևում:

Մի ամբողջ շաբաթ Թագուհուն փակած պահեցին օրը մի անգամ հաց ու ջուր տալով և վերջը գուրս բերին՝ տեսնելով որ մի քիչ մեղմացել է: Նա էլ չէր վազում, շորերը չէր պատռատում. փողցները ընկած ման էր գալիս, հաց էր ուզում, սուացած հացը մի քանի անգամ կծում, ուտում էր և մնա-

ցածը դէն գցում, բայց երբ երեխանները յետեւը կտրած հայհոյում, քարոտում էին «քաջքոտ», քաջքոտ» կանչելով, այն ժամանակ հայհոյում, շորերը պատրստում, և հարաց տալով փախչում էր բերանը փըրփուած:

Թագուհուն վարժւեցան զիւղացիները. Հաց
էին տալիս պահում, որովհետև բանեցնում էին,
համառը ջուր էր կրել տալիս, թէև միւնոյն ժա-
մանակ և զզւում էին նորա վէրքերից:


ପ୍ରକାଶ.


Ստեփանը Բագու ապրում էր առանց իրան
հաշիւ տալու։ Առաջի տարին էլի մէկ մէկ ցնցւում,
դողում էր միշելով իւր անսառակ կեանքը, իսկ
այժմ սովորական բան էր զարձել նորա համար այդ
տեսակ կեանքը. թէև ախար նորա ձեռք ու ոտը
կուչ էր ածել, բայց ոչ մի ուշադրութիւն չէր զարձ-
նում նորա վերաց, ապրում էր ինչպէս մի կենդանի.
աշխատածը համարեա ձեռքից գնում էր, աշքին չէր
զալիս; Նա մի անգամ ապրանք ուղարկեց Սաքանին,
յետոց այդ էլ կորեց ամելով. Թնչո՞ւ եմ ուղարկում,
տանի դա էլ ուտացնի, դժւար թէ ուղարկածս էլ չէտ
ստանամ։ Իսկ երբ լսեց կնոջ զրութիւնը և նորա
նորա խորհուրդները՝ գնալ և երեխաներին տէրու-
թիւն անել, նա ճանապարհ ընկաւ գէսի Անդրկաս-
պեան երկիրը. այդ այն ժամանակն էր, երբ այդ


Նոր երկրի համար նոյն հռչակն էր տարածւել,
ինչ որ Բագուայ համար էր մի ժամանակ:

Նա գնաց հայ գիւղացիների երկրորդ ռաւետեաց
երկիրը ոչ թէ նորա համար, որ հարստութիւն ձեռք
բերի, վերադառնաց տուն, այլ որ այնտեղ, ինչպէս
լուր էր տարածւել, աշխատանքի մեծ գնահատում
և յաւ ապրուսն կար:

Ստեփանը ծովի միւս երեսը անցնելով, բոլորովին մոռացաւ իւր տուն ու տեղը, ամուսնուն ու որդիկերանց և չը քաշեց երկու տարի մեռաւ սարսափելի դրութեան մէջ:







58

2015

13600

